

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ
ԵԿԵՂԵՑԻ**

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

**ԱՊԱՇԽԱՐՈՂՆԵՐԻ
ԱՐՁԱԿՄԱՆ ԿԱՐԳ**

Վեցերորդ հրատարակություն

Երեւան
Հեղինակային հրաժարակութիւն
2021

ՀՏԴ 23/28

ԳՄԴ 86.37

Ա 671

Կազմ.՝ Է. Մ. Մինասյան
Խմբ.՝ Մ. Արաբյան

Ա 671 Ապաշխարողների արձակման կարգ/
կազմ.՝ Է. Մ. Մինասյան.- Երդ հրատ.-
Եր.: Հեղինակային հրատարակու-
թյուն, 2021.- 192 էջ:

Գիրքը նախատեսված է որպես աղոթագիրք
հավատացյալների եւ ընթերցող լայն շրջանակ-
ների համար:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-4-851-0

© Է. Մ. Մինասյան, 2021թ.

**Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ**

*Օրինյալ է հիշատակը մեր սուրբ Հայութի,
որոնք ժառանգություն քողեցին այս
Կանոնը՝ ապաշխարողներիս: Նրանց
բարեխոսությամբ Տեր Աստված ողորմի ի
Քրիստոս ննջած եղբորս՝ Սելս-Սեսրոպ
Մինասյանին և այս Կանոնով առաջնորդվող
ապաշխարողների ննջեցյալներին, ամեն.
Աղերսում ենք՝ Տեր ողորմյա.*

ԱՌԱՋԱԲԱՆ

«Քաղում զանգակի են մեղատրսաց, բայց ոյք բասան
ի Տեր՝ ոպրունացին Տեսան շուրջ եղիցի պնդօք»:

/Արև. ՀՎ 31/

Տեր Դիսուս Քրիստոսի գնօրինական խորհուրդների իմաստային լրումը հանդիսացող շնորհասփյուռ և հուսաբեր Նարության իրողությունն է, որ պանծացվում է Զաքրի գոնին:

Վյո գոնին նախորդող ապաշխարության օրերի կարևորության մասին է խոսում սույն գրքույկը՝ առանձնակի ուշադրություն գրավելով:

Մեծ պահքը մեր կյանքում հերթական մի առիթ է՝ ժամանակի այս հանգրվանում մի պահ մեր ներքին ծայնին անսալու և ինքնաքննումի ճանապարհով վերջապես գրնելու մեր գեղն ու դերը մեզ բաժին ընկած առաքելության դժվարին ուղու վրա:

Մեղքի և սայթաքումի շրկումը գեղի է ունենում ինքնաճանաչումով՝ ապաշխարությամբ, այսինքն՝ գործով, խոսքով կամ մրգածումով հագուցմամբ:

Ապաշխարությունը մեր Եկեղեցու սրբազն յոթ խորհուրդներից մեկն է, որ հասպարզել է մեր

Տիրոջ՝ Դիսուս Քրիստոսի կողմից՝ իբրեւ մեզ փրկության առաջնորդելու նախապայման:

Մարդ արարածը, ասդվածանման հոգու անմահություն ունենալով հանդերձ, մեղսագործ բնություն ունի:

Չնայած մկրդության ժամանակ ներվում են նրա՝ մինչ այդ գործած բոլոր մեղքերը (ներառյալ ադամականը), սակայն մարդը շարունակաբար սայթաքում է, սխալվում, որի համար պեսք է մփովին քննի, գիրակցի իր մեղքերը, զղա դրանք գործած լինելու համար, խոսդուանի, ներում սպանա քահանայից և կադարի հոգևորականի խորհուրդները սահմանված կարգով:

Քրիստոսի լուսապայծառ Նարության վրոնից առաջ ընկած պահեցողության շրջանը ապաշխարության կոչով մեզ հրավիրում է՝ անդրադառնալու մեր անձին և շրկելու առկա բոլոր բացասական երևույթները, որոնք մեզ փանում են դեպի անկում, դեպի մեղք:

Եկեղեցու հայրերն առանձնացրել են այսպիսի մի շրջան, որպեսզի մենք խոկումով, աղոթքով և, ինչու չէ, սահմանված ապաշխարողական բազում կերպերով և միջոցներով շրկենք մեր անձը:

Մեծ պահոց ընթացքում Հայաստանյայց մեր բոլոր Եկեղեցիների վարագույրները փակվում են՝ խորհրդանշելով մեր մարդկային գլուխությունների պատճառով Քրիստոնությունը Ս. Դադության մեջ չի հայրելը. կարծեք այս ամբողջ ընթացքում մեր հայրերը պատրաստում են մեզ Ավագ Շինօշաբթի օրվա Վերջին ընթրիքին Տիրոջ հետ:

Փաստորեն ապաշխարության այս օրերն իմաստավորվում են գերունահաստափ Ս. Դադության խորհուրդի մեջ, որ ավանդեց մեր Փրկիչը Իր աշակերպների վերջին ընթրիքի ժամանակ:

Այս գրքույկը ներկայացնում է «Կարգ ապաշխարողացը», որն ապաշխարողներին թողություն գրալու մի յուրահագուկ ծիսակարգ Է՝ բարկացած ապաշխարության սաղմոսներից, սուրբգրային ընթերցումներից, մասնավոր շարականներից (ողոգոմյան եղանակով), Շովնան մարգարեի, Մանասե թագավորի և գիեղերական Եկեղեցու այուներ ս. Բարսեղ Կեսարացի և ս. Շովիան Ոսկեբերան հայրապետների՝ զղման ու արձակման աղոթքներից, որոնք գերունի-գնորդինական խորհուրդները և սրանց խոր իմաստները հավաքացյալին ավելի մարգելի դարձնելու նպատակով ներկայացվում են թարգմանաբար:

Ապաշխարողները, այս հագուկ կարգին մասնակցելով, արձակում կափանան, որից հետո՝ Ս. Պափարազի ժամանակ, Ս. Հաղորդության կարժանանան՝ ամուր հավաքով ու սիրով կապվելով մեր Տիրոջ և միակ Աստծու՝ Դիտուս Քրիստոսի հետ:

Այսպես հարկ ենք համարել զեփեղել նաև Դավիթ մարգարեի՝ ապաշխարության մի քանի սաղմոսները՝ դուրս թռղնելով այն սաղմոսները որոնք առկա են կարգի մեջ: Գլուխների թվերն են.

Ե(5); Զ(6); ԺԲ(12); ԺԶ(16); ԻՎ(21); ԼԴ(34);
ԼԵ(35); ԾԳ(53); ԾԶ(56); ԾԸ(58); Կ(60); ԿԲ(62);
ԿԳ(63); ԿԸ(68); ԿԹ(69); Շ(70); ԶԵ(85); ԶԷ(87);
ՃԱ(101); ՃԸ(108); ՃԺԸ(118); ՃԻԸ(128);
ՃԻԹ(129); ՃԸԹ(139); ՃԽԲ(142):

Մեջբերել ենք նաև ս. Գրիգոր Նարեկացու «Մագիստր ողբերգութեան» աղոթագործի ապաշխարության գլուխները, որոնք ներկայացնում ենք սպոռիւ.

Դ(4); Ե(5); Է(7); Ը(8); ԺԵ(15); Ի(20); ԻԲ(22);
ԻԴ(24); ԻԶ(26); ԻԷ(27); ԻԸ(28); Լ(30); ԼԲ(32);
ԼԳ(33); ԼԶ(36); ԼԷ(37); Խ(40); ԽԲ(42); ԽԷ(47);
ԽԹ(49); Ծ(50); ԾԲ(52); ԾԴ(54); ԾԷ(57); ԾԸ(58);
ԿԶ(66); ԿԷ(67); ՇՎ(71); ՇԶ(76); ՇԷ(77); ՇԸ(78);
Ղ(90):

Ասրված թող միշպ առաջնորդ լինի ամենքիս, մանավանդ՝ ապաշխարություն համարի հրագարակության պատրաստողների այս աշխադրանքը:

Տիրոջ չարչարանքի, խաչելության, թաղման և հրաշափառ Նարության շնորհները մեր ազգի զավակներին թող առաջնորդ լինեն, և Ռիսուս Փրկիչ Իր կենաց իմաստության լույսով ողողի ամենքիս հոգիներն այժմ և հավիպյանս. ամեն:

S. Վարդառ աբեղա Նավասարդյան

(իսկ) ի յերրորդում ժամու՝ ժողովեսցին ի դուռն
եկեղեցւոյն վասն արձակելոյ զապաշխարողսն. թէ իցէ
եւ թէ ոչ՝ զկարգն կատարել պարտ է:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի
անուն Քո.

Եկեսցէ արքայութիւն Քո.

Եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի:

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր.

Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք
թողումք մերոց պարտապանաց.

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ
փրկեա՛ զմեզ ի չարէն.

Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ
փառք յաւիտեանս. ամէն:

Օրհնեալ Հոգիո Սուրբ Աստուած ճշմարիտ.
ամէն:

Իսկ երրորդ ժամին (Ժ. 9^ր) թող հավաքվեն եկեղեցու դրան մոտ՝ ապաշխարողներին արձակում տալու համար. այդպիսիք լինեն, թե ոչ, կարգը կատարելը պարտադիր է:

Օրհնյալ Տեր մեր Հիսուս Քրիստոս. ամեն:

Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը.

Քո արքայությունը թող գա.

Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է:

Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր.
Եվ թող մեզ մեր պարտքերը, ինչպես և մենք
ենք թողնում մեր պարտապաններին.

Եվ մի՛ տար մեզ փորձության, այլ փրկի՛ր
մեզ չարից, քանզի Քոնն է արքայությունը և
զորությունը և փառքը հավիտյանս. ամեն:

Օրհնյալ Հոգիու Սուրբ՝ Աստված ճշմարիտ.
ամեն:

Սաղմոս Ծ

Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողոր-
մութեան Քում, ըստ բազում գթութեան Քում
քաւեա զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, եւ ի
մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, եւ
մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ, Տէ՛ր, եւ չար առաջի Քո
արարի:

Որպէս արդար եղիցիս ի բանս Քո, եւ յաղթող՝
ի դատել Քեզ:

Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս
մայր իմ:

Դու, Տէ՛ր, զճշմարտութիւն սիրեցեր, զան-
յայտս եւ զծածկեալս իմաստութեամբ Քով
յայտնեցեր ինձ:

Յօղեա՛ յիս մշտկաւ՝ եւ սուրբ եղէց. լուա՛, եւ
քան զծիւն սպիտակ եղէց:

Հսելի արա ինձ, Տէ՛ր, զցնծութիւն եւ
զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ
տառապեալք:

Սաղմոս 50

Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, ըստ Քո մեծ ողորմության, ըստ Քո առատ գթության քավի՛ր անօրենություններն իմ:

Առավել լվա ինձ ի՛մ անօրենություններից և մաքրի՛ր ինձ ի՛մ մեղքերից:

Իմ անօրենությունները ես ինքս գիտեմ, և իմ մեղքերն իմ առջեւ են ամեն ժամ:

Քո դեմ միայն մեղանչեցի, Տե՛ր, և Քո առջեւ չարիք գործեցի:

Այնպես որ արդար կլինես Քո խոսքերում և հաղթող՝ դատելիս:

Անօրենությամբ հղացավ և մեղքի մեջ ծնեց ինձ մայրն իմ:

Դու, Տե՛ր, ճշմարտությունը սիրեցիր, անհայտներն ու ծածկվածները Քո իմաստությամբ հայտնեցիր ինձ:

Ցողի՛ր ինձ մշտիկով՝ մաքուր կլինեմ. լվա՛, և ձյունից էլ սպիտակ կլինեմ:

Լսել տուր ինձ, Տե՛ր, ցնծություն և ուրախություն, և կցնծան ոսկորներն իմ տառապած:

Դարձո՛ զերեսս Քո ի մեղաց իմոց եւ
զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:

Սիրտ սուրբ Հաստատեա յիս, Աստուա՛ծ, եւ
Հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս, Տէ՛ր, յերեսաց Քոց, եւ
զՀոգի Քո Սուրբ մի՛ Հաներ յինէն:

Տո՛ւր ինձ զցնծութիւն փրկութեան Քո, եւ
Հոգւով պետութեան Քոյ Հաստատեա զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս Քո, եւ
ամպարիշտք առ Քեզ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ, Աստուա՛ծ, Աստուած
փրկութեան իմոյ եւ ցնծասցէ լեզու իմ յար-
դարութեան Քում:

Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ
երգեսցէ զօրհնութիւնս Քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս՝ մատու-
ցանէաք, բայց Դու ընդ ողջակէզս իսկ ո՛չ
հաճեցար:

Պատարագ Աստուծոյ՝ Հոգի խոնարհ. զսիրտ
սուրբ եւ զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ ար-
համարհէ:

Բարի արա, Տէ՛ր, կամօք Քովք Սիօնի, եւ
շինեսցին պարիսպքն երուսաղեմի:

Դարձրո՛ւ երեսդ իմ մեղքերից և քավիր իմ
բոլոր անօրենությունները:

Սուրբ սիրտ հաստատիր իմ մեջ, Աստվա՛ծ, և
ուղիղ հոգի նորոգիր իմ ներսում:

Մի՛ զրկիր ինձ, Տե՛ր, Քո երեսից, և մի՛ հանիր
ինձնից Քո Սուրբ Հոգին:

Տուր ինձ Քո փրկության ցնծությունը և Քո
տիրական Հոգով զորացրու ինձ:

Անօրեններին կսովորեցնեմ Քո ճանապարհ-
ները, և ամբարիշտները առ Քեզ կդառնան:

Փրկի՛ր ինձ արյունից, Աստվա՛ծ, Աստված իմ
փրկության և կցնծա իմ լեզուն Քո արդա-
րությամբ:

Տե՛ր, եթե իմ շուրթերը բանաս, իմ բերանը
կերգի Քո օրհնությունները:

Թե կամենայիր զոհեր՝ կմատուցեինք, բայց
ողջակեզներն իսկ Քեզ հաճելի չեղա՛ն:

Զոհն Աստծուն խոնարհ հոգին է. սուրբ
սիրտն ու խոնարհ հոգին՝ Աստված չի արհա-
մարհում:

Բարի արա, Տե՛ր, Քո կամքով Սիոնին, և թող
շինվեն Երուսաղեմի պարիսպները:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցենի սեղան Քո զուարակս:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երգ

Օրհնեմք զՔեզ, Հա՛յր անսկիզբն, էիցս էակի յանգոյից. բարձեր ձեռօք նիւթ ի հողոյ եւ ստեղծեր զմարդ ի պատկեր Քո. գլուխն ոտից խոնարհեցաւ, զի զպատուիրան Քո մոռացաւ. դարձեալ ասեմք ըստ անառակին, թէ՝ «Հա՛յր, մեղա՛յ Քեզ ի յերկինս»:

Երկնաւորացն անքննելի եղեր մարդկան տեսանելի. զգեցար պատկեր հողեղինի պատկերդ Հօր անփոխելի. ելեր յերրորդ ժամ ի խաչին՝ վասն Աղամայ նախաստեղծին. ընդ աւազակին Քում խաչակցին արժանացո զմեզ դրախտին:

Թագաւո՛ր թագաւորաց՝ առատաբուղիս Հոգի՛ շնորհաց. ժողովելոցն ի վերնատանն առաքելոցն երկոտասան, ի հրոյ լեզուս երեւեցար, յոգիս նոցա վերանստար. լո՛ւր յանուն Քո ժողովելոցս, է՛ջ եւ առ մեզ յերրորդ ժամուս:

Այնժամ կհաճես արդարության պատարագները, երբ զվարակները որպես ուխտի պատարագներ կմատուցվեն Քո սեղանին:

Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

Երգ

Օրհնում ենք Քեզ, Հա՛յր անսկիզբ, անգոյից էությունների էություն. ձեռքդ առար նյութը հողի՝ Քո պատկերով մարդ ստեղծեցիր. գլուխը ոտքից խոնարհեցավ, զի պատվիրանը Քո մոռացավ: Դարձյալ ասում ենք անառակի հետ՝ «Հա՛յր, մեղայ Քեզ ի յերկինս»:

Երկնավորներին անքննելիդ եղար մարդկանց տեսանելի, հագար պատկեր հողեղենի՝ պատկերդ Հոր անշփոթելի, երրորդ ժամին ելար խաչին հանուն Աղամ նախաստեղծին. Քո խաչակցի հետ միասին արժանացրու մեզ դրախտին:

Թագավո՛ր թագավորաց՝ առատաբուխ Հոգի՝ շնորհաց. տասներկու առաջյաներին ժողոված վերնատանը՝ հրե լեզուներով երևացիր և նրանց հոգիներում բազմեցիր. լսի՛ր հանուն Քո ժողով-վածներիս, իջի՛ր առ մեզ երրորդ ժամին:

Մաղթանք

Յամենայն ժամու աղաչանք իմ այս են. ի
մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս, Տէ՛ր, եւ յօտարէն
պահեա՛ գծառայս Քո, մարդասէր Տէր:

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.
ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Եւ ապա ասեն սաղմոս ի թիւ գուրղայս Զ.

Առաջին գուրղայ

Սահմոս Ի՞Դ

Առ Քեզ, Տէ՛ր, համբարձի զանձն իմ.
Աստուա՛ծ իմ, ի Քեզ յուսացայ, մի՛ ամաչեցից,
եւ մի՛ ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ:
Ամենեքեան որք համբերեն Քեզ, մի՛ ամա-
չեսցեն, այլ ամաչեսցեն անօրէնք յունայ-
նութեան իւրեանց:

Մաղթանք

Ամենայն ժամ իմ աղաչանքներն այս են.
Տե՛ր, մաքրիր ինձ իմ մեղքերից, Քո ծառային
պահի՛ր թշնամուց, մարդասեր Տեր:

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը.
ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր մեզ:

Մաղթանք

Օրհնություն և փա՛ռք Հորը և Որդուն և
Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամեն:

Այսա ասում են վեց գորդա սաղմու.

Առաջին գորդա

Սաղմու 24

Դեպի Քեզ, Տե՛ր, բարձրացրի հոգիս.
Աստվա՛ծ իմ, Քեզ վրա դրի հույսն իմ, թող
ամոթով չմնամ, և թշնամիներս չծիծաղեն ինձ
վրա:

Բոլոր նրանք, ովքեր հույսով սպասում են
Քեզ, ամոթով պիտի չմնան, այլ ամոթով պիտի
մնան անօրեններն իրենց ունայնության մեջ:

Զճանապարհս Քո, Տէ՛ր, ցոյց ինձ, եւ զշաւիղս
Քո ուսո ինձ:

Առաջնորդեա՛ ինձ ի ճշմարտութեան Քում
եւ ուսո զիս, զի Դու ես Աստուա՛ծ փրկիչ իմ, եւ
ես Քեզ համբերի զօրհանապազ:

Յիշեա, Տէ՛ր, զգթութիւնս Քո եւ զողոր-
մութիւնս, որ ենն յաւիտենից:

Զմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան
իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա զիս, Տէ՛ր, ըստ
ողորմութեան Քում՝ վասն քաղցրութեան Քոյ,
զի քաղցր եւ ուղիղ ես, Տէ՛ր:

Վասն այսորիկ օրէնսգէտ առնես զմեղաւորս
ի ճանապարհի, առաջնորդես հեզոց ի դատաս-
տանի, եւ ուսուցանես հեզոց զճանապարհս Քո:

Ամենայն ճանապարհք Տեառն ողորմութեամբ
եւ ճշմարտութեամբ են այնոցիկ՝ ոյք խնդրեն
զուխտ եւ զվկայութիւն նորա:

Վասն անուան Քո, Տէ՛ր, քաւեա զմեղս իմ,
զի բազում եղեն:

Ո՞վ է մարդ, որ երկնչի ի Տեառնէ, օրէնսգէտ
առնէ զնա ի ճանապարհի յոր եւ հաճեցաւ:

Տե՛ր, ցույց տուր ինձ Քո ճանապարհները և
Քո շավիղները սովորեցրու ինձ:

Ինձ առաջնորդի՛ր Քո ճշմարտության մեջ և
ուսուցանի՛ր ինձ, քանզի Դո՛ւ ես փրկիչ
Աստվածն իմ, ու ես հանապազ Քեզ եմ սպասում:

Հիշիր, Տե՛ր, Քո գթություններն ու ողորմու-
թյունները, որոնք հավիտենական են:

Իմ մանկության և տհասության մեղքերը մի՛
հիշիր, այլ հիշիր ինձ, Տե՛ր, Քո ողորմությամբ՝
ըստ Քո բարության, քանզի Դու քաղցր և ուղիղ
ես, Տե՛ր:

Դրա համար Էլ մեղավորներին դնում ես
օրենքի գիտության ճանապարհի վրա: Հեղերին
առաջնորդում ես դատաստանի մեջ, հեղերին
սովորեցնում Քո ճանապարհները:

Տիրոջ բոլոր ուղիները ողորմություն ու
ճշմարտություն են նրանց համար, ովքեր պահում
են նրա ուխտն ու վկայությունը:

Հանուն Քո անվան, Տե՛ր, քավությո՛ւն տուր
իմ մեղքերին, քանզի շատացան դրանք:

Ո՞վ է այն մարդը, որ վախենում է Տիրոջից,
Տերը նրան սովորեցնելու է իր ընտրած ուղին:

Անձն նորա ի բարութեան հանգիցէ, եւ
զաւակ նորա ժառանգեսցէ զերկիր:

Զօրութիւն է Տէր երկիւղածաց իւրոց եւ
զկտակարանս իւր ուսուցանէ նոցա:

Աչք իմ յամենայն ժամ առ Տէր են, եւ Նա
հանէ յորոգայթէ զոտս իմ:

Նայեա առ իս եւ ողորմեա ինձ, զի միամօր եւ
աղքատ եմ ես:

Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ,
եւ ի վշտաց իմոց հան զիս:

Տես զխոնարհութիւն իմ եւ զվաստակ իմ, եւ
թող ինձ զամենայն զմեղս իմ:

Տես զթշնամիս իմ զի բազում եղեն, ատե-
լութիւն զոր ի նանիր ատեցին զիս:

Պահեա զանձն իմ եւ փրկեա զիս, եւ մի՛ յամօթ
եղէց զի յուսացայ ի Քեզ:

Ամբիծք եւ ուղիղք կցորդ եղեն ինձ, եւ ես
Քեզ համբերի: Փրկեա, Աստուա՛ծ, զիսրայէլ
յամենայն նեղութեանց նորա:

Սաղմոս ԻԵ

Դատ արա ինձ, Տէ՛ր, զի ես յամբծութեան
իմում գնացի. ի Տէր յուսացայ, զի մի եղէց
հիւանդ:

Նա բարության մեջ պիտի հանգչի, և նրա
սերունդը երկիրը պիտի ժառանգի:

Տերը զորացուցիչն է իր երկյուղածների և
իր ուխտը նրանց է սովորեցնում:

Աչքերն իմ մշտապես Տիրոջն են ուղղված, և
Նա՝ պիտի հանի ոտքերս թակարդից:

Նայիր ինձ և ողորմիր ինձ, քանզի միամորիկ
եմ ես և աղքատ:

Սրտիս նեղությունները խիստ շատացան,
ազատիր ինձ իմ վշտերից:

Տես իմ խոնարհությունն ու տառապանքը և
թողություն արա իմ բոլոր մեղքերին:

Տես՝ թշնամիներս որքան բազմացան և
անիրավ ատելությամբ ինձ ատեցին:

Պահպանի՛ր ինձ ու փրկի՛ր ինձ, և թող
ամոթով չմնամ, որ հույսս դրի Քեզ վրա:

Անբիծներն ու արդարներն ինձ կցորդ եղան,
և ես սպասեցի Քեզ: Փրկի՛ր, Աստված, Իսրայելն
իր բոլոր նեղություններից:

Սաղմոս 25

Դատ արա ինձ, Տե՛ր, զի անբծությամբ ես
ընթացա. Տիրոջը հուսացի, որ չլինեմ հիվանդ:

Փորձեա՛ զիս, Տէ՛ր, եւ քննեա զիս, փորձեա՛
զերիկամունս իմ եւ զսիրտ իմ:

Ողորմութիւն Քո, Տէ՛ր, առաջի աչաց իմոց,
եւ հաճոյ եղէց ճշմարտութեան Քում:

Ոչ նստայց ես յաթոռս նանրաց եւ ընդ
անօրէնս ես ոչ մտից:

Ատեցի ես զժողովս չարաց եւ ընդ ամպա-
րիշտս ես ոչ նստայց:

Լուացայց սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ
եղէց զսեղանով Քով, Տէ՛ր. լսել ինձ զձայն
օրհնութեան Քո, եւ պատմել զամենայն սքան-
չելիս Քո:

Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն տան Քո եւ
զտեղի յարկի փառաց Քոց:

Մի՛ կորուսաներ ընդ ամպարիշտս զանձն իմ,
եւ մի՛ ընդ արս արիւնահեղս զկեանս իմ, որոց
ձեռք իւրեանց յանօրէնութեան են, եւ աջ նոցա
լի է կաշառոք:

Ես յամբծութեան իմում գնացի, փրկեա զիս,
Տէ՛ր, եւ ողորմեա ինձ:

Ոտն իմ կացցէ յուղղութեան. յեկեղեցիս մեծս
օրհնեցից զՔեզ:

Փորձի՛ր ինձ, Տե՛ր, և քննիր ինձ, փորձի՛ր
երիկամներս ու սիրտս:

Ողորմությունդ, Տե՛ր, աչքիս առջև է, և
ճշմարտությունդ հաճելի է ինձ:

Ունայնամիտների ամոռին ես չեմ նստի և
անօրենների մոտ ես չեմ գնա:

Զարագործների ամբոխը ես ատեցի և ամբա-
րիշտների կողքին չեմ բազմի:

Սրբությամբ կլվանամ ձեռքերն իմ և սե-
ղանիդ շուրջը կլինեմ, Տե՛ր. թող լսեմ Քո
օրհնության ձայնը և պատմեմ Քո բոլոր հրա-
շալիքները:

Տե՛ր, սիրեցի Քո տան վայելչությունը և Քո
փառքի բնակութեան վայրը:

Մի՛ կործանիր ինձ ամբարիշտների հետ, և ոչ
էլ կյանքս՝ արյունահեղների հետ, որոնց ձեռքերն
անօրենության մեջ են, և աջը նրանց լի է
կաշառքով:

Ես անբասիր ընթացա, փրկի՛ր ինձ, Տե՛ր, և
ողորմի՛ր ինձ:

Ոտքն իմ ուղիղ ճանապարհների վրայ թող
լինի, մեծ հավաքներում Քեզ պիտի օրհնեմ:

Սաղմոս ԻԶ

Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց.

Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց:

Ի մերձենալ առ իս չարաց՝ ուտել զմարմին իմ, նեղիչք իմ եւ թշնամիք իմ՝ նոքա տկարացան եւ անկան:

Թէ պատրաստեսցի ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ, թէ յարիցէ ի վերայ իմ ճակատամարտ, սակայն եւ այսուիկ ի Քեզ, Տէ՛ր, յուսացայ:

Զմի խնդրեցի ի Տեառնէ եւ զսոյն աղաչեմ՝ ընակիլ ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց՝ տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն, եւ հրաման տալ ի տաճարի Նորա:

Ծածկեաց զիս ի խորանի իւրում յաւուր չարի, ընդ յարկաւ արար զիս ի ծածկոյթ խորանի իւրում:

Ի վիմէ բարձր արարեր զիս. եւ այժմ բարձր արա զգլուխ իմ ի վերայ թշնամեաց իմոց:

Շուրջ եղէց եւ մատուցից ի խորանի Նորա պատարագ օրհնութեան, օրհնեցից եւ սաղմոս ասացից Տեառն:

Սաղմոս 26

Տերն է իմ լույսը և կյանքը, ես ումի՞ց վախենամ.

Տերն է իմ կյանքի ապավենը, ես ումի՞ց դողամ:

Երբ չարերը՝ իմ նեղիչները և թշնամիները, մոտեցան մարմինս ուտելու, նրանք տկարացան ու ընկան:

Եթե պատերազմ պատրաստվի իմ դեմ, սիրտն իմ չի երկնչի, եթե ճակատամարտ բարձրանա ինձ վրա, սակայն, այսուհանդերձ, Քեզ կապավինեմ, Տե՛ր:

Մի բան խնդրեցի Տիրոջից և նույնն եմ աղաչում՝ կյանքիս բոլոր օրերը բնակվեմ Տիրոջ տան մեջ՝ տեսնելու Տիրոջ վայելչությունը և հրամայելու Նրա տաճարի մեջ:

Զար օրն իր խորանում ծածկեց ինձ, իր խորանի ծածկի տակ ինձ պատսպարեց:

Ժայռից բարձր պահեցիր ինձ, այժմ էլ գլուխն իմ բարձրացրու թշնամիներիս վրա:

Կը ջեմ և Նրա խորանում կմատուցեմ օրհնության պատարագ, կօրհնեմ և սաղմոս կասեմ Տիրոջը:

Հուր, Տէ՛ր, ձայնի իմում, զի կարդացի առ
Քեզ. ողորմեա ինձ եւ լուր ինձ, զի Քեզ ասաց
սիրտ իմ, եւ խնդրեցին երեսք իմ զերեսս Քո,
Տէ՛ր, խնդրեցին:

Մի՛ դարձուցաներ զերեսս Քո յինչն, եւ մի՛
խոտորիր բարկութեամբ ի ծառայէ Քումմէ:

Օքնական իմ լեր, Տէ՛ր, մի՛ անարգեր զիս եւ
մի՛ թողուր զիս, Աստուած փրկիչ իմ:

Հայր իմ եւ մայր իմ թողին զիս, եւ Տէ՛ր իմ
ընկալաւ զիս:

Օրէնսգէտ արա զիս, Տէ՛ր, ի ճանապարհի
Քում, եւ առաջնորդեա ինձ ի շաւիղս Քո ուղիղս:

Վասն թշնամեաց իմոց մի՛ մատներ զիս ի
ձեռս նեղչաց իմոց:

Յարեան ի վերայ իմ վկայք մեղաց եւ ստեցին
ինձ յանօրէնութեան իւրեանց:

Հաւատացի տեսանել զբարութիւն Տեառն
յերկրին կենդանեաց. համբե՛ր Տեառն եւ
քաջալերեա՛ց, զօրասցի սիրտ Քո, եւ համբե՛ր
Տեառն:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հսիր, Տե՛ր, իմ ձայնը, քանզի Քեզ կանչեցի.
ողորմիր ինձ և ականջ դիր, քանզի սիրտն իմ
Քեզ դիմեց, և հայացքն իմ, փնտրեց, փնտրեց
Քո երեսը, Տե՛ր:

Մի՛ դարձրու երեսդ ինձանից և բարկությամբ
մի՛ շրջվիր Քո ծառայից:

Իմ օգնականը եղիր, Տե՛ր, և մի՛ անարգիր
ինձ և մի՛ լքիր, Աստված փրկիչ իմ:

Իմ հայրը և մայրը թողեցին ինձ, բայց Տերն
ինձ ընդունեց:

Օրենսգետ արա ինձ, Տե՛ր, Քո ճանապարհին
և առաջնորդի՛ր ինձ Քո ուղիղ շավիղներով:

Մի՛ մատնիր ինձ նեղիչներիս ձեռքը՝ իմ
թշնամիների պատճառով:

Մեղքերի վկաներ ելան իմ դեմ և իրենց
անօրենությամբ ստախոսեցին ինձ:

Հավատացի, որ կտեսնեմ Տիրոջ բարությունը
ողջերի երկրում. սպասի՛ր Տիրոջը և քա-
ջալերվի՛ր, թող գորանա քո սիրտը, և սպասի՛ր
Տիրոջը:

Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ
և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Քարոզ

Եւս եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.
ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Երկրորդ գուրդայ

Սահմոս ԻԵ

Առ Քեզ, Տէ՛ր, կարդացի, Աստուա՛ծ իմ, մի՛
լուեր յինէն. մի՛ երբեք լոիցես յինէն, զի մի՛
նմանիցիմ այնոցիկ, ոյք իջանեն ի գուբ:

Լուր, Տէ՛ր, ձայնի խնդրուածաց իմոց յա-
ղաչել ինձ առ Քեզ, ի համբառնալ ձեռաց իմոց ի
տաճար սուրբ Քո:

Մի՛ համարիր ընդ ամպարիշտս զանձն իմ, եւ
մի՛ ընդ այնոսիկ, ոյք գործեն զանօրէնութիւն՝
կորուսաներ զիս. ոյք խօսէին զխաղաղութիւն ընդ
ընկերս իւրեանց, եւ չարութիւն է ի սիրտս նոցա:

Տուր նոցա, Տէ՛ր, ըստ գործոց նոցա, ըստ
անօրէնութեան գնացից նոցա հատո նոցա.

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը.
ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:

Մաղթանք

Օրհնությո՛ւն և փա՛ռք Հորը և Որդուն և
Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամեն:

Երկրորդ գուրդա

Սաղմոս 27

Քեզ կանչեցի, Տե՛ր, անարձագանք մի՛
թողնիր ինձ, Աստվա՛ծ իմ. եթե երբեք լուռ մնաս,
կնմանվեմ նրանց, ովքեր գերեզման են իջնում:

Լսիր, Տե՛ր, պաղատանքիս ձայնը, երբ ես
աղաչեմ Քեզ, երբ ձեռքերս դեպի սուրբ տաճարդ
պարզեմ:

Ամբարիշտների շարքը մի՛ դասիր ինձ և մի՛
կործանիր ինձ նրանց հետ, որ անօրենություն
են գործում, որ խաղաղության մասին են խոսում
իրենց ընկերների հետ, բայց սրտներում
չարություն կա:

Վարձատրիր նրանց, Տե՛ր, ըստ իրենց
արարքների, իրենց անօրեն վարքի համեմատ

ըստ գործոց ձեռաց նոցա հատո նոցա՝ զհատուցումն նոցա նոցին:

Ոչ իմացան նոքա զգործս Տեառն եւ ոչ ի գործս ձեռաց նորա հայեցան. կործանեսցես զնոսա, եւ այլ մի՛ շինեսցին:

Օրհնեալ է Տէր, զի լուաւ ձայնի աղօթից իմոց:

Տէր օգնական իմ եւ պաշտպան իմ. ի Նայուսացաւ սիրտ իմ, օգտեցաւ եւ զուարճացաւ մարմին իմ. եւ ես կամօք իմովք խոստովան եղէց նմա:

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ, ապաւէն փրկութեան օծելոյ իւրոյ:

Փրկեա զժողովուրդս Քո եւ օրհնեա զժառանդութիւնս Քո, հովուեա եւ բարձրացո՛ զնոսա մինչեւ յաւիտեան:

Սաղմոս ԻԸ

Մատուցէ՛ք Տեառն, որդիք Աստուծոյ, մատուցէք Տեառն զորդիս խոյոց:

Մատուցէ՛ք Տեառն զփառս եւ զպատիւ, մատուցէք Տեառն զփառս անուան նորա, երկիր պագէք Տեառն ի սրահ սրբութեան նորա:

Զայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուծած

Հատուցի՛ր նրանց, նրանց ձեռքերի գործին
նայելով՝ տո՛ւր նրանց հատուցումն իրենց:

Նրանք ուշ չդարձրին Տիրոջ արածներին, ոչ
էլ նայեցին նրա ձեռքի գործերին: Դու կկործա-
նես նրանց, և այլևս նրանք ոտքի չեն կանգնի:

Օրհնյալ է Տերը, քանզի լսեց ձայնն իմ
աղոթքի:

Տերն իմ օդնականն է ու պաշտպանը, իմ
սիրտը նրա վրա դրեց իր հույսը և մարմինս
գոհացավ ու զվարճացավ. ես հոժարակամ պիտի
փառաբանեմ նրան:

Տերը գորությունն է իր ժողովրդի, ապավենն
իր օծյալի փրկության:

Փրկիր Քո ժողովրդին և օրհնիր Քո ժառան-
գորդներին, հովվիր ու հավետ բարձրացրո՛ւ
նրանց:

Սաղմոս 28

Աստծու որդիներ, մատուցեցե՛ք Տիրոջը,
մատուցեցեք Տիրոջը խոյերի ձագեր:

Մատուցեցե՛ք Տիրոջը փառք ու պատիվ,
տվե՛ք Տիրոջը փառքն իր անվան և երկրպա-
գեցե՛ք Տիրոջն իր սուրբ սրահում:

Տիրոջ ձայնը ջրերի վրա է. փառքի Աստվածը

փառաց որոտաց, եւ Տէր ինքն է ի վերայ ջուրց
բազմաց:

Զայն Տեառն զօրութեանց, եւ ձայն Տեառն
մեծվայելչութեանց:

Զայն Տեառն փշրէ զմայրս, եւ մանրէ Տէր
զմայրսն Լիբանանու:

Մանրեսցէ զնոսա որպէս զմատաղատունկն
Լիբանանու, որ սիրելին է որպէս զորդիս մի-
եղջերւոյ:

Զայն Տեառն հատանէ զբոց ի հրոյ:

Զայն Տեառն շարժէ զանապատն, եւ խոռ-
վեցուցանէ Տէր զանապատն Կաղէս:

Զայն Տեառն հաստատէ զեղջերուս եւ յայտնի
առնէ զանտառս:

Ի տաճարի Նորա ամենեքեան ասասցեն
զփառս Նորա:

Տէր զջրհեղեղս նստուցանէ եւ ցածուցանէ.
թագաւորեսցէ Տէր յաւիտեան:

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ եւ
օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղութիւն:

որոտաց, Տերն ինքն է անսպառ ջրերի վրա:

*Տիրոջ ձայնը ահարկու է, Տիրոջ ձայնը
փառահեղ է:*

*Տիրոջ ձայնը փշրում է մայրիները, Տերը
կոտրատում է մայրիները Լիբանանի:*

*Տերը կոտրատում է դրանք ինչպես Լիբա-
նանի մատաղ տունկերը, որոնք սիրասուն են
միեղջերուի ձագերի պես:*

Տիրոջ ձայնը ճեղքում է կրակի բոցը:

*Տիրոջ ձայնը ցնցում է անապատը, Տերը
դողացնում է Կաղեսի անապատը:*

*Տիրոջ ձայնը ոտքի է կանգնեցնում եղնիկ-
ներին և մերկացնում անտառները:*

*Նրա տաճարում բոլորը թող գովեն փառքը
Նրա:*

*Տերը զսպում և ցածրացնում է ջրհեղեղները,
Տերը հավիտյան պիտի թագավորի:*

*Տերն իր ժողովրդին զորություն պիտի տա,
իր ժողովրդին պիտի օրհնի խաղաղություն
պարգևելով:*

Սաղմոս ԻՇ

Բարձր առնեմ զՔեզ, Տէ՛ր, զի ընկալար զիս,
եւ ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:

Տէ՛ր Աստուա՛ծ իմ, կարդացի առ Քեզ եւ
բժշկեցեր զիս:

Տէ՛ր, հաներ ի գժոխոց զանձն իմ, փրկեցեր
զիս յայնցանէ որք իջանեն ի գուբ:

Սաղմոս ասացէք Տեառն, սուրբք Նորա,
խոստովա՛ն եղերուք յիշատակի սրբութեան
Նորա:

Սրտմտութիւն է ի բարկութեան Նորա, եւ
կեանք են ի կամաց Նորա:

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու
եղիցի ուրախութիւն:

Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ՝
Ո՛չ սասանեցայց յաւիտեան:

Տէ՛ր, ի կամս Քո ետուր գեղոյ իմոյ զօրութիւն,
դարձուցեր զերեսս Քո յինէն՝ եւ ես եղէ
խոռվեալ:

Առ Քեզ, Տէ՛ր, կարդացի, եւ առ Աստուած
իմ աղաղակեցի՝ զի՞նչ օգուտ է Քեզ յարենէ
իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն:

Միթէ հող խոստովա՞ն առնիցի առ Քեզ,

Սաղմոս 29

Մեծարում եմ Քեզ, **Տե՛ր**, քանզի ընդունեցիր
ինձ և չթողեցիր, որ թշնամիներս չարախնդան
վրաս:

Տե՛ր Աստուա՛ծ իմ, կանչեցի Քեզ և բուժեցիր
ինձ:

Տե՛ր, հոգիս դժոխքից հանեցիր և փոսն
իջնողների միջից փրկեցիր ինձ:

Սաղմո՛ս երգեցեք **Տիրոջը**, ո՛վ Նրա սրբեր,
գոհությո՛ւն մատուցեցեք Նրա սուրբ հիշա-
տակին:

Նրա բարկության մեջ ցասում կա, իսկ Նրա
կամեցողության մեջ՝ կյանք:

Երեկոյան լացը կդադարի, իսկ առավոտյան
ուրախություն կլինի:

Իմ բարկության մեջ ես ասացի, թե՝ Հավետ
չեմ սասանվի:

Տե՛ր, Քո կամքով ուժ տվեցիր իմ վայելչու-
թյանը, բայց երբ երեսդ դարձրիր ինձնից, ես
խոռվահույզ եղա:

Քե՛զ կանչեցի, **Տե՛ր**, աղաչեցի իմ Աստծուն՝
ի՞նչ օգուտ ունես իմ արյունից, եթե ապակա-
նության գբի մեջ թաղվեմ:

Միթե հողը գոհությո՛ւն կմատուցի Քեզ,

կամ պատմեսցէ՞ զճշմարտութիւնս Քո:

Լուաւ ինձ Տէր եւ ողորմեցաւ, եւ Տէր եղեւ
ինձ օդնական:

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, զերծ
յինչն զքուրծ եւ ինձ զգեցոյց զուրախութիւն:

Որպէս սաղմոս ասասցեն Քեզ փառք իմ, եւ
այլ մի՛ եւս զղջացայց,

Տէ՛ր Աստուած իմ, յաւիտեան խոստովան
եղէց Քեզ:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.
ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Կամ կպատմի՞՞ Քո ճշմարտությունը:

**Լսեց ինձ Տերն ու ողորմեց, Տերը եղավ իմ
օգնականը:**

**Սուզս դարձրեց ուրախություն, հանեց
քուրձն իմ և խնդություն հազցրեց ինձ:**

**Փառքս սաղմոս պիտի երգի Քեզ, որպեսզի
այլևս չզղջամ:**

**Տե՛ր իմ Աստված, հավիտյան գոհություն
պիտի մատուցեմ քեզ:**

**Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ
և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:**

Քարոզ

**Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը.
ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:**

Մաղթանք

**Օրհնությո՛ւն և փա՛ռք Հորը և Որդուն և
Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամեն:**

Սաղմոս Լ

Ի Քեզ, Տէ՛ր, յուսացայ, մի՛ ամաչեցից
յաւիտեան. յարդարութեան Քում փրկեա եւ
ապրեցո զիս:

Խոնարհեցո առ իս զունկն Քո, վաղվաղեա ի
կեցուցանել զիս:

Լեր իմ, Աստուա՛ծ, պաշտպան եւ տուն
ապաւինի ապրեցուցանել զիս, զի հզօրիչ իմ եւ
ապաւէն իմ Դու ես:

Վասն անուան Քոյ, Տէ՛ր, առաջնորդեցեր ինձ,
եւ սնուցեր զիս. եւ հանցես զիս յորոգայթէ
յայսմանէ որ թագուցաւ ինձ:

Դու ես պաշտպան իմ, Տէ՛ր, եւ ի ձեռս Քո
յանձն առնեմ զհոգի իմ:

Փրկեցեր զիս, Տէ՛ր Աստուած, ճշմարտու-
թեամբ Քով. ատեցեր զայնոսիկ, ոյք պահեն
զերկիւղ ի սնոտիս:

Ես ի Տէր յուսացայ, ցնծացայց եւ ուրախ եղէց
ի փրկութեան Քում:

Հայեցար ի խոնարհութիւն իմ եւ փրկեցեր ի
վշտաց զանձն իմ, եւ ոչ մատնեցեր զիս ի ձեռս
նեղչաց իմոց, եւ կացուցեր յանդորրու զոտս իմ:

Ողորմեա՛ ինձ, Տէ՛ր, զի նեղեալ եմ ես.

Սաղմոս 30

Հույսս դրի Քեզ վրա, Տե՛ր, թող հավետ ամոթով չմնամ. Քո արդարությամբ փրկիր և ազատիր ինձ:

Դեպի ինձ խոնարհիր ականջը Քո, փութա՛ ինձ պաշտպանելու:

Եղիր իմ պահապանը, Աստվա՛ծ, և իմ փրկության ապաստարանը, քանզի իմ ուժն ու ապավենն ես Դու:

Քո անվան համար ինձ առաջնորդ եղար և սնուցեցիր ինձ. ինձ կհանես այն որոգայթից, որ լարեցին իմ դեմ:

Դու ես պաշտպանն իմ, Տե՛ր, և Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին:

Տե՛ր Աստված, փրկեցիր ինձ Քո ճշմարտությամբ: Ատեցիր նրանց, ովքեր երկյուղ են կրում սնոտիաբար:

Ես հույսս դրի Տիրոջ վրա. պիտի ցնծամ և ուրախանամ Քո տված փրկությամբ:

Տեսար իմ խոնարհությունն ու ինձ փրկեցիր վշտերից. ինձ չմատնեցիր նեղիչներիս ձեռքը և ոտքերս լայնարձակ վայրում հաստատեցիր:

Ողորմի՛ր ինձ, Տե՛ր, քանզի Ճնշված եմ ես.

խոռվեցաւ ի սրտմտութենէ ակն իմ, անձն իմ եւ
փոր իմ:

Պակասեցան ի ցաւոց կեանք իմ, եւ ամք իմ
յոգւոց ելանելոյ:

Աղքատացաւ ի տկարութենէ զօրութիւն իմ,
եւ ոսկերք իմ խոռվեցան:

Քան զամենայն թշնամիս իմ եղէ ես նախատ
դրացեաց իմոց, յոյժ ահ եւ երկիւղ ծանօթից
իմոց:

Ամենեքեան, ոյք տեսանէին զիս, արտաքս
փախչէին յինէն:

Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ, եւ
եղէ ես որպէս զանօթ կորուսեալ, զի լուայ ես
զբամբասանս բազմաց, ոյք շուրջ էին զինեւ:

Ի ժողովել նոցա ի միասին՝ առնուլ զանձն իմ
խորհեցան, այլ ես ի Քեզ, Տէ՛ր, յուսացայ:

Ասացի՝ Դո՛ւ ես Աստուած իմ, եւ ի ձեռս Քո
է ժառանգութիւն իմ:

Փրկեա՛ զիս ի ձեռաց թշնամեաց իմոց եւ ի
հալածչաց իմոց:

Երեւեցո զերեսս Քո ի ծառայս Քո, ապրեցո
զիս, Տէ՛ր, ըստ ողորմութեան Քում:

Տէ՛ր, մի՛ յամօթ եղէց, զի կարդացի առ Քեզ:

սրտնեղությունից խռոված են իմ աչքը, հոգին
ու որովայնը:

Կյանքս սպառվեց վիշտ ու ցավերով, և
տարիներս՝ հոգոց հանելով:

Թշվառությունից տկարացավ ուժն իմ, և
ոսկորներս մաշվեցին:

Իմ բոլոր թշնամիներից ավելի ես դրացի-
ներիս համար նախատինք եղա և ծանոթներիս
համար՝ սոսկալի ահ ու սարսափ:

Բոլոր նրանք, ովքեր տեսնում էին ինձ, հեռու
էին փախչում ինձանից:

Սրտերից մոռացվեցի ես ինչպես մեռյալ և
նմանվեցի անպետք անոթի, քանզի բամբասանք
լսեցի շատերից, որոնք իմ շուրջն էին:

Հավաքված իրար գլխի՝ նրանք ուզում էին
առնել իմ հոգին:

Բայց ես, Տե՛ր, հույսս դրի Քեզ վրա:

Ասացի. «Դո՛ւ ես Աստուածն իմ, և Քո
ձեռքում է իմ ժառանգությունը:

Փրկի՛ր ինձ թշնամիներիս ձեռքից և իմ
հալածիչներից:

Յո՛ւյց տուր երեսդ Քո այս ծառային,
պահպանի՛ր ինձ, Տե՛ր, Քո ողորմությամբ»:

Տե՛ր, ամոթով թող չմնամ, որ Քեզ դիմեցի:

Ամաչեսցեն ամբարիշտք եւ իջցեն ի դժոխս.
եւ համը եղիցին շրթունք նենգաւորք՝ ոյք
խօսէին զարդարոյ զանիրաւութիւն յամբարտա-
ւանութեան եւ յանգոսնելն իւրեանց:

Որպէս զի՞ բազում է ողորմութիւն քաղցրու-
թեան Քո, Տէ՛ր, զոր պահեցեր երկիւղածաց Քոց:

Արարեր Դու այնոցիկ, ոյք յուսացեալ են ի
Քեզ, առաջի որդւոց մարդկան:

Ամրացուցեր զնոսա ի ծածկոյթ երեսաց Քոց
ի խոռվութենէ մարդկան:

Ծածկեցեր զնոսա ի խորանի Քում ի հակա-
ռակութենէ լեզուաց:

Օրհնեալ է Տէր, զի սքանչելիս արար
զողորմութիւն իւր ի քաղաք ամուր:

Ես ասացի ի զարմանալ իմում, թէ ընկեցայ
ուրեմն յերեսաց աչաց Քոց:

Վասն այսորիկ լուար ձայնի աղօթից իմոց՝
յաղաղակել իմում առ Քեզ:

Սիրեցէք զՏէր, ամենայն սուրբք Նորա, զի
ստուգութիւն խնդրէ Տէր, եւ հատուցանէ
այնոցիկ, որք առաւել առնեն զամբարտա-
ւանութիւն:

Քաջալերեցարուք, եւ զօրասցին սիրտք ձեր,
ամենեքեան ոյք յուսացեալ էք ի Տէր:

Թող ամբարիշտներն ամաչեն ու դժոխք իջնեն.
և թող պապանձվեն նենդ շրթունքները, որոնք
ամբարտավանությամբ և արհամարհանքով
չարախոսում են արդարի մասին:

Որքա՞ն շատ է Քո ողորմության քաղցրու-
թյունը, Տե՛ր, որ պահեցիր երկյուղածներիդ
համար:

Դու այն չնորհեցիր նրանց, որոնք իրենց
հույսը դրել են Քեզ վրա մարդկանց որդիների
առջեւ:

Մարդկանց խոռվությունից պաշտպանեցիր
նրանց Քո երեսի ծածկույթով. լեզուների
հակառակությունից թաքցրիր նրանց Քո
խորանում:

Օրհնյալ է Տերը, քանզի ողորմությունն իր
հրաշագործեց ամուր քաղաքում:

Շփոթության մեջ ես ասացի, թե այլ ես հեռու
մնացի աչքերիդ առջեկից:

Սակայն Դու լսեցիր ձայնն իմ աղոթքի, երբ
աղաղակեցի Քեզ:

Սիրեցե՛ք Տիրոջը, բոլոր սուրբերդ Նրա,
քանզի Տերը ճշմարտություն է փնտրում և
խստությամբ հատուցում նրանց, ովքեր շատ են
ամբարտավանանում:

Քաջալերվեցե՛ք ամենքդ, որ հույս եք դրել
Տիրոջ վրա, - ձեր սրտերը թող գորանան:

Սաղմոս ԼԱ

Երանի՛, ում թողութիւն եղեւ մեղաց, եւ
ծածկեցան ամենայն յանցանք նորա:

Երանի՛ առն, որում ոչ համարեսցի Տէր զմեղս
նորա, եւ ոչ գոյ նենգութիւն ի բերան նորա:

Լոեցի ես, եւ մաշեցան ամենայն ոսկերք իմ՝
առ աղաղակել ինձ առ Տէր զօրհանապազ՝ ի տուէ
եւ ի գիշերի:

Ծանրացաւ ձեռն Քո ի վերայ իմ, դարձայ ի
թշուառութիւն՝ զի հարան յիս փուշք:

Զմեղս իմ ցուցից Քեզ, եւ զանօրէնութիւնս
իմ ոչ ծածկեցից ի Քէն:

Ասացի թէ՝ Պատմեցից ինձէն զմեղս իմ, եւ
Դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց
իմոց:

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ Քեզ
ամենայն սուրբք ի ժամ ընդունելի:

Բայց միայն ի ջուրցն հեղեղաց բազմաց, որք
առ նոսա ինչ ոչ մերձեսցին:

Դո՛ւ ես ապաւէն իմ ի նեղութենէ յայսմանէ,
որ շուրջ եղեն զինեւ:

Ցնծութի՛ւն իմ, փրկեա զիս յայնցանէ, ոյք

Սաղմոս 31

Երանի՛ նրան, ում մեղքերին թողություն
տրվեց, և ում բոլոր հանցանքները ծածկվեցին:

Երանի՛ այն մարդուն, որին Տերն այլևս
մեղավոր չի համարում, և որի բերանում
նենգություն չկա:

Ես լռեցի, և իմ բոլոր ոսկորները մաշվեցին՝
ամեն օր գիշեր-ցերեկ Տիրոջը կանչելուց:

Քո ձեռքը ծանրացավ ինձ վրա, ես կրկին
ընկա թշվառության մեջ, քանզի փշերն ինձ
ծակեցին:

Մեղքերս Քեզ ցույց կտամ, և անօրենու-
թյունս չեմ ծածկի Քեզնից:

Ասացի, թե կխոստովանեմ մեղքերն իմ, և Դու
թողությունն կտաս իմ մեղքերի ամբողջ ամ-
բարշտությանը:

Դրա համար բոլոր սուրբերն հարմար ժամին
աղոթքի կկանգնեն Քո առջե, և սաստիկ
ջրհեղեղների ժամանակ նրանց ոչինչ չի
պատահի:

Դո՛ւ ես իմ ապավենն այն նեղության մեջ,
որը շուրջս պատեց:

Ով ցնծությունն իմ, փրկի՛ր ինձ նրանցից,

պաշարեցին զիս:

Իմաստուն արարից զքեզ եւ խելամուտ ի ճանապարհի յոր եւ գնասցես, եւ հաստատեցից ի վերայ քո զաչս իմ:

Մի՛ լինիք որպէս զձիս եւ զջորիս, զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. ի սանձս եւ ի դանդանաւանդս ճմլեսցես զկզակս նոցա, որ առ քեզ ինչ ոչ մերձեսցին:

Բազում տանջանք են մեղաւորաց, բայց ոյք յուսան ի Տէր՝ ողորմութիւն Տեառն շուրջ եղիցի զնոքօք:

Ուրա՛խ եղերուք եւ ցնծացէք, արդարք ի Տէր, պարծեցարուք ամենեքեան ոյք ուղիղ էք սրտիւք:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ովքեր պաշարեցին ինձ:

«Քեզ կիմաստնացնեմ ու խելամիտ կդարձնեմ քո ընթացած ճանապարհին և աչքերս վրադ կպահեմ», և ասում է Տերը:

Մի՛ եղեք ձիերի և ջորիների պես, որոնք իմաստություն չունեն. սանձով ու պախուրցով պետք է նրանց կզակը ճմլել, որ քեզ չմոտենան:

Շատ են մեղավորների տանջանքները, բայց ովքեր իրենց հույսը դրել են Տիրոջ վրա, Տիրոջ ողորմությունը կպարուրի նրանց:

Ուրա՛խ եղեք և ցնծացեք Տիրոջով, ո՛վ արդարներ. պարծեցե՛ք բոլորդ որ ուղիղ եք սրտով:

Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:

Մաղթանք

Օրհնություն և փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Սահմոս Լ2

Մի՛ նախանձիր ընդ չարս, եւ մի՛ ընդ
այնոսիկ, ոյք գործեն զանօրէնութիւն:

Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին,
որպէս զդալարի խոտոյ վաղվաղակի անցցեն:

Յուսա՛ ի Տէր եւ արա՛ զքաղցրութիւն,
բնակեա՛ յերկրի եւ հովուեսցիս ի մեծութեան
Նորա:

Ժտեա՛ ի Տեառնէ՛ եւ նա տացէ քեզ զինդր-
ուածս սրտի քո. յայտնեա՛ առաջի Տեառն
զճանապարհս քո եւ յուսա՛ ի նա:

Նա արասցէ եւ հանցէ որպէս զլոյս զարդա-
րութիւնս քո, եւ զիրաւունս քո որպէս զօրհա-
սարակ:

Հնազա՛նդ լեր Տեառն եւ ծառայեա՛ նմա, եւ
մի՛ նախանձիր ընդ այնոսիկ, որոց առակեալ
իցեն ճանապարհք իւրեանց, ընդ մարդոյ՝ որ
գործէ զանօրէնութիւն:

Լուեա՛ ի բարկութենէ եւ հանգի՛ր ի սրտմտու-
թենէ եւ մի՛ նախանձիր ընդ չարս:

Զի չարք վաղվաղակի սատակեսցին, բայց ոյք
համբերեն Տեառն՝ նոքա ժառանգեսցեն զերկիր:

Փոքր մի՛ եւ այլ ո՛չ եւս իցէ ամբարիշտն,
խնդրեսցես զտեղի նորա եւ ոչ գտցես:

Սաղմոս 36

Մի՛ նախանձիր չարամիտներին և ո՛չ էլ նրանց, ովքեր անօրենություն են գործում, քանզի նրանք խոտի պես իսկույն կչորանան, դալար խոտի պես արագ կանցնեն:

Հույսդ դի՛ր Տիրոջ վրա ու բարությո՛ւն գործիր, բնակվի՛ր երկրում և կհովվես նրա փարթամության մեջ:

Պաղատի՛ր Տիրոջը, և Նա քեզ կտա սրտիդ ուզածները. Տիրոջ առջև հայտնի դարձրու քո ճանապարհները և հուսա նրան:

Նա այնպես կանի, որ արդարությունդ երեա ինչպես լույս, և իրավունքդ՝ ինչպես ցերեկ:

Հնազա՞նդ եղիր Տիրոջն ու ծառայի՛ր նրան. մի՛ նախանձիր նրանց, որոնց ճանապարհը նշավակելի է, ոչ էլ այն մարդուն, որ անօրենություն է գործում:

Դադարի՛ր բարկանալուց, հանդարտվի՛ր սրտմտությունից և մի՛ նախանձիր չարերի նման:

Չարագործները շուտով կվերանան, իսկ Տիրոջն սպասողները կժառանգեն երկիրը:

Եվս մի փոքր ժամանակ, և այլևս ամբարիշտ չի մնա, կփնտրես նրա տեղն ու չես գտնի:

Այլ որ հեղքն են, նոքա ժառանգեսցեն զերկիր եւ փափկասցին ի բազում խաղաղութեան իւրեանց:

Սպասէ մեղաւորն արդարոյ եւ կրծտէ ի վերայ նորա զատամունս իւր, այլ Տէր ծիծաղեսցի զնովաւ. քանզի յառաջագոյն տեսանէ, զի հասեալ է օր նորա:

Սուր հանին մեղաւորք եւ լարեցին զաղեղունս իւրեանց՝ հարկանել զաղքատն եւ զտնանկն, սպանանել զայն, որ խոնարհն է սրտիւ:

Սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա, եւ աղեղունք նոցա փշրեսցին:

Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ, քան զբազում մեծութիւն մեղաւորաց, եւ բազուկք ամպարշտաց խորտակեսցին:

Հաստատէ Տէր զարդարս եւ ճանաչէ զաւուրս ամբծից. ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի:

Մի ամաչեսցեն նոքա ի ժամանակս չարութեան, այլ յաւուրս սովու յագեսցին:

Ահա մեղաւորք կորիցեն. եւ թշնամիք Տեառն ի փառաւորել եւ ի բարձրանալ իւրեանց պակասեսցին որպէս ծուխ, զի պակասէ:

Փոխս առնու մեղաւորն եւ ոչ հատուցանէ,

Իսկ ովքեր հեղ են, նրանք կժառանգեն
երկիրը և կզգարձանան մեծ խաղաղության մեջ:

Մեղավորը հետապնդում է արդարին և իր
ատամներն է կրծտացնում նրա վրա:

Բայց Տերը կծիծաղի նրա վրա, քանզի
նախապես գիտի, որ հասել է նրա օրը:

Մեղավորները սուր քաշեցին և լարեցին
իրենց աղեղները՝ աղքատին ու տնանկին
հարփածելու, սրտով խոնարհներին սպանելու
համար:

Նրանց սրերը կմխվեն իրենց սրտերը, և
նրանց աղեղները կփշռվեն:

Արդարի քիչն ավելի լավ է, քան մեղա-
վորների մեծ հարստությունը:

Ամբարիշտների բազուկները կխորտակվեն, և
Տերն արդարներին հաստատ կպահի:

Նա գիտի անմեղների օրերը, նրանց ժառան-
գությունը հավիտյան կլինի:

Փորձանքի ժամանակ նրանք ամոթով չեն
մնա, իսկ սովոր օրերին կհագենան:

Արդ, մեղավորները կորստյան կմատնվեն, և
Տիրոջ թշնամիներն իրենց փառքի ու վերելքի
ժամին կսպառվեն, ինչպես ծուխն է սպառվում:

Մեղավորը փոխ է առնում ու չի վճարում,

այլ որ արդարն է՝ ողորմի եւ տայ:

Ոյք օրհնեն զՏէր՝ ժառանգեսցեն զերկիր, եւ
ոյք անիծանեն՝ սատակեսցին ի նմանէ:

Ի Տեառնէ ուղղին գնացք առն. զճանապարհս
նորա նա կամի յոյժ:

Թէպէտ եւ գայթակղեսցի, նա մի կործա-
նեսցի, զի Տէր ձեռնկալու է նորա:

Մանուկ էի ես եւ ծերացայ, եւ ոչ տեսի զար-
դարն արհամարհեալ, եւ ոչ զզաւակ նորա՝ թէ
մուրանայ հաց:

Զօրհանապազ ողորմի եւ տայ փոխ, զաւակ
նորա օրհնեալ եղիցի յաւիտեան:

Խոտորեա ի չարէ եւ արա զբարի, եւ ընա-
կեսցիս յաւիտեանս յաւիտենից ի նմա:

Տէր սիրէ զիրաւունս, եւ ոչ ընդ վայր հար-
կանէ զսուրբս իւր, այլ յաւիտեան պահէ զնոսա:

Անօրէնք հալածեսցին ի միասին, եւ զաւակք
ամպարշտաց սատակեսցի:

Այլ արդարք ժառանգեսցեն զերկիր, եւ
ընակեսցեն յաւիտեանս յաւիտենից ի նմա:

Բերան արդարոյ պատմէ զիմաստութիւն, եւ
լեզու նորա խօսեսցի զիրաւունս:

Օրէնք Աստուծոյ իւրոյ են ի սրտի իւրում,
եւ մի գայթակղեսցին գնացք նորա:

իսկ արդարը ողորմում է ու տալիս:

Ովքեր օրհնում են Տիրոջը, կժառանգեն երկիրը, իսկ ովքեր անիծում են, կջնջվեն Տիրոջ ձեռքով:

Տերն ուղղում է այն մարդու ընթացքը, ով շատ է սիրում իր ճանապարհը:

Եթե անգամ նա սայթաքի, չի կործանվի, քանզի Տերը բոնել է նրա ձեռքը:

Մանուկ էի ես և ծերացա, բայց արդարին արհամարհված չտեսա կամ նրա զավակին՝ հաց մուրալիս:

Ամեն օր նա ողորմում ու փոխ է տալիս, նրա սերունդը հավիտյան օրհնյալ կլինի:

Խուսափի՛ր չարից ու բարություն արա և հավիտյան կապրես երկրի վրա:

Տերը սիրում է իրավունքը և իր սրբերին երեսի վրա չի թողնում, այլ հավիտյան պահպանում է նրանց:

Անօրենները կքշվեն կգնան միասին, և ամբարիշտների սերունդը կոչնչանա:

Իսկ արդարները կժառանգեն երկիրը և հավիտյանս հավիտենից կբնակվեն նրա մեջ:

Արդարի բերանն իմաստություն է բարբառում, իսկ լեզուն՝ արդարություն է խոսում:

Նրա սրտում իր Աստծու օրենքն է, ուստի նրա երթն անսայթաք կլինի:

Հայի մեղաւորն ընդ արդար եւ խնդրէ
սպանանել զնա, այլ Տէր ոչ թողու զնա ի ձեռս
նորա, եւ ոչ դատապարտէ զնա՝ յորժամ դատի
զնա:

Համբե՛ր Տեառն եւ պահեա՛ զճանապարհս
Նորա, եւ բարձր արասցէ զքեզ ի ժառանգել
զերկիր, եւ զսատակումն մեղաւորաց տեսցես:

Տեսի զամպարիշտն վերացեալ եւ բարձրա-
ցեալ որպէս զմայրս Լիբանանու:

Անցի՛ եւ ահա ոչ էր, խնդրեցի՛ եւ ոչ գտաւ
տեղի նորա:

Պահեա զամբծութիւն, եւ տես զուղղութիւն,
զի գոն մնացուածք առն խաղաղարարի:

Անօրէնք հալածեսցին ի միասին, եւ զաւակք
ամպարշտաց կորիցեն:

Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է, վերա-
կացու է նոցա ի ժամանակս նեղութեան:

Օքնեսցէ նոցա Տէր եւ փրկեսցէ զնոսա.
ապրեցուացէ ի մեղաւորաց եւ կեցուացէ զնոսա,
զի յուսացան ի նա:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մեղավորը նայում է արդարին և ձգտում սպանել նրան, սակայն Տերը նրա ձեռքում չի թողնի նրան և դատաստանի ժամանակ նրան չի դատապարտի:

Սպասի՛ր Տիրոջն ու պահի՛ր նրա ճանապարհները, Նա քեզ կբարձրացնի՝ երկիրը ժառանգելու, և դու կտեսնես մեղավորների կործանումը:

Տեսա ամբարշտին մեծացած ու բարձրացած, ինչպես Լիբանանի մայրիները:

Ես մոտով անցա, և ահա նա չկար, փնտրեցի՝ ու նրա տեղը չերևաց:

Անարա՛տ ապրիր և նայի՛ր արդարությանը, քանզի խաղաղասեր մարդը ժառանգություն կունենա:

Անօրենները կքշվեն կգնան գլխովին, և ամբարիշտների սերունդը կորստյան կմատնվի:

Արդարների փրկությունը Տիրոջից է, նեղության ժամանակ նա է նրանց օգնականը:

Տերը կօգնի ու կփրկի նրանց, կազատի մեղավորներից ու կպահպանի նրանց, քանզի նրանք իրենց հույսը դրել են նրա վրա:

Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Քարոզ

Եւս եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.
ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Հինգերորդ գուրղայ

Սաղմոս ԼԵ

Տէ՛ր, մի՛ սրտմտութեամք Քով յանդիմաներ
զիս եւ մի՛ բարկութեամք Քով խրատեր զիս:

Զի նետք Քո հարան յիս, եւ յիս հաս-
տատեցաւ ձեռն Քո:

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց
բարկութեան Քո. ոչ է խաղաղութիւն ոսկերաց
իմոց յերեսաց մեղաց իմոց:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ
իմ, որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ:

Նեխեցան եւ փտեցան վէրք իմ յերեսաց
անզգամութեան իմոյ:

Տառապեցայ եւ խոնարհ եղէ յոյժ, զօրհա-
նապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղեւ

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը.
ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:

Մաղթանք

Օրհնություն և փա՛ռք Հորը և Որդուն և
Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամեն:

Հինգերորդ գուրդա

Սաղմոս 37

Տե՛ր, Քո զայրույթով մի՛ հանդիմանիր ինձ և
Քո բարկությամբ ինձ մի՛ խրատիր:

Քանզի Քո նետերն ինձ հարվածեցին, և Քո
ձեռքն ինձ վրա ծանրացավ:

Մարմնիս համար բուժում չկա Քո բարկու-
թյան երեսից, ոսկորներս հանգստություն չունեն
իմ մեղքերի պատճառով:

Անօրենություններս գլխիցս վեր բարձրա-
ցան, սաստիկ բեռան պես ծանրացան վրաս:

Վերքերն իմ նեխեցին ու փտեցին անզգա-
մությանս երեսից:

Տառապեցի և խիստ խոնարհվեցի, գիշեր-
ցերեկ շրջեցի վշտացած, քանզի հոգիս լցվեց

չարչարանօք եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:

Չարչարեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ,
մոնչէի առ հեծութեան սրտի իմոյ:

Տէ՛ր, առաջի Քո է ամենայն ցանկութիւն իմ,
եւ հեծութիւն իմ ի Քէն ոչ ծածկեցաւ:

Սիրտ իմ խոռվեցաւ յիս եւ եթող զիս
զօրութիւն իմ, լոյս աչաց իմոց՝ եւ այս ոչ եղեւ
ընդ իս:

Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ առաջի իմ
մերձեցան եւ կացին, եւ մերձաւորք իմ հեռի եղեն
յինէն:

Բոնադատէին զիս եւ խնդրէին զանձն իմ, ոյք
խորհէին չար ի վերայ իմ, խոսեցան զանօրէնու-
թիւն եւ զնենգութիւն զօրհանապազ խորհեցան:

Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ, որպէս համր՝
որ ոչ բանայ զբերան իւր:

Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, եւ ոչ գոն
խօսք ի բերան նորա:

Ես ի Քե՛զ, Տէ՛ր, յուսացայ, եւ Դու լուիցես
ինձ, Տէ՛ր Աստուած իմ:

Ասացի թէ՝ Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք
իմ. ի սասանել ոտից իմոց՝ ի վերայ իմ մեծամեծս
խօսեցան:

Ես ի տանջանս պատրաստ եմ, եւ ցաւք իմ

տանջանքներով, և մարմնիս համար բուժում չկա:

Զարչարվեցի և սաստիկ խոնարհ եղա,
մոնչացի սրտիս հեծությունից:

Տե՛ր, ամբողջ ցանկությունս առջեղ է, և
հառաչանքս չծածկվեց Քեզնից:

Սիրտս խոռվվեց իմ մեջ, և զորությունն իմ
լքեց ինձ, աչքերիս մեջ լույսի նշույլ իսկ չմնաց:

Բարեկամներս և ընկերներս մոտեցան ու
կանգնեցին իմ առջեւ, և մերձավորներս ինձնից
հեռու մնացին:

Ինձ հետապնդողները բռնադատեցին ինձ, իմ
դեմ չարիք նյութողները անօրենություն խոսե-
ցին, և գիշեր-ցերեկ նենգություն մտածեցին:

Իսկ ես դարձա ինչպես խուլ՝ որ չի լսում,
ինչպես համր՝ որ բերանն իր չի բացում:

Ես դարձա ինչպես մարդ, որ չի լսում, և որի
բերանում խոսք չկա:

Ես հույսս Քեզ վրա դրի, Ո՞վ Տեր, ու Դու
կլսես ինձ, Տե՛ր իմ Աստված:

Ասացի. «Թող թշնամիներս չծիծաղեն վրաս».
Երբ ոտքս սայթաքեց, նրանք հոխորտացին իմ
դեմ:

Ես պատրաստ եմ տանջանքների, և իմ

առաջի իմ են յամենայն ժամ:

Զանօրէնութիւնս իմ պատմեցից եւ հոգացայց վասն մեղաց իմոց:

Իսկ արդ թշնամիք իմ կենդանի են եւ զօրացեալ են քան զիս, եւ բազում էին, ոյք ատէին զիս ի տարապարտուց:

Ոյք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան:

Մի՛ թողուր զիս, Տէ՛ր Աստուած իմ, եւ մի՛ ի բացեայ առնիր յինէն. Հայեա՛ց յօգնել ինձ, Տէ՛ր փրկութեան իմոյ:

Սահմոս ԼԸ

Ասացի թէ՛՝ Պահեցից զճանապարհս իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով:

Եղի պահապան բերանոյ իմոյ՝ ի հակառակել մեղաւորին առաջի իմ:

Խուլ եղէ եւ խոնարհեցայ, լռեցի ի բարութենէ եւ ցաւք իմ նորոգեցան յիս:

Ճեռաւ սիրտ իմ ի փորի իմում, եւ ի խորհուրդս իմ վառեցաւ հուր:

Խօսեցայ լեզուաւ իմով եւ ասացի՝ Ցոյց ինձ, Տէ՛ր, զկատարած իմ եւ զթիւ աւուրց իմոց քանի՞օն է, զի գիտացից թէ Ո՛րչափ ինչ պակասեալ է յինէն:

ցավերը միշտ առջևս են:

**Կպատմեմ իմ անօրենությունները և կհոգամ
իմ մեղքերի մասին:**

Բայց թշնամիներն իմ ողջ են ու ավելի հզոր,
քան ես, և բազմացել են նրանք, ովքեր հանիրավի
ատում են ինձ, ովքեր ինձ չարությամբ
հատուցեցին բարու փոխարեն և չարախոսեցին
իմ մասին, քանզի ես արդարությամբ էի
ընթանում:

**Մի՛ լքիր ինձ, Տե՛ր իմ Աստված, և մի՛
հեռացիր ինձնից. ո՛ւշ դարձրու, որ ինձ օգնես,
Ո՞վ իմ փրկիչ Տեր:**

Սաղմոս 38

**Ասացի. «Զգուշանամ իմ ճանապարհին, որ
լեզվովս չմեղանչեմ»:**

**Բերանիս պահպանակ դրի, երբ մեղավորը
հակառակվեց ինձ:**

**Խուլ եղա և խոնարհ դարձա, բարիքս
լոռության մատնեցի, և ցավերս նորոգվեցին իմ
մեջ:**

**Սիրտս կրակ կտրեց իմ ներսում, և մտքիս
մեջ հուր բորբոքվեց:**

**Խոսեցի լեզվովս և ասացի. «Տե՛ր, ցո՛ւյց տուր
ինձ, թե ե՞րբ է իմ վախճանը, և որքան է կյանքիս
օրերի թիվը, որպեսզի իմանամ, թե ինչքան է
պակասել ինձնից»:**

Ահա չափով եղիր զաւուրս իմ, եւ կար զօրութեան իմոյ որպէս ոչ ինչ է առաջի իմ. սակայն ամենեւին ընդունայն է ամենայն մարդ մսեղի:

Ապաքէն որպէս ի պատկերի շրջի մարդ, սակայն ի զուր խռովի, գանձէ եւ ոչ գիտէ ում ժողովէ:

Իսկ արդ՝ ո՞վ է համբերութիւն իմ, թէ ո՞չ Դու, Տէ՛ր, կամ կար զօրութեան իմոյ, թէ ոչ ի Քէն:

Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկեցեր զիս եւ նախատինս անզգամաց արարեր զիս:

Լուռ եղէ եւ ոչ բացի զբերան իմ, զի Դու արարեր:

Ի բա՛ց արա յինչն զտանջանս իմ, զի ի զօրութենէ ձեռին Քո ես պակասեցայ:

Կշտամբութեամբ վասն մեղաց խրատեցեր զմարդ, մաշեցեր որպէս սարդիոստայն զանձն նորա. սակայն ընդունայն է ամենայն մարդ:

Լուր, Տէ՛ր, աղօթից իմոց, ունկն գիր խնդրուածաց իմոց. արտասուաց իմոց մի՛ լոեր:

Պանդուխտ եմ ես առաջի Քո, նժղեհ եւ անցաւոր որպէս ամենայն հարք իմ:

Թոյլ արա ինձ զի հանգեայց մինչչեւ երթեալ իցեմ, ուստի ոչ եւս գտանիցիմ:

Ահա սահման դրիբ իմ օրերին, և կարողությունս ոչինչ է իմ աչքում, բոլորովին ոչնչություն է ամեն մարդ, որ մարմին ունի:

Արդարեւ, մարդ շրջում է ինչպէս մի ուրվական. բայց իզուր է նա տագնապում, գանձ կուտակում՝ չիմանալով, թէ ում համար:

Իսկ արդ, ո՞վ է իմ համբերությունը, եթե ոչ Դու, Տե՛ր, կամ իմ ուժն ու կարողությունը Քեզնից չէ՞ միթե:

Բոլոր հանցանքներիցս փրկեցիր և անզգամների համար նախատինք դարձրիր ինձ:

Ես լուռ եղա և չբացեցի բերանն իմ, քանզի Դու էիր գործում:

Հեռացրո՛ւ ինձնից իմ տանջանքները, որովհետեւ Քո ձեռքի զորությունից հյուծվեցի ես:

Մեղքերի համար կշտամբելով՝ խրատեցիր Դու մարդուն, սարդոստայնի պես մաշեցիր նրան, բայց սուտ է ամեն մարդ:

Տե՛ր, լսիր իմ աղոթքը, ական՛ջ դիր խնդրանքներիս և արտասուքս լուռության մի՛ մատնիր:

Պանդուխտ եմ ես Քո առաջ, օտարական և անցորդ՝ ինչպես իմ բոլոր նախնիները:

Թույլ տուր ինձ հանգստանամ մինչեւ գնալն իմ, ուստի ես էլ չեմ լինի:

Սաղմոս ԼՇ

Համբերելով համբերի Տեառն, եւ նայեցաւ առիս, եւ լուաւ աղօթից իմոց:

Եհան զիս ի գբոյ տառապանաց, ի կաւոյ եւ ի տղմոյ:

Հաստատեաց ի վերայ վիմի զոտս իմ եւ ուղղեաց զգնացս իմ:

Արկ ի բերան իմ օրհնութիւն նոր, զօրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:

Տեսցեն բազումք եւ երկիցեն եւ յուսասցին ի Տէր:

Երանեալ է այր՝ որոյ անուն Տեառն յոյս է նորա. ոչ հայեցաւ նա ի նանրութիւն, եւ ոչ ի մոլութիւն սուտ:

Բազում արարեր Դու, Տէ՛ր Աստուա՛ծ իմ, զսքանչելիս Քո. խորհրդոց Քոց ոչ ոք է որ նմանի Քեզ. պատմեցի եւ խօսեցայ՝ եւ բազում եղենքան զթիւ:

Ընդ զոհս եւ ընդ պատարագս ոչ հաճեցար, լսելիս հաստատեցեր ինձ, զողջակէզս եւ զվասն մեղացն ոչ խնդրեցեր:

Յայնժամ ասացի, թէ՛ Ահաւասիկ գամ ես, ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ:

Առնել զկամս Քո, Աստուա՛ծ իմ, կամեցայ, եւ զօրինս Քո ի մէջ որովայնի իմոյ:

Սաղմոս 39

Համբերությամբ սպասեցի Տիրոջը, և Նա նայեց ինձ ու լսեց իմ աղոթքը:

Նա ինձ հանեց տառապանքի փոսից, ցեխից ու տիղմից. ոտքերս ժայռի վրա հաստատեց և ուղեց իմ քայլերը:

Բերանս դրեց մի նոր օրհներգ՝ օրհներգը մեր Տեր Աստծու:

Շատերը պիտի տեսնեն ու երկյուղեն և իրենց հույսը դնեն Տիրոջ վրա:

Երանի այն մարդուն, որի հույսը Տիրոջ անունն է, և որը ունայնությանն ու սուտ մոլորությանն ուշ չի դարձրել:

Բազում են Քո սքանչելիքները, Տե՛ր իմ Աստված. Քո խորհուրդներում ոչ ոք նման չէ Քեզ. պատմեցի ու խոսեցի դրանց մասին, բայց դրանք անթիվ են:

Զոհերն ու պատարագները չհաճեցիր, ինձ լսողություն տվիր, ողջակեզներ ու մեղքի զոհեր չպահանջեցիր:

Այն ժամանակ ասացի, թե. «Ահա գալիս եմ ես, գրքի գլուխներում գրված է իմ մասին:

Ուղեցի կամքդ կատարել, Աստված իմ, և օրենքդ, որ իմ ներսում է»:

Աւետարանեցից զարդարութիւնս Քո յեկեղեցիս մեծս. ահա զշրթունս իմ ոչ արգելից ի Քէն:

Տէ՛ր, Դու գիտացեր, զի զարդարութիւնս Քո ոչ ծածկեցի ի սրտի իմում, զծմարտութիւն Քո եւ զփրկութիւն Քո:

Ասացի եւ ոչ թաքուցի զողորմութիւնս Քո, եւ զծմարտութիւնս Քո ի ժողովրդենէ մեծէ:

Այլ Դու, Տէ՛ր, մի՛ հեռի առներ զգթութիւնս Քո յինէն, զի ողորմութիւն Քո եւ ճշմարտութիւն Քո յամենայն ժամ ընկալցի զիս:

Շուրջ եղեն զինեւ չարք, որոց ոչ էր նոցա թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, եւ ես ոչ կարացի տեսանել. բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ, եւ սիրտ իմ եթող զիս:

Կամեաց, Տէ՛ր, փրկել զիս, եւ, Տէ՛ր, յօգնել ինձ նայեաց:

Ամաչեսցեն եւ յամօթ լիցին ոյք խնդրէին զանձն իմ բառնալ զսա. դարձցին յետս եւ ամաչեսցեն, ոյք խորհէին ինձ չար:

Կրեսցեն զամօթ առ ժամայն վաղվաղակի, ոյք ասէին ինձ Վա՛շ վա՛շ:

Ցնծասցեն եւ ուրախ լիցին ի Քեզ ամենեքեան, ոյք խնդրեն զՔեզ, Տէ՛ր:

Մեծ հավաքներում ես Քո արդարությունն ավետեցի, և արդ շրթունքներս չեմ կտրում Քեզնից:

Տե՛ր, Դու գիտես, որ Քո արդարությունը, Քո ճշմարտությունն ու փրկությունը ծածուկ չեմ պահել իմ սրտում. պատմել եմ և մեծ հավաքներից չեմ թաքցրել Քո ողորմությունն ու ճշմարտությունը:

Իսկ Դու, Տե՛ր, գթությունդ հեռու մի՛ պահիր ինձնից, Քո ողորմությունն ու ճշմարտությունը միշտ պահապան լինեն ինձ:

Ինձ պաշարեցին չարիքներ, որոնք անթիվ էին. անօրենություններս ինձ վրա հասան, և ես չկարողացան կատել. գլխիս մազերից ավելի շատ եղան դրանք, և սիրտս ինձ լքեց:

Կամեցի՛ր փրկել ինձ, Տե՛ր, նայի՛ր, որ օգնես ինձ, Տե՛ր:

Թող խայտառակվեն ու ամոթահար լինեն նրանք, որ ուզում էին կործանել ինձ. Թող ետ դառնան ու ամոթով մնան ինձ չար կամեցողները:

Թող շուտափույթ անարգանք կրեն նրանք, որ չարախնդում էին իմ դեմ:

Թող Քեզանով ցնծան ու ուրախանան բոլոր նրանք, որ փնտրում են Քեզ, Տե՛ր:

**Ասասցեն յամենայն ժամ՝ Մեծ է Աստուած,
ոյք սիրեն զփրկութիւնս Քո:**

**Ես աղքատ եւ տնանկ եմ, Աստուած՝, խորհեա
զիս. օգնական եւ պաշտպան իմ ես, եւ Դու,
Աստուած իմ, մի՛ յամենար:**

**Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Քարոզ

**Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.
ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:**

Մաղթանք

**Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:**

Վեցերորդ գուրդայ

Սաղմոս Խ

**Երանի՛ որ խորհի զաղքատն եւ զտնանկն,
յաւուր չարի փրկէ զնա Տէր:**

**Տէր փրկէ զնա եւ կեցուցանէ, երանելի առնէ
զնա ի վերայ երկրի, եւ ոչ մատնէ զնա ի ձեռս
թշնամեաց իւրոց:**

**Քո տված փրկությունը սիրողներն ամեն ժամ
թող ասեն. «Մեծ է Աստված»:**

**Ես աղքատ եմ և տնանկ, Աստված, Հոգ տար
իմ մասին. իմ օգնականն ու պաշտպանը Դո՛ւ
ես. Աստված իմ, մի՛ ուշացիր:**

**Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Քարոզ

**Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը.
ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:**

Մաղթանք

**Օրհնությո՛ւն և փա՛ռք Հորը և Որդուն և
Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամեն:**

Վեցերորդ գուրղայ

Սաղմոս 40

**Երանի՞ նրան, ով մտածում է աղքատի ու
տնանկի մասին. փորձանքի օրը Տերը կփրկի
նրան:**

**Տերը կփրկի ու կպահպանի նրան, երանելի
կդարձնի երկրի երեսին և չի մատնի նրան իր
թշնամիների ձեռքը:**

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց,
զամենայն անկողինս նորա դարձուցանէ ի
հիւանդութենէ նորա:

Ես ասացի՝ Տէ՛ր, ողորմեա ինձ, բժշկեա զանձն
իմ, ես մեղայ Քեզ:

Թշնամիք իմ ասացին ինձ չար՝ Ե՞րբ իցէ, զի
մեռցի եւ կորիցէ անուն նորա:

Մտանէր տեսանել զնանրութիւն, խոսէր ի
սրտի իւրում, եւ ժողովէր զանօրէնութիւնս յանձն
իւր, արտաքս ելանէր եւ զնոյն խօսէր:

Զինէն շշնջէին ամենայն թշնամիք իմ,
խորհեցան չար ի վերայ իմ:

Բան անօրէնութեան եղին ի վերայ իմ. միթէ
որ ննջիցէ՝ այլ ո՞չ եւս յաւելուցու յառնել:

Քանզի եւ այրն խաղաղութեան իմոյ՝ յոր եւ
եսն յուսացայ, որ ուտէր զհաց իմ՝ յաճախեաց
առնել ինձ խարէութիւն:

Այլ Դու, Տէ՛ր, ողորմեա ինձ, կանգնեա զիս,
եւ ես հատուցից նոցա:

Յայսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս, զի մի՛
ուրախ եղիցին յիս թշնամիք իմ:

Այլ զիս յանբծութեան իմում ընկալար,
հաստատեցեր զիս առաջի Քո յաւիտեան:

Օրհնեալ Տէր Աստուած Խարայէլի յաւիտեանս
յաւիտենից. եղիցի, եղիցի:

Տերը նրան կօգնի տառապանքի մահճում և
նրա անկողինն ամբողջովին կմաքրի իր հիվան-
դութիւնից:

Ես ասացի. «Տե՛ր, ողորմիր ինձ և բժշկիր անձն
իմ, ես մեղանչեցի Քո դեմ»:

Թշնամիներս չարությամբ ասացին իմ մասին.
«Ե՞րբ պիտի մեռնի նա, և նրա անունը ջնջվի»:

Ինձ այցելության եկողը դատարկ բաներ էր
խոսում իր սրտում, անօրենություն կուտակում
իր մէջ, դուրս էր գալիս և նույն բանն էր
պատմում:

Բոլոր թշնամիներս քրթմնջեցին իմ մասին և
չարիք նյութեցին իմ դեմ:

Նրանք անօրեն խոսքեր բարդեցին ինձ վրա.
«Ով ննջում է, մի՞թէ այլևս հարություն չի առնի»:

Անգամ իմ բարեկամ մարդը, որին ես
վստահում էի, և որն ուտում էր հացն իմ,
հաճախակի իմ դեմ խաբեություն գործեց:

Բայց Դու, Տե՛ր, ողորմիր և ոտքի կանգ-
նեցրու ինձ, որ հատուցեմ նրանց:

Եթե թշնամիներս չչարախնդան վրաս, դրանից
ես կիմանամ, որ բարեհաճ ես իմ հանդեպ:

Դու իմ անմեղության համար ընդունեցիր ինձ
և հավիտյան հաստատեցիր Քո առջեւ:

Օրհնյալ լինի Տեր Աստվածն իսրայելի հա-
վիտյանս հավիտենից. ամեն, ամեն:

Սաղմոս ԽԱ

Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց,
այնպէս փափագէ անձն իմ առ Քեզ, Աստուա՛ծ:

Ծարաւի է անձն իմ առ Քեզ, Աստուա՛ծ հզօր
եւ կենդանի. Ե՞րբ եկից երեւեցայց երեսացդ
Աստուծոյ:

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ
եւ ի գիշերի, եւ այն զի ասէին ցիս զօրհանապազ՝
թէ՛ Ո՞ւր է Աստուած քո:

Զայս որպէս յիշէի՝ տառապէր յիս անձն իմ.
քաջալերէի, զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց
տանն Աստուծոյ. ի ձայն ցնծութեան խոստովա-
նութեան, եւ ի ձայն բարեկենդանութեան:

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես, ա՛նձն իմ, կամ
ընդէ՞ր խոռվես զիս. յուսա՛ առ Աստուած,
խոստովանեա՛ Նմա, փրկիչ երեսաց իմոց
Աստուա՛ծ է:

Անձն իմ յոյժ խոռվեցաւ, վասն այսորիկ
յիշեցի զՔեզ յերկրէն Յորդանանու, ի Հերմոնէ
ի լեռնէ փոքուէ:

Խորք ի խորոց կարդացին առ Քեզ ի ձայն
սահանաց Քոց:

Ամենայն զբօսանք Քո եւ ալիք Քո անցին ի
վերայ իմ:

Սաղմոս 41

Ինչպես եղջերուն ջրի ակունքներին է փափագում, այնպես էլ ես Քեզ եմ փափագում,
Ո՞վ Աստված:

Անձս ծարավ է Քեզ, Աստվա՛ծ հզոր և կենդանի. Ե՞րբ պիտի գամ ու երևամ Քո առաջ,
Ո՞վ Աստված:

Գիշեր-ցերեկ իմ արցունքներով սնվեցի,
քանզի ամեն օր ինձ ասում էին. «Քո Աստվածն
ո՞ւր է»:

Դա հիշելիս՝ անձս տառապում էր իմ ներսում, բայց քաջալերվում էի, որ պիտի մտնեմ Աստծու տան սքանչելի հարկի տակ, ցնծության ու օրհնության ձայնով և ձայնով բարեբանության:

Արդ, ինչո՞ւ ես տրտմում, ա՞նձն իմ, կամ ինչո՞ւ ես խռովեցնում ինձ. Հուսա՛ առ Աստված, խոստովանի՛ր Նրան, իմ անձը փրկողն Աստվա՛ծն է:

Անձն իմ խիստ խռովվեց, դրա համար Քեզ հիշեցի Հորդանանի երկրից ու Հերմոնի փոքր սարից:

Խորխորատներից Քեզ կանչեցին Քո սահանքների ձայնով:

Քո բոլոր կոհակներն ու ալիքներն անցան իմ վրայով:

Ի տուէ պատուիրեաց Տէր զողորմութիւն իւր,
ի գիշերի զօրհնութիւն նոր. եւ աղօթք իմ առ
Աստուած վասն կենաց իմոց:

Ասացի Աստուծոյ՝ Ընդունելի իմ ես. ընդէ՞ր
մերժեցեր զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել
թշնամւոյ իմոյ:

Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս
թշնամիք իմ, յասել ցիս զօրհանապազ, թէ՝ Ռ՞որ
է Աստուած քո:

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ
ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած,
խռոտովանեա՛ Նմա, փրկիչ երեսաց իմոց
Աստուա՛ծ է:

Սաղմոս ԽԲ

Դա՛տ արա ինձ, Աստուա՛ծ, եւ իրաւ արա ինձ
ի դատաստանի իմում:

Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ
նենգաւորէ փրկեա զիս:

Դու, Աստուա՛ծ, հզօրիչ իմ ես, ընդէ՞ր
մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել
թշնամւոյ իմոյ:

Առաքեա, Տէ՛ր, զլոյս Քո եւ զծմարտութիւն
Քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի
լեառն սուրբ եւ ի յարկս Քո:

Ցերեկը Տերն իր ողորմությունը հաստատեց,
գիշերը՝ նոր օրհներգություն. Ես աղոթում եմ
Աստծուն իմ կյանքի համար:

Աստծուն ասացի. «Ինձ ընդունողը Դու ես,
ինչո՞ւ մերժեցիր ինձ, ինչո՞ւ տխուր լինեմ
թշնամուս հալածանքի ժամանակ»:

Երբ ոսկորներս փշրվեցին, թշնամիներն իմ
նախատեցին ինձ՝ ամեն օր ասելով. «Քո
Աստվածն ո՞ւր է»:

Արդ, ինչո՞ւ ես տրտմում, հոգի՛ իմ, կամ
ինչո՞ւ ես խռովեցնում ինձ. Հուսա՛ առ Աստված,
խոստովանի՛ր Նրան, իմ անձը փրկողն Աստվա՛ծն
է:

Սաղմոս 42

Դատի՛ր ինձ, Աստվա՛ծ, և դատաստանիս
ժամին արդարացրու ինձ:

Անսուրբ ազգից, մեղսագործ նենդ մարդուց
փրկի՛ր ինձ:

Դու ինձ ուժ տվողն ես, Աստուա՛ծ, ինչո՞ւ
ինձ մոռացար, ինչո՞ւ տխուր լինեմ, երբ թշնամիս
ինձ հալածի:

Առաքիր, Տե՛ր, Քո լույսն ու ճշմարտությունը,
որ ինձ առաջնորդեն ու հասցնեն Քո սուրբ լեռն
ու օթևանը:

**Մաից առաջի սեղանոյ Աստուծոյ առ
Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:**

**Խոստովան եղէց Քեզ օրհնութեամբ,
Աստուած, Աստուած իմ:**

**Արդ՝ ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ
ընդէ՞ր խոսվես զիս. յուսա՛ առ Աստուած,
խոստովանեա՛ Նմա, Փրկիչ երեսաց իմոց
Աստուած է:**

**Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Քարոզ

**Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.
ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:**

Մաղթանք

**Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:**

Ես կմոտենամ Աստծու սեղանին, Աստծուն՝
որ երջանկացնում է իմ երիտասարդությունը:
Գոհություն կմատուցեմ Քեզ օրհներգերով,
Աստված, Աստված իմ:

Արդ, ինչո՞ւ ես տրտմում, անձ իմ, կամ ինչո՞ւ
ես խռովեցնում ինձ. Հուսա՛ առ Աստված,
խոստովանի՛ր Նրան, իմ անձը փրկողն Աստվա՛ծն
է:

Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ
և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը.
ընդունի՛ր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր:

Մաղթանք

Օրհնությո՞ւն և փա՛ռք Հորը և Որդուն և
Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամեն:

ԱՂՕԹՔ

Յովնանու մարգարեին

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ
լուաւ Աստուած յանդնդոց դժոխոց աղաղակի
իմում:

Հուր, Տէ՛ր, ձայնի իմում, զի ընկեցեր զիս ի
խորս ծովու, եւ շրջանք գետոց պաշարեցին զիս:

Ամենայն զբօսանք Քո եւ ալիք Քո անցին ի
վերայ իմ, եւ ասացի թէ՝ Մերժեցայ ուրեմն
յերեսաց աչաց Քոց:

Արդ՝ իցէ՞ թէ յաւելից հայիլ ի տաճար սուրբ
Քո, զի հեղան զինեւ ջուրք մինչեւ յանձն իմ, եւ
անդունդք անհնարինք պաշարեցին զիս:

Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց, իջի
ես ի խորս երկրի եւ տեսի զնիգս նորա, զի էին
որպէս աղիք յաւիտենից. եւ ելցեն յապակա-
նութենէ կեանք իմ:

Առ Քեզ, Տէ՛ր Աստուած իմ, ի նուաղիլ անձին
իմոյ կարդացի եւ զՔեզ, Տէ՛ր, յիշեցի, եւ մտցեն
աղօթք իմ ի տաճար սուրբ Քո:

Զի ոյք պահէին զունայնութիւն եւ զստու-
թիւն, յողորմութենէ իւրեանց մերժեցան:

Այլ ես ի ձայն օրհնութեան խոստովան եղէց
Քեզ, մատուցից պատարագս Տեառն, եւ կատա-
րեցից զուխտ իմ ի փրկութեան:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՈԹՔ

Հովհան մարգարեի

Իմ նեղության մեջ ես աղոթեցի իմ Տեր Աստծուն, և Նա լսեց իմ աղաչանքը՝ դժոխքի խորքից:

Տե՛ր, լսիր իմ ձայնը. ինձ գցեցիր ծովի խորքերը, և ջրի հոսանքները պաշարեցին ինձ:

Քո կոհակներն ու ալիքները թափվեցին ինձ վրա, և ես մտածեցի, թե մերժվել եմ Քո՛ ներկայությունից. արդյոք նորից պիտի տեսնե՞մ Քո սուրբ տաճարը:

Զբերը թափվեցին ինձ վրա շունչս կտրելու աստիճան:

Խորունկ անդունդներ պաշարեցին ինձ:

Գլուխս մտավ լեռների փապարների մեջ, իջա մի երկիր, որի նիգերը փակ են հավիտյան. ես կփրկվեմ ապականությունից:

Երբ հոգիս տկարացավ, Քե՛զ դիմեցի, Տե՛ր իմ Աստված, մտաբերեցի Տիրոջը, և թող իմ աղոթքները հասնեն Քո սուրբ տաճարը:

Նրանք, որ ունայն ու սուտ աստվածներ էին պաշտում, թողեցին իրենց երկյուղածությունը:

Իսկ ես օրհնության և խոստովանանքի ձայնով Քեզ պիտի մատուցեմ այն պատարագը, որ ուխտեցի, և կարժանանամ Տիրոջ փրկությանը:

Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Եւ ի ծունկս անկեալ՝ սկսանին ողբաձայն

Ծարական ԴԿ. ԱՏ

A musical score for 'Gwam' featuring five staves of music with lyrics in Korean and English. The score includes vocal parts and a piano accompaniment. The lyrics are as follows:

3
Gam- pi hui- ri teu- l i np-
ηω- η πι η ui- ρι τευ- λι η πη-
aw- ubi- na me-
η αιδηνη- μη-
η αιδηνη- μη-
hi- pi ng ηaw- taw- u- taw- na- g ju-
η πη- η πη ηaw- taw- u- taw- na- g ju-
hi- pi ng ηaw- taw- u- taw- na- g ju-

Յարական

Զարհուրեալ դողացաւ ամենամեղ անձն իմ՝
լահեղ Քոց դատաստանաց յաններելի տանջա-
նացն:

(Երիցս կրկնեա):

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.
ընկալ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդոյ եւ
Հոգւոյն Արբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յավիտենից. ամէն:

Դարձեալ աղօքք Յովնանու մարզարէին:
Ի նեղութեան իմում (Էջ 80):

† † †

Ծնկելով սկսում են ողբաձալն

Յարական ԴԿ. ՍՏ

Զարհուրելով դողաց իմ մեղավոր անձը՝ Քո
ահեղ դատաստանից, աններելի տանջանքներից:
(Կրկնիր երեք անդամ):

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրողը.
ընդունիր, ապրեցրու և ողորմիր:

Մաղթանք

Օրհնություն և փա՛ռք Հորը և Որդուն և
Առւրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամէն

Կրկին աղօքք Հովնան մարզարեի:

Իմ նեղության մեջ (Էջ 81):

Ծարական ԴԿ. ԱՏ

Բան զի կա մա- ւ մե- ր- ծե-
ցա- յ ի ս մե- ս մե-
ծա- մե- ս մե-
ծա- մե- ս արդ
կա- յ ի տ- լ մը-
լի պա տու հա
լի պա տու սն :

Շարական

Քանզի կամաւ մերձեցայ ի մեղս մեծամեծս,
արդ կայ եւ մնայ ինձ աններելի պատուհասն:
(Երիցս կրկնեա):
Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.
ընկալ, կեցո՛ եւ ողորմեա՛:

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Արբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յավիտենից. ամէն:

Դարձեալ աղօքք Յովնանու մարզարէին:
Ի նեղութեան իմում (Էջ 80):

† † †

Շարական ԴԿ. ԱՏ

Քանի որ կամովին մոտեցա մեծամեծ
մեղքերին, ուրեմն կա և սպասում է ինձ
աններելի պատուհասը:
(Կրկնիր երեք անդամ):

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը.
ընդունիր, ապրեցրո՛ւ և ողորմիր:

Մաղթանք

Օրհնություն և փա՛ռք Հորը և Որդուն և
Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամեն:

Կրկին աղօքք Հովնան մարզարէի:
Իմ նեղության մեջ (Էջ 81):

Ծարական ԴԿ. ԱՏ

3

ս- ըդ ան կեա լ ա- ղա-

չե- օ

փը- ը կի- է ե լ բա-

յե- րա- ը խնա-

յեա յիս եւ ո- յու- դա-

ցեա- լս եւ ո- յու- ը մեա ինձ

բա- զմա- մե- ոի- ս :

Ծարական ԴԿ. ԱՏ

Արդ, անկեալ աղաչեմ,
Փրկի՛չ եւ Բարերար,
Խնայեա յիս՝ ի մեղուցեալս,
եւ ողորմեա՛ ինձ բազմամեղիս:
(Երիցս կրկնեա):

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ

† † †

Ծարական ԴԿ. ԱՏ

Այժմ Քո առջև ընկած աղաչում եմ,
Փրկի՛չ և Բարերար,
Խնայիր ինձ՝ մեղավորիս,
և ողորմի՛ր ինձ՝ բազմամեղիս:

(Կրկնիր երեք անգամ):

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հորը և Որդւն և
Սուրբ Հոգւուն այժմ

ԱՂՕԹՔ
Մանասէի թագաւորի
Տէր ամենակալ

*Տէ՛ր ամենակալ, Աստուած Աբրահամու,
Խսահակայ, Յակոբայ եւ զաւակի նոցա արդարոց.*

ամենակա՛լ Տէ՛ր, թող զմեղս իմ:

*Որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զամենայն
զարդ նոցա.*

ամենակա՛լ Տէ՛ր, թող զմեղս իմ:

*Որ կապեցեր զծով բանիւ հրամանի Քո,
փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր եւ փառա-
ւորեալ անուամբ Քով սրբով.*

ամենակա՛լ Տէ՛ր, թող զմեղս իմ:

*Որ ամենայն ինչ սարսի եւ դողայ յերեսաց
ահի զօրութեան Քո.*

ամենակա՛լ Տէ՛ր, թող զմեղս իմ:

*Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբու-
թեան Քո, սաստիկ է բարկութիւն սպառնակեաց
Քոց ի վերայ մեղաւորաց, անչափ եւ անքնին են
ողորմութիւնք աւետեաց Քոց.*

ամենակա՛լ Տէ՛ր, թող զմեղս իմ:

*Դու, Տէ՛ր, բարձրեալ, գթած, երկայնամիտ,
բազումողորմ եւ զղջանաս ի վերայ չարեաց
մարդկան.*

ամենակա՛լ Տէ՛ր, թող զմեղս իմ:

ԱՂՈԹՔ

Մանասե քազավորի

Տեր ամենակալ

Տե՛ր ամենակալ, Աստված Աբրահամի,
Իսահակի, Հակոբի և նրանց արդար զավակների.
ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:
Որ արարեցիր երկինքն ու երկիրը և նրանց
բոլոր զարդերը.
ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:
Որ կապեցիր ծովը Քո հրամանի խոսքով,
փակեցիր անդունդները, կնքեցիր Քո ահավոր և
փառավորյալ սուրբ անվամբ.
ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:
Որ ամեն ինչ սարսում է և դողում Քո
զորության ահից.
ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:
Անբավ է Քո սրբության փառքի մեծավայել-
չությունը, սաստիկ է Քո սպառնալիքների
բարկությունը մեղավորների հանդեպ, անչափ և
անքննելի են Քո ավետիսների ողորմություն-
ները.
ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:
Դու, Տե՛ր, բարձրյալ, գթած, համբերող, բա-
զումողորմ ես և ափսոսում ես մարդկանց՝ չա-
րիքների համար.
ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Դու, Աստուա՛ծ, ո՛չ եղեր ապաշխարութիւն
վասն արդարոցն՝ Աբրահամու, իսահակայ եւ
Յակոբայ, որք ոչ մեղան Քեզ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Այլ եղեր ապաշխարութիւն վասն իմ՝
մեղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ ծովու,
եւ բազմացան անօրէնութիւնք իմ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Զեմ արժանի Հայիլ եւ տեսանել զբարձրու-
թիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան
իմոյ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց
երկաթից, եւ ո՛չ գոյ ինձ Հանգիստ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Բարկացուցի զսրտմտութիւն եւ զչար առաջի
Քո արարի. կանգնեցի պատկեր եւ բազմացուցի
զցասումն անձին իմոյ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Եւ արդ, Տէ՛ր, խոնարհեցուցանեմ զծունը
սրտի իմոյ եւ Հայցեմ ի քաղցրութենէ Քումմէ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Մեղայ, Տէ՛ր, մեղայ, եւ զանօրէնութիւնս իմ
ես ինձէն գիտեմ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Դու, Աստվա՛ծ, չկարգեցիր ապաշխարություն արդարների՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի համար, որոնք չմեղանչեցին Քո հանդեպ.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Այլ ապաշխարություն կարգեցիր ինձ՝ մեղավորիս համար, քանզի մեղանչեցի ավելի քան ծովի ավագները, և բազմացան իմ անօրենությունները.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Արժանի չեմ նայելու և տեսնելու երկնքի բարձունքները իմ բազում անօրենությունների պատճառով.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Կորացել եմ ես երկաթե կապանքների բռնությունից և չունեմ հանգիստ.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Սաստկացրեցի զայրույթու և չարիք գործեցի Քո առջե, կուապատկեր կանգնեցրեցի և ավելացրեցի ցասումդի իմ անձի հանդեպ.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Եվ արդ, Տե՛ր, խոնարհեցնում եմ իմ սրտի ծունկը և հայցում Քո քաղցրությունից.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Մեղա՛, Տե՛ր, մեղա՛, իմ անօրենությունները ես ինքս գիտեմ.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Աղաչեմ եւ խնդրեմ ի Քէն, թող ինձ, Տէ՛ր,
թող ինձ եւ մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէ-
նութեան իմոյ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ, Տէ՛ր, եւ մի՛
յիշեր զչարիսն իմ, եւ մի պարտաւորեր զիս ընդ
իջեալսն ի ներքոյ երկրի չարեօք.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Զի Դո՛ւ, Աստուա՛ծ, Աստուած ապաշխարո-
ղաց ես, եւ յիս ցոյց զբարերարութիւնդ Քո, որ
անարժան եմ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան
Քում, եւ ես օրհնեցից զՔեզ զամենայն աւուրս
կենաց իմոց.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

ԶՔեզ, Տէ՛ր, օրհնեն ամենայն զուարթունք
երկնից, եւ Քո են փառք յաւիտեանս. ամէն:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղաչում և խնդրում եմ Քեզ, ներիր ինձ,
Տե՛ր, ներիր ինձ և կորստյան մի՛ մատնիր ինձ
ըստ իմ անօրենության.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Տե՛ր, հավիտյան մի՛ բարկանա ինձ վրա և
մի՛ հիշիր իմ չարիքները, մի դատապարտիր ինձ
նրանց հետ, ովքեր չարիքներով գերեզման մտան.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Քանի որ Դու, Աստված, ապաշխարողների
Աստվածն ես, ցույց տուր Քո բարերարությունը
և ինձ՝ անարժանիս.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Ապրեցրու ինձ ըստ Քո մեծ ողորմության, և
ես կօրհնեմ Քեզ իմ կյանքի բոլոր օրերում.

ամենակա՛լ Տեր, թողություն տուր մեղքերիս:

Քեզ են, Տե՛ր, օրհնում երկնքի բոլոր հրեշ-
տակները, և Քոնն է փառքը հավիտյանս. ամեն:

Փա՛ռք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ
և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Եւ ի ծունկս ամկեալ՝ սկսամին ողբաձայն

Օարական ԴԿ. ԱՏ

The musical score consists of five staves of music in common time, treble clef, and key signature of one sharp. The lyrics are written below each staff.

U- մե- նա- կա- l
քա- և եա զգ մե- դըս
ի- մ զի Ա- ստ- ուա- ծ ե-
ս ա-
պա- շ- խա- րո- դա- ց:

Ծարական ԴԿ. ԱՏ

Ամենակա՛լ, քաւեա զմեղս իմ,
զի Աստուա՛ծ ես ապաշխարողաց:
(Երիցս կը կնեա):

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ՝՝

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ ՝՝

Ապա դարձեալ ասեն աղօթք

Տէ՛ր ամենակալ, Աստուած (Էջ 88):

† † †

Ծարական ԴԿ. ԱՏ

Ամենակա՛լ, քավիր իմ մեղքերը,
քանզի ապաշխարողների Աստվածն ես:
(Կը կնիր երեք անգամ):

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը ՝՝

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հորը և Որդւուն և
Սուրբ Հոգուն այժմ ՝՝

Դարձյալ ասում են աղօթք

Ամենակալ Տէ՛ր, Աստված (Էջ 89):

Ծարական ԴԿ. ԱՏ

A musical score consisting of five staves of music. The lyrics are written below each staff:

- Top staff: Ե - ւ զին - զի - դ սու - ոք մի
- Second staff: հա - նե - ը յի - նէ - ն զի
- Third staff: Ա - ստ ուշ - ծ ե
- Fourth staff: ս ա -
- Bottom staff: պա - 2 խա - բո - դա - ց:

Ծարական ԴԿ. ԱՏ

Եւ զՀոգիդ Սուրբ մի՛ հաներ յինէն.
զի Աստուած ես ապաշխարողաց:
(Երիցս կրկնեա):

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ՝՝

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ ՝՝

Ապա դարձեալ ասեան աղօթք
Տէ՛ր ամենակալ, Աստուած (Էջ 88):

† † †

Ծարական ԴԿ. ԱՏ

Եվ Քո Սուրբ Հոգին մի՛ հանիր ինձնից,
քանզի ապաշխարողների Աստվածն ես:
(Կրկնիր երեք անգամ):

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը ՝՝

Մաղթանք

Օրհնութիւն և փա՛ռք Հորը և Որդուն և
Սուրբ Հոգուն այժմ ՝՝

Դարձյալ ասում են աղօթք
Ամենակա՛լ Տեր, Աստված (Էջ 89):

A musical score for soprano voice and piano. The vocal part consists of continuous eighth-note patterns. The piano part features eighth-note chords and sixteenth-note patterns. The lyrics are written below the notes.

Notes:

- Measure 1: t -
- Measure 2: l ψø-
- Measure 3: r- kba
- Measure 4: qh- u
- Measure 5: ju- hø-
- Measure 6: qhø hø-
- Measure 7: nn jø qh u- um oia- δ b
- Measure 8: u w-
- Measure 9: apw- 2 hñw- nn ηw- g:

Յարական ԴԿ. ԱՏ

Եւ փրկեա՛ զիս յահագին հրոյն,
զի Աստուած ես ապաշխարողաց:
(Երիցս կրկնեա):

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ՝՝

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ այժմ ՝՝

† † †

Յարական ԴԿ. ԱՏ

Եվ փրկի՛ր ինձ սարսափելի հրից,
քանզի ապաշխարողների Աստվածն ես:
(Կրկնիր երեք անգամ):

Քարոզ

Նաև խաղաղության համար աղաչենք Տիրոջը ՝՝

Մաղթանք

Օրհնութիւն եւ փա՛ռք Հորը և Որդուն և
Սուրբ Հոգուն այժմ ՝՝

Աղաչեմ եւ խնդրեմ ի Քէն, Տէ՛ր, թող ինձ
զմեղս իմ:

Բազումողորմ Տէ՛ր, ողորմեա ինձ:
Աստուած, քաւեա զիս՝ զմեղաւորս ի մեղաց
եւ կեցո՛:

Արարի՛չ իմ եւ յո՛յս Աստուած, գթա՛ յիս՝ ի
մեղուցեալ ծառայս, եւ ողորմեա ինձ՝ բազմա-
մեղիս:

Ամէնօրհնեալ սրբուհի եւ միշտ կո՛յս
Աստուածածին Մարիամ, բարեխօսեա առ Տէր
վասն իմ՝ մեղաւորիս:

Ամենայն սուրբք Աստուծոյ, բարեխօսեցէ՛ք
առ Հայր ի յերկինս վասն մեր՝ մեղաւորաց:

Քրիստո՛ս՝ Որդի՛ Աստուծոյ անոխակալ,
ընկալ զաղաչանս մեր, զի ի Քեզ են ապաւինեալ
անձինք մեր:

Յաղթող զօրութեամբ՝ սուրբ եւ կենդանարար
եւ պատուական Խաչիւ Քով, Տէ՛ր, պահպանեա՛
զմեզ:

Առաքեա, Տէ՛ր, զհրեշտակ խաղաղութեան Քո,
որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ եւ ի
գիշերի:

Եւ մարդասիրութեամբ Քո յիշեա՛ զմեզ, Տէ՛ր,
յիշեա՛ զմեզ, յորժամ գաս արքայութեամբ Քո,
եւ ողորմեա՛ մեզ:

Աղաչում և խնդրում եմ Քեզ, Տե՛ր, ների՛ր
իմ մեղքերը:

Բազումողորմ Տե՛ր, ողորմիր ինձ:

Աստվա՛ծ, քավի՛ր ինձ՝ մեղավորիս մեղքերից
և ապրեցրու ինձ:

Արարի՛չ և հո՛ւյս իմ Աստված, գթա՛ ինձ՝
մեղավոր ծառայիս, և ողորմիր բազմամեղիս:

Ամենօրհնյալ սրբուհի և միշտ կո՛ւյս Աստվա-
ծածին Մարիամ, բարեխոսիր Տիրոջը ինձ՝
մեղավորիս համար:

Աստծու բոլոր սրբեր, բարեխոսե՛ք Հորը, որ
երկնքում է, մեզ՝ մեղավորներիս համար:

Քրիստո՛ս՝ Աստծու Որդի անոխակալ, ընդու-
նիր մեր աղաչանքները, քանզի Քեզ են
ապավինել մեր անձերը:

Քո սուրբ, կենդանարար և պատվական Խաչի
հաղթող զորությամբ, Տե՛ր, պահպանի՛ր մեզ:

Առաքիր, Տե՛ր, Քո խաղաղության հրեշտա-
կին, որ անխռով պահի մեզ օր ու գիշեր:

Եվ Քո մարդասիրությամբ հիշի՛ր մեզ, Տե՛ր,
երբ գաս Քո արքայությամբ, հիշի՛ր մեզ, Տե՛ր, և
ողորմի՛ր:

ՔԱՐՈԶ

Եկեալքս ի խոստովանութիւն ապաշխարութեան՝ հաւատով զյոյս Միածնի Որդւոյն Աստուծոյ դիցուք ի սիրտս մեր՝ խնդրելով ի Նմանէ զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց:

Վասն զի Նա Ինքն է նախախնամողն Աստուած յաւիտենական, որ եկն կամաւ Հօր ի փրկել զարարածս եւ ասաց՝ զինքն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց՝ չնորհելով զհանգիստ աշխատելոց, ընդունելով զծանրաբեռնեալքս եւ զտաժանեալքս մեղօք յապաշխարութիւն քաւութեան:

Արդ, եկա՛յք ամենեքեան, խոնարհեալ անձամբք, բեկեալ սրտիւք, անկցուք եւ լացցուք առաջի Տեառն Արարչին մերոյ, զի անցուացէ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութամբն իւրով:

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

ՔԱՐՈԶ

Հավատով՝ ապաշխարության խոստովանության եկածներս, Աստծու Միածին Որդու հույսը մեր սրտերում՝ Նրանից խնդրենք մեր հանցանքներին քավություն և թողություն։

Քանի որ նա ինքն է հավիտենական նախախնամող Աստված, որ Հոր կամքով եկավ արարածներիս փրկելու և ասաց, որ ինքն է մեղավորների քավիչը, ապաշխարողների հույսը. տառապածներին հանգիստ շնորհելով՝ ընդունում է մեղքերով ծանրաբեռնվածներիս, տանջվածներիս ապաշխարությունը՝ որպես քավություն։

Այժմ եկե՛ք բոլորս՝ խոնարհված հոգով, փշրված սրտով, մեր Արարիչ Տիրոջ առջե խոնարհվենք և լաց լինենք, որ իր բարերարությամբ մեզնից հեռացնի մեր հանցանքների ահարկու սպառնալիքները։

Ամենակալ Տե՛ր Աստված մեր, ապրեցրո՛ւ և ողորմի՛ր։

ԱՂՕԹՔ

Տէ՛ր Աստուած փրկութեան մերոյ, որ
ողորմածդ ես եւ գթած, երկայնամիտ, բազում-
ողորմ եւ զղջանաս ի վերայ չարեաց մարդկան,
որ ո՛չ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ
նորա ի չար ճանապարհէն եւ զկեալն:

Դու, Տէ՛ր, առատ ողորմութեամբ Քով
մխիթարեա՛ զծառայսս Քո եւ տո՛ւր սոցա տեղի
ապաշխարութեան: Հաշտեա՛ մարդասիրու-
թեամբ Քով եւ արա՛ զսոսա անդամս Եկեղեցւոյ
Քում սրբոյ: Որպէս զի առողջացեալք հոգւով՝
խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ
մտցեն յԵկեղեցի Քո սուրբ, եւ ընդ ժողովրդեան
Քում Քեզ հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր
եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա ասեան ողբաձալն. ի լման

Սաղմոս Ծ (Հջ 12)

ԿՅ. Ցողեա՛ յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց, լուա՛,
եւ քան զձիւն սպիտակ եղէց:

ՓԽ. Ողորմեա ինձ...

ԱՂՈԹՔ

Տե՛ր Աստված՝ Փրկի՛չ մեր, որ ողորմած ես և գլխած, երկայնամիտ, բազումողորմ, ցավում ես մարդկանց չարիքների համար, չես կամենում մեղափորի մահը, այլ կամենում ես նրա դարձը չար ճանապարհից և ապրելը:

Դու, Տե՛ր, Քո առատ ողորմությամբ միսիթարի՛ր Քո ծառաներին և տո՛ւր նրանց ապաշխարության հնարավորություն։ Հաշտվի՛ր Քո մարդասիրությամբ և դարձրո՛ւ նրանց Քո սուրբ Եկեղեցու անդամները։ Որպեսզի հոգով առողջացածները՝ խոստովանությամբ և ապաշխարությամբ մտնեն Քո սուրբ Եկեղեցին, Քո ժողովրդի հետ միասին Քեզ առաքեն օրհնություն և փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

Եվ ապա ասում եմ ողբաձայն. լրիվ

Սաղմոս 50 (Էջ 13)

ԿՅ. Ցողի՛ր ինձ մշտիկով, և մաքուր կլինեմ, լվա՛, և ձյունից էլ սպիտակ կլինեմ։

ՓԽ. Ողորմիր ինձ...

Հնդերցուածս յԵսային մարգարէէ

(Գլ. Կ. 20-22)

Եւ կատարեսցին աւուրք սպոյ քո:

**Եւ ժողովուրդ քո ամենեքին արդար, եւ
յաւիտեանս ժառանգեսցեն զերկիր, պահել
զնորատունկ գործոց ձեռաց իւրեանց ի փառս:**

**Սակաւաւորն հազարաւոր եղիցի, եւ կրտ-
սերն՝ յազգ մեծ, զի ես՝ Տէր, ընդ ժամանակս
ժամանակս ժողովեցից զնոսա:**

Հնդերցուածս յԵզեկիէլ մարգարէէ

(Գլ. ԼԶ. 24-31)

Այսպէս ասէ Տէր.

**Եւ առից զձեզ ի չեթանոսաց. եւ ժողովեցից
զձեզ յամենայն ազգաց եւ տարայց զձեզ յերկիրն
ձեր: Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ եւ
սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց, եւ
յամենայն կոոց ձերոց սրբեցից զձեզ: Եւ տաց
ձեզ սիրտ նոր, եւ ոգի նոր նորոգեցից ի ձեզ, եւ
հանից զսիրտն քարեղէն ի մարմնոց ձերոց եւ
տաց ձեզ սիրտ մարմնեղէն:**

**Եւ զՈ՛գի իմ տաց ձեզ. եւ արարից՝ զի
յարդարութիւնս իմ զնասսջիք, եւ զիրաւունս իմ
պահիցէք եւ առնիցէք զնոսա. եւ բնակիցէք
յերկրին, զոր ետու հարցն ձերոց, եւ դուք եղիջիք
ինձ ի ժողովուրդ, եւ ես եղէց ձեզ յԱստուած:**

Հնդերցվածքը Եսայու մարզարեռությունից է

(Գլ. 60, 20-22)

Քո սգո օրերը պիտի վերջանան:

Քո ժողովուրդը բոլորովին արդար պիտի լինի՝
և հավիտենապես պիտի ժառանգի երկիրը՝
պահպանելով իր նոր տունկը՝ իր ձեռքի գործը,
հանուն իմ փառքի:

Սակավաթիվը հազարավոր պիտի դառնա,
փոքրը՝ մեծ ազգ, քանզի Ես՝ Տերս, ժամանակ առ
ժամանակ պիտի հավաքեմ նրանց:

Հնդերցվածքը Եզեկիելի մարզարեռությունից է

(Գլ. 36, 24-31)

Այսպես է ասում Տերը.

Ես վերցնելու եմ ձեզ հեթանոսների միջից,
հավաքելու եմ ձեզ բոլոր ազգերի միջից ու
տանելու եմ ձեզ ձեր երկիրը: Ձեզ վրա սուրբը
ջուր եմ ցանելու և դուք մաքրվելու եք ձեր բոլոր
պղծություններից. ձեր բոլոր կուռքերից
մաքրելու եմ ձեզ: Նոր սիրտ եմ տալու ձեզ, նոր
հոգի եմ դնելու ձեր մեջ. ձեր մարմիններից
հանելու եմ քարեղեն սիրտն ու մարմնեղեն սիրտ
եմ տալու ձեզ:

Իմ Հոգին եմ տալու ձեզ. և այնպես եմ
անելու, որ իմ արդարության ճանապարհով
ընթանաք, օրենքներս պահեք ու կատարեք
դրանք, բնակվեք այն երկրում, որ տվել էի ձեր
հայրերին, եւ դուք ինձ համար ժողովուրդ
կլինեք, և Ես ձեզ համար՝ Աստված:

Եւ զերծուցից զձեզ յամենայն պղծութեանց ձերոց. Եւ կոչեցից զցորեան եւ բազմացուցից զնա եւ ոչ ածից ի վերայ ձեր սով։ Եւ բազմացուցից զպտուղ ծառոց եւ զարդիւնս անդոց, զի մի՛ եւս ընդունիցիք զնախատինս սովոյ ի մէջ ազգաց։ Եւ յիշեսջիք զճանապարհն ձեր չարս եւ զգնացս ձեր զանբարիս, եւ տաղտկասջիք յերեսաց անօրէնութեանցն ձերոց եւ ի գարշելեացն ձերոց։

Պողոսի Առաքելոյն յԵրրապեցոց թղթոյն է

ընթերցուածս (Գլ. Ժ. 19-31)

Ունիմք այսուհետեւ, եղբա՛րք, համարձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի, զոր նորոգեաց մեզ զճանապարհ նորոգ եւ կենդանի ի ձեռն վարագուրին, այսինքն է՝ մարմնոյն իւրոյ։ Եւ Քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ՝ մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց եւ մկրտեալ զմարմին ի ջուրն սրբութեան։ Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է, որ խոստացաւն։ Եւ զգուշացուք միմեանց յորդորմամբք սիրոյ եւ գործոց բարեաց։ Եւ մի՛ թողցուք զժողովս միմեանց, որպէս եւ սովոր են ոմանք, այլ միսիթարեսցուք, եւ այնչափ եւս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ։

Ազատելու եմ ձեզ ձեր բոլոր պղծություններից. դիմելու եմ ցորենին ու բազմացնելու եմ այն և ձեզ սովի չեմ մատնելու: Շատացնելու եմ ծառերի պտուղներն ու հանդերի բերքը, որպեսզի ազգերի մեջ այլևս սովի նախատինքը չստանաք: Հիշելու եք ձեր չար ճանապարհներն ու ձեր ոչ բարի ընթացքը, և դուք զզվելու եք ձեր բոլոր անօրենություններից ու գարշելի արարքներից:

Հնօթերցվածքը Պողոս առաքյալի՝ երրայեցի Աներիհ
ուղղված թղթից է (Գլ. 10, 19-31)

Եղբայրնե՛ր, ուրեմն համարձակություն ունենք Հիսուսի արյամք մտնելու սրբարանից ներս այն նոր և կենդանի ճանապարհով, որ Նա բացեց մեզ համար վարագույրի միջով, որ է իր մարմինը. և մեծ Քահանա ունենալով Աստծու տան վրա՝ մոտենանք ճշմարիտ սրտով, հավատի լիությամք՝ սրտներս մաքրած չար խղճմտանքից և մեր մարմինը լվացած մաքուր ջրով: Ամուր պահենք անխախտ հույսի դավանությունը, քանի որ հավատարիմ է Նա՝ Ով խոստացավ. և հոգ տանենք միմյանց՝ սիրո և բարի գործերի հորդորելով. և զանց չառնենք մեկտեղ հավաքվելը, ինչպես որ սովոր են անել ոմանք, այլ խրախուսենք միմյանց, և այդ այնքան ավելի՝ որքան տեսնում եք Տիրոջ օրվա մոտենալը:

Զի կամակար մտօք եթէ յանցանիցեմք յետ
ընդունելութեան գիտութեան ճշմարտութեանն,
այնուհետեւ ո՛չ եւս պիտոյ է վասն մեղաց
պատարագ. այլ ահեղ ակնկալութիւն դա-
տաստանին եւ նախանձ հրոյն, որ ուտիցէ
զհակառակորդսն: Արհամարհեալ ուրուք
զօրէնսն Մովսիսի, առանց ողորմութեանց առ
երկուք կամ երիւք վկայիւք մեռանէր: Իսկ արդ՝
ո՛րչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք
զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար եւ¹
զարիւն Նորոյ Ուխտին խառնակ համարեցաւ
որով եւ սրբեցաւն, եւ զՀոգին շնորհաց
թշնամանեաց: Այլ գիտեմք զԱյն, որ ասացն. «Իմ
են վրէժիսնդրութիւնք, եւ ես հատուցից», - ասէ
Տէր. եւ դարձեալ թէ՝ «Դատի Տէր զժողովուրդ
իւր»: Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ
կենդանւոյ:

Ալէլուիա՝, ալէլուիա՝

Սաղմոս ԽԱ (Էջ 74) ի լման ասա

Որպէս փափագէ եղջերու...

*Ալէլուիա՝ օրթէ
Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի,
որ ըստ Ղուկասու (Գլ. Է. 36-50)
զՏէրն մեր Յիսուս Քրիստոս*

Քանզի եթե կամավոր կերպով ենք մեղան-չում ճշմարտությունն իմանալուց և ընդունելուց հետո, ուրեմն մեղքերի քավության համար այլևս ուրիշ զոհ չի մնում, այլ մնում է դատաստանի ահեղ սպասումը և կրակի կատաղությունը, որ լափելու է Աստծու հակառակորդներին: Մովսեսի օրենքը արհամարհած մեկին անողորմաբար սպանում էին երկու կամ երեք մարդու վկայությամբ: Իսկ որչա՞փ ավելի խիստ պատժի արժանի պիտի համարեք նրան, ով ոտնահարել է Աստծու Որդուն և անմաքուր համարել նոր Ուխտի արյունը, որով մաքրվել է ինքը և անարգել շնորհի Հոգին: Արդարեւ, ճանաչում ենք նրան, Ով ասաց. «Իմն են վրեժինդրությունները, և ես պիտի հատուցեմ», - ասում է Տերը: Եվ դարձյալ. «Տերը պիտի դատի իր ժողովրդին»: Ահավոր է ընկնել կենդանի Աստծու ձեռքը:

Ալելուիա՝, ալելուիա՝

Սաղմոս 41 (Էջ 75) լրիվ ասա

Ինչպես եղջերուն ջրի...

Ալելուիա՝ օրթի՛

**Հիսուս Քրիստոսի Սուրբ Ավետարանը
ըստ Ղուկասի (Գլ. 7, 36-50)**

Տեր մեր Հիսուս Քրիստոս

Աղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ
ճաշ ընդ նմա. եւ մտեալ ի տուն փարիսեցւոյն՝
բազմեցաւ: Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր.
իբրեւ գիտաց թէ բազմեալ է ի տան փարի-
սեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ նարդեան ազնուի՝
կայր յետոյ առ ոտան նորա, լայր. եւ արտա-
սուօքն սկսաւ թանալ զոտս նորա եւ հերով գլխոյ
իւրոյ ջնջէր, եւ համբուրէր զոտս նորա եւ օծանէր
իւղովն:

Եւ տեսեալ փարիսեցւոյն, որ կոչեաց զնա՝
ասէր ընդ միտս իւր. «Սա թէ մարգարէ ոք էր,
ապա գիտէր, թէ ո՞վ եւ ո՞րպիսի ոք կին մերձենայ
ի Սա. զի մեղաւոր է»:

Պատասխանի ետ թիսուս եւ ասէ ցնա.

-Սիմօն, ունիմ ինչ ասել քեզ:

Եւ նա ասէ.

-Ասա՛, Վա՛րդապետ:

Եւ ասէ.

-Երկու պարտապանք էին ուրումն փոխա-
տուի. մինն պարտիւր հինգ հարիւր դահեկան,
եւ միւսն՝ յիսուն: Եւ իբրեւ ո՛չ գոյր նոցա
հատուցանել, երկոցունց շնորհեաց. արդ ասա՛
ո՞վ առաւել սիրեսցէ զնա:

Ասէ Սիմօն.

-Ինձ այսպէս թուի, թէ որում զբազումն
շնորհեաց:

Եւ նա ասէ ցնա.

-Ուղի՛ղ դատեցար:

Փարիսեցիներից մեկը աղաչում էր Նրան, որ
իր հետ ճաշ ուտի. և նա մտնելով փարիսեցու
տունը՝ սեղան նստեց: Եվ քաղաքում մի մեղավոր
կին կար, երբ նա իմացավ, որ փարիսեցու տանը
սեղան է նստել, մի շիշ ազնիվ յուղ բերելով՝
կանգնեց Հիսուսի ետև, Նրա ոտքերի մոտ, և լաց
էր լինում ու սկսեց արտասուքներով թրջել Նրա
ոտքերը և իր գլխի մազերով սրբում էր,
համբուրում էր Նրա ոտքերը և այդ յուղով՝
օծում: Իսկ փարիսեցին, որ Նրան հրավիրել էր,
տեսնելով այդ, իր մտքում ասում էր. «Եթե Սա
մարդարե լիներ, ապա կիմանար, թե ով կամ
ինչպիսի մի կին է մոտենում իրեն, որովհետեւ
նա մեղավոր է»:

Հիսուս պատասխանեց նրան – ասաց.

- Աի՛ մոն, քեզ ասելու բան ունեմ:

Եվ սա ասաց. «Ասա՛, Վա՛րդապետ»:

Եվ Հիսուս ասաց.

- Մի փոխատու երկու պարտապան ուներ.
մեկը հինգ հարյուր դահեկան պարտք ուներ, իսկ
մյուսը՝ Հիսուն: Եվ քանի որ նրանք հատուցելու
ոչինչ չունեին, երկուսին էլ պարտքը չնորհեց.
Հիմա ասա՞ ո՞վ ավելի շատ կսիրի նրան:

Սիմոնն ասաց.

- Ինձ այնպէս է թվում, թե նա՝ ում ավելի
շատը չնորհվեց:

Եվ Հիսուս ասաց նրան.

- Ուղի՛ղ դատեցիր:

Եւ դարձեալ ի կինն կողմն, ասէ ցՍիմօն՝
-Տեսանե՞ս զայս կին. մտի ի տուն քո, ջուր
ոտից իմոց ո՛չ ետուր. իսկ սա արտասուօք իւրվք
եթաց զոտս իմ եւ հերով իւրով ջնջեաց։ Համբոյր
մի դու ո՛չ ետուր ինձ, սա աւասիկ յորմէ հետէ
մտեալ եմ, ո՛չ դադարեաց ի համբուրելոյ զոտս
իմ։ Իւղով զգլուխ իմ ո՛չ օծեր, սա իւղով անուշիւ
էօծ։ Վասն որոյ ասեմ քեզ՝ թողեալ լիցին սմա
մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց. զի որում
շատ թողուցու՝ շատ սիրէ, եւ որում սակաւ՝
սակաւ։

Եւ ասէ ցնա.

-Թողեալ լիցին քեզ մեղք քո։

Եւ սկսան, որ բազմեալն էին ընդ նմա, ասել
ընդ միտս իւրեանց. «Ո՞վ է Սա, որ զմեղս թողու»։
Եւ նա ասէ ցկինն.

-Հաւա՛տք քո կեցուցին զքեզ, ե՛րթ ի
խաղաղութիւն։

ՔԱՐՈԶ

Լուիցէ Տէ՛ր ձայնի աղաչանաց մերոց.
Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ եւ
ողորմեա՛։

Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա։

Եվ դառնալով կնոջ կողմը՝ Սիմոնին ասաց.

-Տեսնո՞ւմ ես այս կնոջը. մտա քո տունը,
ոտքերիս համար ջուր չտվի՛ր, իսկ սա իր
արտասուքներով թրջեց իմ ոտքերը և իր
մազերով սրբեց: Դու ինձ մի համբույր էլ չտվի՛ր,
սակայն սա ահա տուն մտնելուցս ի վեր չի
դադարում ոտքերս համբուրելուց: Դու յուղով
իմ գլուխը չօծեցի՛ր, սա անուշ յուղով ոտքերս
օծեց: Դրա համար քեզ ասում եմ՝ իր անհամար
մեղքերը կներվեն սրան, որովհետեւ ուժգին
սիրեց. քանզի ում շատ է ներվում, շատ է սիրում,
և ում սակավ՝ սակավ:

Եվ ասաց այն կնոջը.

-Քո մեղքերը քեզ ներված են:

Եվ նրանք, որ նրա հետ սեղան էին նստել,
սկսեցին ասել իրենց մտքում. «Ո՞վ է Սա, որ
մեղքերին թողություն է տալիս»:

Եվ նա ասաց այդ կնոջը.

-Քո հավա՛տը քեզ փրկեց, գնա՛ խաղաղու-
թյամբ:

ՔԱՐՈԶ

Թող լսի Տե՛րը մեր աղաչանքները.

Ամենակալ Տե՛ր Աստված մեր, ապրեցրո՛ւ և
ողորմի՛ր.

Տե՛ր, ողորմիր, Տե՛ր, ողորմիր, Տե՛ր, ողորմիր:

Եւ ապա կարդա զաղօթս զայս

Սրբոյն Բարսηի

Տէ՛ր Աստուած, Հա՛յր ամենակալ, Արարի՛չ
երկնի եւ երկրի, որ յակնարկել բարերար կամաց
Քոց՝ գոյացուցեր զամենայն արարածս՝ զե-
րեւելիս եւ զաներեւոյթս, զերկնայինս եւ
զերկրայինս. եւ նախախնամութեամբ Քով
ստեղծեր զմարդն ի հողոյ. եւ ըստ պատկերի
բարերարութեանդ պատուեալ մեծարեցեր զնա՝
շնորհելով նմա զանմահութիւն եւ զանապական
կենդանութիւն, եւ ինքնիշխան կամօք եւ փառօք
զարդարեալ պսակեցեր՝ պարգեւելով նմա
զվայելումն ուրախութեան դրախտին փափ-
կութեան՝ գործել զնա եւ պահել. եւ հանապազ
մշտնջենաւորիլ յանանց եւ յանճառ պարգեւսն,
եւ յառաջանալ օրըստօրէ ի գործս բարիս. եւ
յաւելեր նմա զպատուիրանադրութիւն կենսաբեր
հրամանի բարերար կամաց Քոց. զի յաւելուածով
մեծի պատուիրանին դրութեամբ՝ առաւել
յաւելուածով մեծի փառաց եւ պատուոյ՝ զնա
ճոխացուցանէիր. եւ ի ձեռն բարեյօժար կամացն
հնազանդութեան, յեւս առաւել ի գերակատար
կեանսն զնա վերափոխէիր՝ յիմանալի կայանս
բնակութեան Վերինն երուսաղեմի:

ԱՂՈԹՔ

Սուրբ Բարսեղի

ՏԵՇ Աստված, Հայր ամենակալ, Արարի՛չ
երկնքի և երկրի, որ Քո բարերար կամքի ակ-
նարկությամբ գոյացրիր բոլոր արարածներին՝
երելի և աներեռույթ, երկնային և երկրային. Քո
նախախնամությամբ ստեղծեցիր մարդուն հողից
և Բարերարիդ պատկերով մեծարեցիր նրան՝
շնորհելով անմահ և անապական կյանք։
Ինքնիշխան կամքով ու փառքով պսակեցիր
նրան՝ պարգևելով փափկության դրախտի
ուրախության վայելքը, որպեսզի նա մշակի և
պահպանի այն, մշտնջենապես վայելի անանց ու
անձառելի պարգևները և օրըստօրե առաջադիմի
բարի գործերի մեջ։ Եվ ի հավելումն դրա, Քո՛
բարերար կամքի հրամանով կենսաբեր պատ-
վիրանը տվեցիր նրան, որպեսզի Քո մեծ պատ-
վիրանդրությամբ առավել մեծ փառքով ու
պատվով ճոխացնեիր նրան և իր բարեհոժար
կամքի հնազանդության միջոցով վերափոխեիր
առավել գերակատար կյանքի՝ Վերին երու-
սաղեմի իմանալի կայաններում։

Իսկ նա ի ձեռն օձապատիր չարին խաբէութեան, զգործի կենացն եւ զպատճառս բարեացն՝ անձնիշխան յօժարութեամբն ի կողմն բանսարկուին դարձուցեալ, եւ ինքնայօժար կամօքն գործակցեալ խաբէութեան չարին՝ ի բաց շեղեցաւ ի Քումմէ արարչադիր եւ ի կենսաբեր պատուիրանադրութենէդ. եւ ի ներքոյ անկեալ չարին հնազանդութեան՝ նախամեծար առնելով զվրիպական բանս պատրող թշնամւոյն քան զՔո աստուածային օրէնսդրութիւնն. կնոջն լսելով խրատու, կորոյս զտիրական վեհ իմաստութիւնն՝ ոտիցն հնազանդեալ գլխոյն առաջնորդական տէրութեամբն՝ անհանճարաբար եւ անխորհրդապէս ի բաց մերկացեալ զբոցաճաճանչ եւ զլուսեղէն զարդարանսն. եւ հակառակաբար հայթայթանօք ջանայր ծածկել զամօթալիր մերկութիւնն պատառոտուն տերեւովն անյուսացեալ ի զօրութիւն ամենակալիդ՝ կարծէր թաքչիլ յամենատես գիտութենէ աստուածութեան Քոյ՝ պատճառելով զպատճառս մեղացն, թէ՝ «Կինս, զոր ետուր ինձ, սա եղեւ պատճառ»:

Վասն որոյ, զանիծից եւ զցաւոց ժառանգեաց զկեանս, ի ներքոյ անկեալ մահու եւ ապականութեան. ըստ անսուտ եւ աստուածական Քում

Իսկ նա օձապատիր չարի խաբեռությամբ, կյանքի ու բարիքների պատճառը անձնիշխան հոժարությամբ բանսարկուի կողմը դարձրեց և ինքնահոժար կամքով գործակցելով չարի խաբեռությանը՝ հեռացավ Քո արարչադիր և կենսարեր պատվիրանից և հնազանդվելով չարին՝ թշնամու խաբեպատիր խոսքերը նախընտրեց Քո աստվածային օրինադրությունից: Կնոջ խրատին անսալով՝ կորցրեց տիրական վեհ իմաստությունը, ոտքին հնազանդեցնելով գլխի առաջնորդական իշխանությունը՝ անմտորեն և անխոհեմաբար մերկացավ բոցաճաճանչ ու լուսեղեն զարդարանքից, և հույսը կտրելով Ամենակալի զորությունից, հակառակաբար ջանաց ծածկել ամոթալի մերկությունը պատառութված տերեւով՝ կարծելով, թե թաքնվում է Քո Աստվածության ամենատես գիտությունից, և իր մեղքի համար պատճառ բռնեց, թե. «Կինը, որ տվեցիր ինձ, նա՛ եղավ պատճառ»:

Այդ պատճառով էլ, անեծքով ու ցավով կյանքը ժառանգեց և ընկավ մահվան ու ապականության գիրկը՝ ըստ Քո աստվածային

հրամանիդ, ասելով թէ՝ «Յորում աւուր ուտիցես ի նմանէ, մահու մեռանիցիս». որով եւ թագաւորեալ տիրեաց ի վերայ մեր իշխանն մահու. եւ զբնութիւնս մեր գրաւեալ ինքեան հնագանդութեամբ պահակն կորստեան. եւ զամենեսեան ծառայս իւր արարեալ, վարեաց ի գործս խիստս ծառայութեան դժոխոց:

Իսկ Դու` Հայր բարեգութ, յառատ եւ յանբաւ մարդասիրութենէ Քումմէ յաղթեալ, ո՛չ հանդուրժեցեր տեսանելով զանարատ ձեռաց Քոց ստեղծուած՝ յայնպիսի վտանգաւոր աղէտս տարակուսանաց: Այլ բարեգորովեալ հայրախնամ սիրով Քո՛ գթացար յորդիս մարդկան եւ յայց ելեր կորուսելոյն. առաքեցեր ի խնդիր զՄիածին եւ զէակից Քո՝ զծոցածին եւ զանբաժանելի Բանն Աստուած, որ եկն եւ էառ զկերպարանս գձութեան աղքատացեալ բնութեանս մերոյ՝ ներմարդացեալ ի սուրբ եւ յանարատ կուսէն Մարիամայ Աստուածածնէն. եւ յանձն իւր էառ զյանցանս սխալման մեղանացն Աղամայ. եւ աստուածախնամ տեսչութեամբն իւր տնօրինեալ զամենայն կիրս մարդկայինս յանձին իւրում, բաց ի մեղաց, եղեւ պտուղ մարդկութեանս:

Հովիւն երկնաւոր եկն խնդրել զոչխարն մոլորեալ ի վերայ լերին բարձու. եւ առեալ զնա

և անսուտ հրամանի, որ ասում է. «Այն օրը, երբ
ուտես դրանից՝ կմեռնես»: Հստ որի և մեզ վրա
թագավորեց մահվան իշխանը՝ կորուսյալների
պահակը, իր ենթակայության տակ առնելով մեր
բնությունը, ամենքին դարձրեց իր ծառաները և
լծեց դժոխքի ծառայության խիստ գործին:

Բայց Դու, բարեգութ Հայր, հաղթվելով Քո
առատ ու անբավ մարդասիրությունից՝ չդի-
մացար՝ տեսնելով Քո անարատ ձեռքով
ստեղծածին՝ տարակուսանքների այդպիսի
վտանգավոր աղետի մեջ: Այլ Քո՛ հայրախնամ
սիրով հույժ գորովելով՝ գթացիր մարդկանց
որդիներին և ելար փնտրելու կորուսյալին.
առաքեցիր Քո Միաձնին ու Էակցին՝ Քո ծոցածին
ու անբաժանելի Բանն Աստծուն, որ եկավ և մեր
աղքատացած բնության կերպարանքն առավ,
ճշմարտապես մարդացավ սուրբ և անարատ կույս
Մարիամ Աստվածածնից, իր վրա վերցրեց Աղամի
մեղքերը և աստվածախնամ տեսչությամբ իր
անձի մեջ կրեց մարդկային բոլոր կարիքները,
բացի մեղքից, և եղավ մարդկության պտուղ:

Երկնավոր Հովիվը եկավ փնտրելու մոլորված
ոչխարին բարձր լեռան վրա. և վերցնելով նրան՝

եղ ի վերայ կենսաքեր ուսոյն իւրոյ, դարձուցանելով ի հայրենի բնակութիւնն, ուստի արտաքսեցաւն՝ արդարութեամբ. եւ զանիծիցն եւ զցաւոցն ելոյծ զդատապարտութիւն իւրով անպատճապարտ մահուամբն. եւ զանկեալն ի ձեռս աւազակացն՝ վերստին ողջացոյց՝ պատելով զվէրս նորա, արկանելով ի վերայ նորա ձէթ եւ գինի, եւ աւանդելով ի պանդոկի ամէնընկալ կաթուղիկէ սուրբ Եկեղեցւոյ Քոյ, որ ժողովէ զամենայն ցրուեալս եւ զկեղեքեալս, եւ միաւորէ յորդէգրութիւն Հօրդ Երկնաւորի. եւ հաշտարար եւ մեղսաքաւիչ իւրով պատարագաւն՝ որ ի վերայ սուրբ խաչին, բոլորապտուղ զինքն Քեզ ընծայեաց ընդ մեր, եւ վասն մերոց պարտեաց զանձն իւր փոխանակելով։ Եւ դարձեալ վերստին ստացաւ զմեզ սուրբ արեամբն իւրով եւ ազատեաց ի ծառայութենէ բանսարկուին՝ պատառելով զմուրհակ դատապարտութեան յանցանաց մերոց, որ կայր մեզ հակառակ. Եբարձ զայն ի միջոյ եւ բեւեռեաց զնա ընդ խաչափայտին. մերկեաց զիշխանութիւնս եւ զպետութիւնս մեքենաւոր զօրութեան նորա. յայտ յանդիման խայտառակեալ նշաւակեաց զնոսա յանձին իւրում՝ զօրութեամբ աստուածութեան իւրոյ։

դրեց իր կենսաբեր ուսին և վերադարձրեց նրան իր հայրենի բնակավայրը, որտեղից արդարացիորեն արտաքսվել էր. իր անպատճապարտ մահվամբ լուծեց անեծքի ու ցավի դատապարտությունը. և ավազակների ձեռքն ընկածին վերստին առողջացրեց՝ կապելով նրա վերքերը, վրան գինի և ձեթ լցնելով և նրան պահպանության տալով Քո ամենընկալ ընդհանրական սուրբ Եկեղեցու պանդոկում՝ որ ժողովում է բոլոր ցրվածներին ու կեղեքվածներին և միավորում Երկնավոր Հորդ որդեգրության մեջ։ Եվ սուրբ խաչի վրա՝ իր հաշտարար և մեղսաքավիչ պատարագով, իրեն ամբողջովին Քեզ ընծայեց մեր փոխարեն և իրենով փոխանակեց մեր պարտքերը։ Եվ իր սուրբ արյամբ վերստին ստացավ մեզ և ազատեց բանսարկուի ծառայությունից՝ պատռելով մեր հանցանքների դատապարտության մուրհակը, որ մեր դեմ էր. վերացրեց այն մեջտեղից և գամեց խաչափայտին. զինաթափ արեց իշխանություններին ու պետություններին, հրապարակավ խայտառակելով՝ նրանց պարտության մատնեց իր անձի միջոցով՝ իր Աստվածային զորությամբ։

Եւ իշխանական պետութեամբն իջեալ ի ստորին սանդարամետս դժոխոց՝ աղարտելով զգօրութիւն բռնութեան՝ կարծեալ իշխանին աշխարհի, որ բարձրացեալ եւ լեռնացեալ ամբարտաւանութեամբ ունէր գրաւեալ ընդ ինքեամբ զբնութիւն մարդկութեանս. որով ժամանեալ եհաս թագաւորն ի բարձանց՝ հզօրն ի պատերազմի. Եւ ել ի բարձունս հպարտացելոյն եւ կապեաց զհսկայն՝ աւերելով զամուրս նորա, եւ յափշտակեաց զգանձս նորա. Եւ դարձեալ եմոյծ զարքունական պատկերն ի դրախտն, ուստի եհան, զեօթնեկին շնորհսն տալով զոր կորոյսն եօթնեակ յանցանօք: Քանզի «շինեաց իմաստութիւնն զՀօրն տուն»՝ զխորանն Դաւթի, զանկեալն եւ զկործանեալն վերստին նորոգեաց եւ կանգնեաց. վասն լինելոյ Նորա ծաղիկ յարմատոյն Յեսսեայ. Եւ հանգեաւ ի վերայ Նորա Հոգին Սուրբ՝ որ ի մեզ խորհրդածի. Հոգի իմաստութեան եւ հանճարոյ, Հոգի գիտութեան եւ աստուածպաշտութեան. Եւ լցեալ եղեւ Հոգւով՝ երկիւղիւ եւ սրբութեամբ: Վասն զի ուր երկիւղ Տեառն է, անդ պատուիրանաց պահպանութիւն. Եւ ուր պատուիրանաց պահպանութիւն, անդ եւ ո՛չ մի յանցանք. քանզի զյանցանս մեր էառ եւ զցաւս մեր երարձ եւ զՔե՛զ միայն ծանոյց մեզ

Եվ իշխանական տերությամբ իջնելով դժոխ-քի ստորին սանդարամետները՝ ոչնչացրեց աշխարհի կարծեցյալ իշխանի բռնության զորությունը, որ բարձրացած ու լեռնացած ամբարտավանությամբ իրեն էր ենթարկել մարդկային բնությունը:

Բարձունքներից եկավ հասավ Թագավորը՝ Հզորը պատերազմում, ելավ հպարտացածի բարձունքներն ու կապեց հսկային՝ ավերելով նրա ամրոցները, հափշտակեց նրա գանձերը և արքայական պատկերը կրկին մտցրեց դրախտ՝ որտեղից հանել էր, տալով յոթ շնորհները որոնք կորցրել էր յոթ հանցանքներով։ Քանզի իմաստությունը շինեց Հոր տունը՝ Դավթի խորանը, ընկածին և կործանվածին վերստին նորոգեց ու կանգնեցրեց, որովհետև նա ծաղիկ էր Հեսսեի արմատից, և իջավ նրա վրա Սուրբ Հոգին, Որին անվանում ենք իմաստության և հանճարի, գիտության և աստվածպաշտության Հոգի. և լցվեց Հոգով՝ երկյուղով ու սրբությամբ։ Որովհետև ուր Տիրոջ երկյուղն է, այնտեղ էլ պատվիրանապահությունն է, և ուր պատվիրանապահությունն է՝ այնտեղ չկա ո՛չ մի հանցանք։ Քանզի վերցրեց մեր հանցանքներն ու վերացրեց մեր ցավերը և Քե՛զ միայն ճանաչել

Հաւաստեաւ Աստուած՝ կենդանեաց եւ մեռելոց,
առնելով խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ
յերկինս եւ յերկրի. եւ հաճեցոյց զկամս
քաղցրութեան սիրոյ Քոյ առ արարածս, քանզի
բարձաւ միջնորմն, եւ լուծաւ կրծիմն, որ կայր
խափան եւ արգել մերոյ փրկութեան. եւ տեղի
տուեալ սրովքէիցն շրջապատեալ բոցեղէն սրոյն
որ պահէր զճանապարհս ծառոյն կենաց, վասն
զի ընդ մեզ եղաւ ճանապարհն եւ ճշմարտու-
թիւնն եւ կեանքն՝ Քրիստոս Յիսուս, Ով
առաջնորդեաց մեզ ընդ երկնաչու ճանապարհն՝
փրկաւէտ կենացն. եւ անցոյց գերիվերոյ
իշխանութեանց եւ պետութեանց. եւ խրախոյս
տուեալ հաւատացելոց՝ ասէ. «Քաջալերե-
ցարուք՝ Ես յաղթեցի աշխարհի եւ ետու ձեզ
իշխանութիւն՝ կոխել զօձս եւ զկարիճս եւ
զամենայն զօրութիւնս թշնամւոյն»: Առ որս եւ
ասել մեզ համարձակապէս, թէ՝ «Ո՞ւր է, մա՛հ՝
յաղթութիւն քո, ո՞ւր է, դժո՞խք՝ խայթոցն քո.
քանզի եղաք փրկեալք եւ ազատեալք արեամբ
Միաձնի Որդւոյ Քոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն
մերոյ. ընդ որում Քեզ, Հօր եւ Հոգւոյդ Սրբոյ
վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

տվեց որպես ճշմարիտ Աստված՝ ողջերի ու
մեռածների, խաչի վրա իր արյամբ խաղաղու-
թյուն հաստատելով երկնքում ու երկրի վրա. և
Քո քաղցր սիրո կամքը հաճելի դարձրեց
արարածներին, քանզի քանդեց պատնեշը,
վերացրեց միջնորմը, որ խափանում և արգելում
էր մեր փրկությունը: Հեռացրեց բոցեղեն սուրը,
որով սերովբեները շրջապատած էին պահում
կենաց ծառի ճանապարհը, քանզի մեզ հետ եղավ
ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը՝ Հիսուս
Քրիստոս, Ով առաջնորդեց մեզ փրկավետ
կյանքի՝ երկինք տանող ճանապարհով և
անցկացրեց պետություններից և իշխանություն-
ներից էլ վեր, և խրախուսելով հավատացյալ-
ներին՝ ասաց. «Քաջալերվեցե՛ք, Ես հաղթեցի
աշխարհին և ձեզ իշխանություն տվեցի
ոտնակոխ անելու օձերին ու կարիճներին և
թշնամու ամբողջ զորությունը»: Որի համար էլ
համարձակվում ենք ասել. «Ո՞ւր է, մա՛Հ, քո
հաղթանակը. ո՞ւր է, դժո՛խք, քո խայթոցը»,
քանզի փրկվեցինք և ազատվեցինք Քո Միածին
Որդու և մեր Տեր Հիսուս Քրիստոսի արյամբ,
Որի հետ Քեզ՝ Հորդ, և Սուրբ Հոգուդ վայել է
փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և
հավիտյանս հավիտենից. ամեն:

Խաղաղութիւն ամենեցուն,

Աստուծոյ Երկրապագեսցուք

Եւ արդ, Տէ՛ր Աստուած մեր՝ բարերար եւ
բազմագութ, որ այսպիսի անձառ փառաց եւ
անպատում բարեաց հաղորդ զագգս մարդկան
արարեր. որով մեծարեցեր զմեղ ի ձեռն Միածնի
Քոյ տնօրէնութեան՝ որ եկեալ կատարեաց
զամենայն գրեալսն օրինաց եւ մարդարէից, եւ
քաղցրուսոյց վարդապետութեամբն իւրով՝
ժողովեաց զցրուեալ ազգս մարդկան եւ
միաւորեալ՝ միացոյց զամենեսեան միաբան
սիրով՝ ի մի հաւատս եւ ի մի յոյս կոչման Քում
արարչական խնամոց գթութեանցդ. եւ Հորդեաց
ճանապարհ փրկութեան ամենայն տիեզերաց՝
պարգեւելով զառհաւատչեայ կենդանութեան
Հոգւոյն Սրբոյ, նորածնելոց ժողովը զցրոց՝
մանկանց առագաստի, կազմելով զդեղ եւ
զսպեղանիս ապաշխարութեան՝ իւրով առատ
մարդասիրութեամբն ասելով թէ՝ «Ո՛չ եկի կոչել
զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն».
եւ դարձեալ թէ՝ «Եկա՛յք առ իս, ամենա՛յն
աշխատեալք՝ եւ որք ունիք բեռինս ծանունս
մեղաց եւ ես հանգուցից զձեղ»։ եւ յորդորական

Ամենքին խաղաղություն,

Աստծուն երկրպագենք

Եվ արդ, ՏԵ՛Ր Աստված մեր՝ բարերար և
բազմագութ, որ այսպիսի անճառ փառքի ու
անպատում բարիքների հաղորդ դարձրիր
մարդկային ազգին, որով մեծարեցիր մեզ Քո
Միածնի տնօրինության միջոցով, որ գալով
լրումին հասցըն օրենքում ու մարդարեու-
թյուններում բոլոր գրվածները, իր քաղցը
վարդապետությամբ ժողովեց մարդկանց ցրված
ազգերը և միավորելով՝ միացըն բոլորին միաբան
սիրով մի հավատի և մի հույսի մեջ՝ ի կոչումն
արարչական խնամքի գթության Քո, և բացեց
ողջ տիեզերքի փրկության ճանապարհը՝
պարգևելով Սուրբ Հոգու կենդանության
առհավատչյան նորածին ժողովրդին՝ առա-
գաստի մանուկներին, պատրաստելով ապաշ-
խարության դեղն ու սպեղանին, իր առատ
մարդասիրությամբ ասելով, թե. «Զեկա կանչելու
արդարներին, այլ մեղավորներին՝ ապաշ-
խարության», և դարձյալ, թե. «Եկե՛ք ինձ մոտ,
բոլո՛ր հոգնածներդ ու մեղքերով ծանրա-
բեռնվածներդ և ես կհանգստացնեմ ձեզ». և

աստուածախօս ձայնիւն յորդորեալ քաջալերեաց զամենեսեան ի հնազանդութիւն աստուածահաճոյ լծոյն ծառայութեան՝ ասելով. «Առէ՛ք զլուծ իմ ի ձեզ եւ ուսարո՛ւք յինչն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ թեթեւ»:

Եւ արդ, մեք՝ ծառայք Քո եւ ժողովուրդք եւ խաշն արօտի Քոյ՝ գինք արեան Միածնի Որդոյ Քոյ, ժողովեալքս ի գաւիթ սուրբ Եկեղեցւոյ, խոնարհեալ աղաչեմք զբազմագութ եւ զառատ մարդասիրութիւնդ Քո եւ հայցեմք ի քաղցրութենչդ Քումմէ՛ զբաւութիւն եւ զթողութիւն մեղաց մերոց:

Խոնարհեցո, Տէ՛ր, զունկն Քո եւ լո՛ւր աղաչանաց ծառայից Քոց, եւ գթութեամբ եւ ողորմութեամբ Քո թո՛ղ մեզ զյանցանս մեր՝ զկամայ եւ զակամայ, եւ արա զմեզ որդիս լուսոյ եւ որդիս տունջեան զորս գրեցեր ի գիր որդէգրութեան ժառանգութեան սրբոցն ի լոյս. եւ չարին պատրանօք որսացեալ եղաք կամօք մերովք՝ ի մեղսասէր եւ ի կամակոր նորա կամսն, որոշելով ի հայրախնամ սիրոյ արարչական գթոյ Քոյ՝ տարագիր առնելով զանձինս մեր յոր-

միսիթարող աստվածախոս ձայնով հորդորելով՝
քաջալերեց ամենքին հնագանդվելու աստվա-
ծահաճո ծառայության լծին՝ ասելով. «Իմ լուծը
ձեզ վրա վերցրե՛ք և սովորեցե՛ք ինձանից, որ
հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ
պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է և
իմ բեռը՝ թեթև»:

Եվ արդ, մենք՝ Քո ծառաներն ու ժողովուրդը,
Քո հոտի գառները՝ Քո Միածին Որդու արյան
գինը, ժողովվելով սուրբ Եկեղեցու գավթում,
խոնարհվելով՝ հայցում ենք բազմագութ ու
առատ մարդասիրությունդ և խնդրում Քո
քաղցրությունից մեր մեղքերին քավություն ու
թողություն:

Խոնարհեցրու, Տե՛ր, Քո ականջը և լսի՛ր
ծառաներիդ աղաչանքները, Քո գթությամբ և
ողորմությամբ ների՛ր մեր կամա և ակամա
գործած հանցանքները, դարձրու մեզ լույսի ու
ցերեկվա որդիներ, որոնց գրեցիր Քո որդեգրու-
թյան ժառանգության գրքում՝ սրբերի հետ
լույսերի մեջ: Սակայն մենք խաբվելով չարից,
մեր իսկ կամքով ընկանք նրա մեղսասեր ու
կամակոր կամքի թակարդը՝ հեռանալով Քո
հայրախնամ սիրո արարչական գթությունից և

դէգրութենէ ժառանգութեան Հօրդ Երկնաւորի.
Եւ ո՛չ պահեցաք զգուշութեամբ զստացուածս եւ
զգանձս հայրենատուր մեծութեան Քոյ, զոր
սուրբ աւազանաւն ստացաք՝ զմաքրութիւն, եւ
զանմեղութիւն, եւ զարդարութիւն հոգեւոր
մեծաշահ փարթամութեանն, այլ՝ անառակ
վարուք մերովք ծախեցաք զհոգեւոր մեծութիւնն,
մինչեւ ժամանեալ եհաս մեզ յետին աղ-
քատութիւն եւ սովամահ չքաւորութիւն.
Նուաղեցան անձինք մեր, եւ յոյս ակնկալութեան
մերոյ չիք այլ ոք, բաց ի Քէն, Տէ՛ր, զի Դո՛ւ ես
Աստուած մեր, եւ զանուն Քո անուանեմք
զօրհանապագ: Հա՛յր Երկնաւոր, գթա՛ ի դար-
ձումն ծառայից Քոց եւ ընկա՛լ զզղումն խոս-
տովանութեան մերոյ, որպէս զանառակ որդւոյն
ընկալար զդարձումն, եւ վերստին զարդարեցեր
զնա արփիազարդ եւ լուսեղէն զգեստիւն՝
առաջին պատմուճանին ծածկութիւ, զոր ինքեան
կամակոր եւ անառակ վարուքն մերկացաւ: Վասն
որոյ եւ մեք նորին յօժարութեամբ՝ զղացեալ
սրտիւ եւ բեկեալ անձամբք, դառնամք առ Քո
գթութիւնդ՝ ասելով. «Հա՛յր, մեղաք յերկինս եւ
առաջի Քո. ոչ եւս եմք արժանի կոչիլ որդի սուրբ

տարագրվելով Երկնային Հորդ ժառանգության որդեգրությունից: Եվ զգուշությամբ չպահեցինք Քո հայրենատուր մեծության ու հոգեոր մեծաշահ փարթամության գանձերը՝ մաքրությունը, անմեղությունը, արդարությունը, որ սուրբ Ավագանով ստացանք: Այլ մեր անառակ վարքով վատնեցինք հոգեոր հարատությունը, մինչև մեզ վրա եկավ հասավ հետին աղքատությունն ու սովամահ անող չքավորությունը. տկարացան մեր անձերը, և չունենք ակնկալության հույս, բացի Քեզանից, Տե՛ր, քանզի Դո՛ւ ես մեր Աստվածը, և Քո անունն ենք կանչում անդադար: Հա՛յր Երկնավոր, գթությամբ ընդունիր Քո ծառաների դարձն ու զղջման խոստովանությունը, ինչպես ընդունեցիր անառակ որդու դարձը և վերստին զարդարեցիր նրան արփիազարդ ու լուսեղեն զգեստով՝ առաջին պատմուճանով, որից մերկացել էր իր կամակոր և անառակ վարքով: Որի համար Էլ մենք նույն հօժարությամբ, զղջացող սրտով ու փշրված հոգով դառնում ենք դեպի Քո գթությունը՝ ասելով. «Հայ՛ր, մեղանչեցինք Երկնքի դեմ և Քո առաջ, Քո սուրբ անվան որդիները կոչվելու այլես արժանի չենք, դարձրու

անուանդ Քոյ. արա՛ զմեզ իբրեւ զմի ի վարձկանց Քոց. Հայեա՛ց, Տէ՛ր, ողորմութեամբ եւ քաղցրութեամբ կամօք Քովք, եւ Հայրական գթով եւ սիրով բարերարութեան Քո ե՛լ ընդ առաջ մեր եւ զգեցո՛ մեզ զառաջին պատմուճանին լուսափայլ վերարկուն, զոր զգեստաւորեալ զարդարեցաք աւազանին պայծառութեամբն:

Մերկեա՛ ի մէնջ, Տէ՛ր, զչնացեալ պատմուճան չարին ծածկութից՝ զոր ծուլութեամբ եւ անառակ վարուք մերովք զգեցաք եւ օտարացաք ի Հայրական խնամոց Քոց: Տո՛ւր մեզ, Տէ՛ր Աստուած մեր, զՔո զուրախական եւ զմարդասիրական համբոյրդ՝ տալով զկնիք սրբութեան ի յոգիս մեր, եւ զմատանին արդարութեան տպաւորեա՛ յաջոյ ձեռին մերում՝ միշտ ունելով զնշան եւ զդրոշմն ուխտին սրբութեան՝ զոր ուխտեցաք միջնորդութեամբ արեան Որդւոյ Քո սիրելւոյ: Արբո՛ մեզ զբաժակն ուրախարար՝ զոր խառնեցեր ի խառնարան սրբութեան աստուածընկալ սեղանոյ քառաթեւ խաչին, յորում զեներ զզենումն ծշմարիտ պատարագին՝ եզինն պարարակի. եւ հրաւիրեցեր ի պատրաստեալ ճաշ հարսանեաց Միածնի Որդւոյ Քոյ սիրելւոյ՝ զպակասամիտսն ի հանճարոյ աստուածային երկիւղին եւ պատուիրանին զգուշութեան. եւ անզգամացն պատուիրեցեր թողուլ զանզգամութեան ճանապարհն:

մեզ Քո վարձկաններից մեկը, Քո ողորմությամբ
ու քաղցրությամբ նայի՛ր, Տե՛ր, Քո հայրական
գթով, բարերարությանդ սիրով ելի՛ր մեզ
ընդառաջ և հազցրու մեզ լուսափայլ վերարկուն՝
առաջին պատմուճանը, որը հագնելով՝ զար-
դարվեցինք ավագանի պայծառությամբ: Մեր-
կացրո՛ւ մեզ, Տե՛ր, հին պատմուճանից՝ չարի
ծածկույթից, որ ծուլությամբ և մեր անառակ
վարքով հագանք ու օտարացանք Քո հայրական
խնամքից: Տո՛ւր մեզ, Տե՛ր Աստված մեր, Քո
ուրախարար և մարդասիրական համբույրը՝
սրբության կնիք տալով մեր հոգիներին, և ար-
դարության մատանին դիր մեր աջ ձեռքին,
որպեսզի միշտ ունենանք սուրբ ուխտի նշանն
ու դրոշմը, որ ուխտեցինք Քո սիրելի Որդու
արյան միջնորդությամբ: Խմեցրո՛ւ մեզ ուրա-
խարար բաժակը, որ խառնեցիր քառաթև խաչի՝
աստվածնկալ սեղանի սուրբ խառնարանում,
որտեղ զոհեցիր պատարագի ճշմարիտ զոհը՝
պարարտ եզր, և հրավիրեցիր Քո սիրելի Միածին
Որդու հարսանյաց ճաշին նրանց՝ ովքեր չգիտեին
Աստծո երկյուղը և պատվիրանի պահպա-
նությունը. իսկ անզգամներին պատվիրեցիր
թողնել անզգամության ճանապարհը:

Եւ արդ, տո՛ւր մեզ զհացն անմահութեան
Մարմնոյ Միածնի Քոյ, որով կեցցուք, եւ արբո՛
զմեզ գինեաւ անուշութեան սուրբ բաժակին, զի
արբեալ՝ միշտ ուրախասցուք յանսպառ ուրա-
խութիւնսդ. եւ վայելեսցուք զանկապուտ
ճոխութիւնսդ՝ յերջանիկ օթեւանսդ Հօրդ
Երկնաւորի, զոր պատրաստեցեր ի սկզբանէ
աշխարհի սրբոց Քոց: Եւ ընդ նոսին գոհանալով՝
փառաւորեսցուք զՔեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ
Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն»:

Եվ այժմ, տուր մեզ, Տե՛ր, անմահության
հացը՝ Քո Միածնի Մարմինը, որով պիտի
փրկվենք, և խմեցրու մեզ սուրբ բաժակի
անուշահոտ գինին, որ խմելով՝ միշտ ուրա-
խանանք անսպառ ուրախությունների մեջ և
վայելենք անկողոպտելի ճոխությունները
երկանավոր Հորդ երջանիկ օթևաններում՝ որ
պատրաստեցիր աշխարհի սկզբից Քո սրբերի
համար, և նրանց հետ գոհանալով՝ փառավորենք
Քեզ՝ Որդու և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ
և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Աշխարհաբարի վերածեց՝ Նանա Գրիգորյանը

Սաղմոս ճծէ

թիւ ասա

ԿՅ. Բացէք ինձ զդրունս արդարութեան՝ զի
մտից ընդ այն, եւ խոստովան եղէց Տեառն:

ՓԽ. Խոստովան՝ եղերուք Տեառն՝ զի բարի է,
զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ասասցէ տունն Խսրայելի՝ զի բարի է, զի
յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ասասցէ տունն Ահարոնի՝ զի բարի է, զի
յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ասասցեն երկիւղածք Տեառն՝ զի բարի է, զի
յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ
լուաւ ինձ յանդորր:

Տէ՛ր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց, զի՞
արասցէ ինձ մարդ:

Տէ՛ր է իմ օգնական, եւ ես տեսից ի թշնամիս
իմ:

Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մարդիկ:

Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ յիշխանս:

Ամենայն ազինք շրջեցան զինեւ, եւ անուամբ
Տեառն յաղթեցի նոցա:

Շրջելով շրջեցան զինեւ, պաշարեցին զիս ի
միասին, եւ անուամբ Տեառն վանեցի զնոսա:

Սաղմոս 117

ասա

ԿՅ. Բացեք արդարության դռներն իմ առաջ,
որ մտնեմ ներս ու Տիրոջը գոհություն մատուցեմ:

ՓԽ. Գոհություն մատուցեցեք Տիրոջը, քանզի
բարի է Նա, քանզի Հավերժ է ողորմությունը Նրա:

Տունն իսրայելի թող ասի, որ բարի է Նա, որ
Հավերժ է ողորմությունը Նրա:

Տունն Ահարոնի թող ասի, որ բարի է Նա, որ
Հավերժ է ողորմությունը Նրա:

Տիրոջից երկյուղ կրողները թող ասեն, որ
բարի է Նա, որ Հավերժ է ողորմությունը Նրա:

Նեղությանս մեջ ես Տիրոջը կանչեցի, Նա լսեց
ինձ և Հանդարտության առաջնորդեց:

Տերն օգնականն է իմ, և ես չեմ երկնչի.
մարդն ինձ ի՞նչ կարող է անել:

Տերն օգնականն է իմ, և ես կտեսնեմ
վախճանն իմ թշնամիների:

Լավ է հուսալ Տիրոջը, քան հույսը դնել
մարդկանց վրա:

Լավ է հուսալ Տիրոջը, քան հույսը դնել
իշխանների վրա:

Բոլոր ազգերը շրջապատեցին ինձ, բայց Տիրոջ
անվամբ Հաղթեցի նրանց:

Շուրջբոլորս բռնեցին, միահամուռ պաշարե-
ցին ինձ, բայց Տիրոջ անվամբ վանեցի նրանց:

Շուրջ եղեն զինեւ որպէս մեղուք, վառեցան,
բորբոքեցան որպէս փուշք ի հուր, եւ անուամբ
Տեառն մերժեցի զնոսա:

Ի մերժելն դրդուեցայ եւ եղէ մերձ ի գլորել,
եւ Տէր ընկալաւ զիս:

Զօրութիւն իմ եւ օգնութիւն իմ Տէր, եւ եղեւ
ինձ ի փրկութիւն:

Զայն ցնծութեան եւ փրկութեան ի յարկս
արդարոց:

Աջ Տեառն արար զօրութիւն, աջ Տեառն
բարձր արար զիս, եւ աջ Տեառն արար զօրու-
թիւն:

Ոչ մեռայց, այլ կեցից եւ պատմեցից զգործս
Տեառն:

Խրատելով խրատեաց զիս Տէր, եւ ի մահ ոչ
մատնեաց:

Բացէք ինձ զգրունս արդարութեան՝ զի մտից
ընդ այն, եւ խոստովան եղէց Տեառն:

Մեղուների պես շուրջս լցվեցին, վառվեցին,
բորբոքվեցին ինչպես հրաճարակ փուշ, բայց
Տիրոջ անվամբ վանեցի նրանց:

Երբ ինձ հրեցին, ես սասանվեցի և մոտ էի
գլորվելու, բայց Տերը բռնեց ինձ:

Իմ զորությունն ու օգնությունն է Տերը, Նա
իմ փրկությունը եղավ:

Ցնծության և փրկության ձայն կա արդար-
ների տներում:

Տիրոջ աջը զորություն գործեց, Տիրոջ աջը
բարձրացրեց ինձ, և Տիրոջ աջը զորություն
գործեց:

Զպիտի մեռնեմ, այլ պիտի ապրեմ և Տիրոջ
գործերը պիտի պատմեմ:

Տերն ինձ խրատելով պատժեց, բայց չմատնեց
մահվան:

Բացե՛ք արդարության դռներն իմ առաջ, որ
մտնեմ ներս ու Տիրոջը գոհություն մատուցեմ:

Եւ մտեալ յեկեղեցին սկսանիցին

Շարական ԴԿ

Ա.

Allegro

Բ.

Գ.

Ritenuto

Սուրբ ճզգ- նա- լո- րա- ց:

Յարական ԴԿ

Զողորմութեան Քո զդուռն բա՛ց մեզ, Տէ՛ր,
եւ արժանի արա զմեզ լուսեղէն յարկաց Քոց ընդ
սուրբս Քո:

Ի պատրաստեալ Քո յօթեւանս սրբոց Քոց
ընկա՛լ եւ զմեզ, Փրկի՛չ, յորդէգրութիւն ի
դպրութեան կենաց:

Ի նստիլ Քո յատենի, Դատաւո՛ր ահեղ,
խնայեա՛ յարարածս Քո, բարեխօսութեամբ եւ
աղօթիւք սուրբ ճգնաւորացն:

† † †

Եւ մտնելով եկեղեցի սկսում են

Յարական ԴԿ

Տէ՛ր, բա՛ց մեզ Քո ողորմության դուռը և
արժանի արա մեզ Քո լուսեղէն հարկերին Քո
սուրբերի հետ:

Քո սուրբերի համար օթևաններ պատրաս-
տելիս մեզ ևս ընդունիր, Փրկի՛չ, որդեգրվելու
կյանքի Գրքում:

Ահե՛ղ Դատավոր, երբ նստես Քո ատյանում,
խնայի՛ր Քո արարածներին՝ սուրբ ճգնավորների
բարեխօսությամբ և աղօթքով:

Սաղմոս ԴԹ

Աղաղակեցէ՛ք առ Տէր, ամենայն երկիր,
ծառայեցէ՛ք Տեառն ուրախութեամբ:

Մտէ՛ք առաջի Նորա ցնծութեամբ, ծաներո՛ւք,
զի Նա՛ է Տէր Աստուած մեր:

Նա՛ արար զմեզ, եւ ոչ մեք էաք, մեք
ժողովուրդք եւ խաշն արօտի Նորա:

Մտէ՛ք ընդ գրունս Նորա խոստովանու-
թեամբ, եւ օրհնութեամբ ի յարկս Նորա:

Խոստովա՛ն եղերուք Տեառն եւ օրհնեցէ՛ք
զանուն Նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն
Նորա. յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն
Նորա:

ՔԱՐՈԶ

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի
սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ
շնորհիւ ողորմութեան իւրոյ:

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր՝ կեցո՛ւ եւ
ողորմեա՛:

Սաղմոս 99

Աղաղակեցե՛ք Տիրոջ առջև, երկրի բոլոր
բնակիչներ, ծառայեցե՛ք Տիրոջն ուրախությամբ:
Նրա առջև ելե՛ք ցնծությամբ, իմացե՛ք, որ
Նա՛ է Տեր Աստվածը մեր.

Նա՛ ստեղծեց մեզ, և ոչ թե մենք եղանք.
Նրա ժողովուրդն ենք մենք ու ոչխարները
Նրա արոտի:

Մտե՛ք Նրա դռներով խոստովանությամբ և
մտե՛ք Նրա սրահները՝ օրհնությամբ:

Գոհությո՛ւն մատուցեցեք Տիրոջն ու
օրհնեցե՛ք անունը Նրա:

Քաղցր է Տերը, Նրա ողորմությունը հավերժ
է, Նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ:

ՔԱՐՈԶ

Սուրբ եկեղեցով աղաչենք Տիրոջը, որ փրկի
մեզ մեղքերից, և իր ողորմության շնորհով
ապրեցնի:

Ամենակալ Տե՛ր Աստված մեր՝ ապրեցրո՛ւ և
ողորմի՛ր:

ԱՂՕԹՔ

Ի մէջ տաճարիս, եւ առաջի աստուածընկալ
եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ
սեղանոյս՝ խոնարհեալ երկիւղիւ երկիր պա-
գանեմք. զսուրբ եւ զհրաշալի եւ զյաղթող
զգալուստդ Քո փառաւորեմք. եւ Քեզ մատու-
ցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ
Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

ԱՂՈԹՔ

Այս տաճարում, աստվածընկալ և պայծառացած սուրբ նշանների և սուրբ սեղանի առջեւ՝ երկյուղով խոնարհվելով երկրպագում ենք. սուրբ, հրաշալի և հաղթող Քո գալուստը՝ օրհնում և փառավորում. և Քեզ ընծայում ենք օրհնություն և փառք Հոր և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

**Եւ ապա ընթեռնուցու եպիսկոպոսն կամ աւագ երէցն
զաղօրս օրհնութեան ի վրայ ապաշխարողաց**

Աղօթք և օրհնութիւն

**Սրբոյն Յոհաննու Ոսկեբերանին. զոր
ասացեալ է վասն քահանայից և ժողովրդեան**

*Օրհնեալ է Ամենասուրբ Երրորդութիւնն ի
բարձունս՝ Հայր եւ Որդի եւ Հոգին Սուրբ. մեծ
գոհութիւն Երից Անձնաւորութեանց եւ միոյ
Աստուածութեանն՝ անեղանելւոյ, անփոփո-
խելւոյ, անսսահմանելւոյ, ամենակարողի,
ամենատեսողի՝ ամենապարզելողի, ամենա-
կեցուցանողի, անմահի, անբաւի, անճառի՝ պատիւ
եւ Երկրպագութիւն եւ մշտնջենաւոր փա-
ռաբանութիւն յերկնաւորաց եւ յերկրաւորաց. ի
հրեղինաց եւ ի հողեղինաց, ի սերովբէից եւ ի
քերովբէից, ի հրեշտակաց եւ ի հրեշտակապետաց,
էակ Երրորդութեանն եւ Մի Աստուածութեանն,
որ էն յէութեան յիսկութեան համագոյական
Աստուածութեանն հարթ եւ հաւասար ի
խորութիւն, ի բարձրութիւն, ի լայնութիւն եւ
յերկայնութիւն: Որ իւրով կանխագէտ զօ-
րութեամբն արար զերկինս եւ զերկիր եւ
զբիւրաւոր զօրս հրեշտակաց. ձգեաց զերկինս
առանց հիման, խորանարդ գմբէթաձեւ
հաստատութեամբն եւ արկ ի վերայ նորա
զբագմութիւն ջուրցն. գնան հրեղէնքն ընդ
ջուրսն, եւ ո՛չ շիջանին. զի նմա ամենայն ինչ*

Եվ ապա եալիսկոպոսը կամ ավագ երեցը
ապաշխարողների վրա ընթերցում է օրհնության աղոքը

Սուրբ Հովհան Ոսկեբերանի
աղոթքն ու օրհնությունն՝ ասված
քահանաների և ժողովրդի համար

Օրհնյալ է Ամենասուրբ Երրորդությունը
բարձունքներում՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին.
մեծ գոհություն երեք Անձերին և Մի Աստվա-
ծությանը՝ անեղին, անփոփոխելիին, ան-
սահմանելիին, ամենակարողին, ամենատեսին,
ամենապարզեին, ամենքին ապրեցնողին, ան-
մահին, անբավին, անճառին՝ պատիվ, երկր-
պագություն և մշտնջենավոր փառաբանություն
երկնավորներից և երկրավորներից, հրե-
ղեններից և հողեղեններից, սերովբեներից և
քերովբեներից, հրեշտակներից և հրեշտա-
կապետերից է Երրորդությանը և Մի Աստվա-
ծությանը, որ ճշմարիտ էությամբ համագոյակից
ու հավասար են միմյանց խորությամբ, բարձ-
րությամբ, լայնությամբ ու երկարությամբ։ Որ
իր կանխագետ զորությամբ ստեղծեց երկինքն
ու երկիրը և հրեշտակների բյուրավոր զորքերը.
տարածեց երկինքն առանց հիմքի՝ խորանանման
գմբեթաձև հաստատությամբ և ծածկեց այն ա-
ռատ ջրերով. հրեղենները գնում են ջրերի մի-
ջոկ և չեն հանգչում, քանզի Նրա համար

կարելի է. սահմանեաց զծով աւազով. բուսոյց յերկրէ զծառս եւ զծաղիկս հանդերձ ամենայն սերմանեօք. զարդարեաց զերկինս աստեղօք, ճառագայթեաց ի նմա զարեգակն եւ զլուսին. պսակեաց չորիւք եղանակօք զբոլոր շըջանակս տարւոյն, եղ զնոսա ի հակառակ անհաշտելի եւ ի սէր անքակտելի. արար եւ ազգի ազգի զեռունս ի ծովու, բազում գազանս եւ անասունս եւ սողունս եւ թռչունս թեւաւորս ի վերայ երկրի:

Ապա, յետ ամենեցուն արար զմարդն՝ ձեռօք իւրովք, ըստ պատկերի իւրում, եւ փչեաց ի նա շունչ կենդանի, եւ եղեւ մարդն ի հոգի կենդանի. եւ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա, եւ կացոյց միջասահման՝ կենաց եւ մահու. եւ ետ նմա պատուէր՝ չճաշակել ի պտղոյ ծառոյն գիտութեան. եւ ի պահիլ պատուիրանին՝ խոստացաւ նմա զվերնայարկ Վերինն երու-սաղեմի:

Իսկ բանսարկուն գործի իւրոյ չարութեան գտեալ զօձն, եւ նովաւ խօսեցաւ ընդ կնոջն՝ ի պատճառ աստուածանալոյ, եւ պատրեաց զնա եւ ետ ուտել ի ծառոյն գիտութեան՝ եւ եթող ամօթալից եւ մերկ ի լուսեղէն փառացն:

Իսկ Բարերարին քաղցրաձայնեալ ասէ. «Ո՞ւր ես, Աղա՛մ». եւ գալստեամբն նորա ի դրախտն, նկարեցաւ գալուստն Միածին Բա-

ամեն ինչ հնարավոր է:

Ծովը շրջապատեց ավազով, հողից ծառեր ու ծաղիկներ բուսցրեց իրենց սերմերով. երկինքը զարդարեց աստղերով, ճառագայթեցրեց նրանից արեգակն ու լուսինը. պսակեց տարին չորս եղանակով դրանք սահմանեց անհաշտելի հակառակությամբ և անքակտելի սիրով. ստեղծեց ծովային զանազան զեռուններ, բազում գազաններ, կենդանիներ, սողուններ, թևավոր թռչուններ երկրի վրա:

Ապա, այդ ամենից հետո ստեղծեց մարդուն՝ իր ձեռքով ըստ իր պատկերի և, կենդանի շունչ փչեց նրա մեջ և մարդը եղավ կենդանի հոգի: Ամեն ինչ հնազանդեցրեց նրա ոտքերի տակ և նրան դրեց կյանքի ու մահվան միջասահմանում՝ պատվիրելով չճաշակե՛լ գիտության ծառի պտղից: Եվ պատվիրանը պահելու դեպքում խոստացավ նրան բնակեցնել Վերին Երուսաղեմի վերնահարկում:

Իսկ բանսարկուն իր չար գործի համար իբրև գործիք գտավ օձին և նրա միջոցով խոսեց կնոջ հետ՝ խաբելով, թե. «Աստվածներ կլինեք», և ուտել տվեց նրան գիտության ծառից՝ թողնեով ամոթալից և մերկացնելով լուսեղեն փառքից:

Իսկ Բարերարը քաղցր ձայնով ասում է. «Ո՞ւր ես, Ադա՛մ». և իր դրախտ գալով՝ պատկերեց Միածին Որդու աշխարհ գալը, իր

նին իւրոյ յաշխարհս, եւ ձայն ոտից նորա՝
դրոշմեաց զՅովհաննէս Մկրտիչն. իսկ Աղամայ
անզղջութեամբ դիմեալ ի մահ, զանպարտականն
Աստուած, պատճառ իւրոյ կորստեանն համա-
րեալ՝ ասէր թէ. «Կինս, զոր ետուր ցիս, սա՛
յանցոյց զիս». իսկ Դատաւորն արդարութեան
անէծ զնոսա՝ եւ զվնասակարս նոցա. եւ եհան
զնոսա արտաքոյ դրախտին. սակայն ո՛չ ժուժ-
կալեալ ողորմութեամբն՝ ընկալաւ զպատարագն
Աբելի. անմահացոյց ի զաւակէ նոցա զԵնովք,
պահեաց զնոյ ի տապանին՝ բազմահոյլ կեն-
դանեօք. եւ զամբարշտեալն Կայէն իւրովք
ծննդովքն՝ սահանաբաց անձրեւօք ջնջեաց:
Օրհնելով զտասներորդն՝ զԱբրահամ, խոստանա-
լով նմա երդմամբ, թէ. «Բազմացուցից զզաւակն
քո՝ որպէս զաստեղս երկնից». բազում նշանօք
եւ արուեստիւք խօսեցաւ առ հարսն մեր որք
արարին ազգի ազգի նշանս. եւ առաքեաց
զհրեշտակս վերակացուս: Իսկ իբրեւ եկն լրումն
ժամանակի, խօսեցաւ ընդ մեզ Որդւովն՝ որ եկն
եւ մարմնացաւ ի սրբոյ Կուսէն, եւ եմուտ ընդ
օրինօք, զի զորս ընդ օրինօքն իցեն՝ ազատեսցէ.
կատարեաց զօրէնս, ելից զտառս մարգարէիցն.
արար նշանս եւ արուեստս. լուսաւորեաց զկոյրս.
առողջացոյց զանդամալոյծս, հալածեաց զդեւս:
Ապա, ի կատարումն նշանացն՝ չնորհեաց

ոտքերի ձայնը նախանշեց Հովհաննես Մկրտչին։
Բայց Աղամը անզղջությամբ գնաց դեպի մահ և
անմեղ Աստծուն համարելով իր կորստյան
պատճառը՝ ասաց. «Այդ կինը, որ տվեցիր (ինձ),
նա՛ ինձ դրդեց հանցանքի»։ Իսկ արդարության
Դատավորը անիծեց՝ նրանց և նրանց վնասող-
ներին հանեց դրախտից դուրս. սակայն ողոր-
մությունից չզրկելով՝ ընդունեց Աբելի պա-
տարագը, անմահացրեց նրանց զավակներից
Ենովքին, Նոյին՝ բազմաթիվ կենդանիների հետ,
պահեց տապանում, իսկ ամբարիշտ Կայենին իր
ծնունդների հետ՝ վերացրեց ջրհեղեղով։
Օրհնելով տասներորդին՝ Աբրահամին, երդումով
խոստացավ նրան, թե. «Պիտի բազմացնեմ քո
զավակներին՝ երկնքի աստղերի պես»։ բազում
նշաններով և կերպերով խոսեց մեր հայրերի հետ,
որոնք պես-պես հրաշքներ գործեցին. և առաքեց
պահապան հրեշտակներին։ Իսկ երբ ժամանակը
հասավ, խոսեց մեզ հետ Որդու միջոցով՝ որ եկավ
և մարմնացավ Սուրբ Կույսից, մտավ օրենքի
տակ, որպեսզի օրենքի տակ եղողներին ազատի-
կատարեց օրենքները, լրացրեց մարդարեների
գրվածքները, գործեց հրաշքներ, լուսավորեց
կույրերին, բժշկեց անդամալույծներին, հալածեց
դեերին։

Ապա, ի լրումն նշանների, հարություն

զյարութիւն՝ Ղազարու՝ չորեքօրեայ կոչմամբ ի թաղմանէ. նստաւ ի վերայ յաւանակի իշոյ, որ է խորհուրդ կոչման հրէից եւ հեթանոսաց, վասն որոյ եւ մանկտին երգէին. «Ովսաննա, օրհնութիւն Որդւոյ Դաւթի»:

Իսկ ի սերկեան աւուրս գայ կամմաւորութեամբ ի չարչարանս՝ յանձն առնու մատնիլ յանօրէն աշակերտէն. Յերեկոյ հասեալ ժամու աւուրն, երկոտասանիցն զխոնարհութիւն ուսուցանելով, զՅուղային յառաջ լուանայր զոտս. որ աշխատեցաւ մինչեւ ցգաւիթ քահանայապետին, որ եւ ի միտս իւր ասէր. «Թէ բիւր անգամ մեծարես զիս, ո՞չ եմ մոռանալոց զերեսուն արծաթիսն»:

Արդ՝ ի յայսմ ահաւոր եւ սքանչելագործ տօնիս՝ եղեւ ուրախութիւն հրեշտակաց եւ մարդկան:

Այսօր՝ բարձաւ ցանկ անիծիցն Աղամայ:

Այսօր՝ ազատեցաք ի ծառայութենէ սատանայի:

Այսօր՝ Արարիչն արարածոց ի յերկրի երեւեցաւ:

Այսօր՝ Աստուածն սերօբէից՝ ծառայի զգենու զկերպարանս:

Այսօր՝ Անտեսն քերօբէից՝ խոնարհի եւ լուանայ զոտս աշակերտացն:

շնորհեց չորսօրյա թաղյալ Ղազարոսին. նստեց
էշի քուռակի վրա, որը հրեաներին և հեթանոս-
ներին կանչելու խորհուրդն ունի, որի համար էլ
մանուկները երգում էին. «Օվսա՛ննա, օրհնու-
թյուն Դավթի Որդուն»:

Իսկ այսօր գալիս է կամավոր չարչարվելու՝
հանձն առնելով մատնվել անօրեն աշակերտի
կողմից: Երեկոյան ժամին խոնարհություն
սովորեցնելով տասներկու աշակերտներին, նախ
լվաց Հուդայի ոտքերը, որը գնաց մինչև
քահանայապետի գավիթը և իր մտքում ասում
էր՝ Ղազար անգամ էլ մեծարես ինձ, միւնույնն
է՝ չե՛մ մոռանալու երեսուն արծաթը:

Արդ, այս ահավոր և սքանչելի տոնին
ուրախություն եղավ հրեշտակներին և մարդ-
կանց:

Այսօր վերացվեց Աղամի անեծքը:

Այսօր ազատվեցինք սատանայի ծառա-
յությունից:

Այսօր արարածների Արարիչը երկաց երկրի
վրա:

Այսօր սերովբեների Աստվածը ծառայի
կերպարանք հագավ:

Այսօր քերովբեների համար Անտեսանելին
խոնարհում և լվանում է աշակերտների ոտքերը:

Այսօր՝ Արկօղն զլոյս որպէս զօթոց՝ զգենու զղենջակ:

Այսօր՝ Աթոռակիցն Հօր՝ ընդ հողեղէնս բազմի:

Այսօր՝ Փառակիցն Սուրբ Հոգւոյն՝ յանձն առնու մատնիլ ի դատաստան մահու:

Այսօր՝ Կենագործօղն ամենեցուն՝ ընդ մահուամբ սահմանի:

Այսօր՝ Վէմն, առանց ձեռին հատեալ, լեռնացեալ՝ ելից զտիեզերս:

Այսօր՝ բաշխէ զմարմին եւ զարիւնն, եւ յայտնէ զանօրէն աշակերտին զխորհուրդն:

Այսօր՝ կապեալ լինի Արձակիչն կապելոց՝ զոր երկինք ո՛չ բաւէին տանիլ:

Այսօր՝ օրհնէ զառաքեալսն՝ ի դպրութիւն քահանայութեան:

Այսօր՝ գտանի դրամն կորուսեալ, այսինքն թագաւորական պատկերն:

Այսօր՝ եղեւ ուրախութիւն հրեշտակաց՝ վասն գիւտի մոլորեալ ոչխարին:

Այսօր՝ ճշմարտապէս հաղորդեցաք մարմնոյ եւ արեան Տեառն:

Այսօր՝ օրհնեցան քահանայապետք՝ հանդերձ ամենայն քահանայիւք:

Այսօր՝ լուսազարդեցան թագաւորք՝ հանդերձ ամենայն զօրութեամբն իւրեանց եւ իշխանութեամբ՝ ընդ Դաւթի եւ ընդ դասագլուխս նորա:

Այսօր լույսն իբրև թիկնոց Կրողը՝ սրբիչ է կապում:

Այսօր Հոր Աթոռակիցը՝ հողեղենների հետ է բազմում:

Այսօր Սուրբ Հոգու Փառակիցը՝ հանձն է առնում մատնվել մահվան դատաստանին:

Այսօր ամենքին կյանք Տվողը՝ մահվան է մատնվում: Այսօր Վեմը, առանց ձեռքի հատման, լեռնանալով՝ լցնում է տիեզերքը:

Այսօր բաշխում է իր մարմինն ու արյունը, և անօրեն աշակերտին հայտնում խորհուրդը:

Այսօր կապվում է կապվածներին Արձակողը, Ում երկինքն ու երկիրը անկարող էին տանել:

Այսօր օրհնում է առաքյալներին՝ կոչելով քահանայության:

Այսօր գտնում է կորած դրամը, այսինքն՝ թագավորական պատկերը:

Այսօր հրեշտակները ուրախացան՝ մոլորված ոչխարի գտնվելու համար:

Այսօր ճշմարտապես հաղորդվեցինք Տիրոջ մարմնին և արյանը:

Այսօր օրհնվեցին քահանայապետները բոլոր քահանաներով հանդերձ:

Այսօր լուսագարդվեցին թագավորները իրենց ամբողջ զորությամբ և իշխանությամբ, Դավիթ և նրա զորավարների հետ միասին:

Այսօր՝ օրհնեցան ծերք եւ տղայք, երիտասարդք եւ կուսանք՝ ի ձեռն Կապողին եւ Արձակողին:

Այսօր՝ դրա՛խտն բանի մարդկութեանս՝ եւ ամենայն արարածք ցնծան յանմահական կեանս:

Այսօր՝ ի հին տրտմութեանց փոխեցաք եւ ամենեքեան նորոգեցաք ի Քրիստոս:

Այսօր՝ ետ իշխանութիւն՝ կոխել զօձս եւ զկարիճս եւ զամենայն զօրութիւնս թշնամւոյն:

Այսօր՝ ի ձեռն Աւազանին լուսազարդեալք՝ մաքրեցան հաւատացեալք յաղտոյ մեղաց:

Արդ՝ եկեսցէ մխիթարութիւնն երուսաղեմի ի վերայ ձեր՝ որ ասէ. «Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ,- ասէ Աստուած,- քահանայք, խօսեցարուք ի սիրտ երուսաղեմի. մխիթարեցէ՛ք զազգն, զի լի եղեւ տառապանօք. թողեալ լիցին նմա մեղք իւր»:

Դարձեալ՝ եթէ. «ԶՃանապարհս սրտի նորա տեսի եւ բժշկեցի. եւ ետու նմա մխիթարութիւն. եւ փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութեան»: Արդ՝ Բարեգութն Աստուած ուրախացուսցէ զձեզ զամենեսեան. եւ երկնաւոր պարգեւացն արժանի արասցէ:

Այսօր օրհնվեցին ծերերն ու մանուկները, երիտասարդներն ու կույսերը՝ Կապողի և Արձակողի ձեռքով:

Այսօր դրա՛խտն է բացվում մարդկության առջև, և բոլոր արարածները ցնծում են անմահ կյանքով:

Այսօր թոթափվեցինք Հին տրտմություններից և ամենքս նորոգվեցինք Քրիստոսով:

Այսօր իշխանություն տվեց ոտնակոխ անելու օձերին ու կարիճներին և թշնամու ամբողջ զորությունը:

Այսօր Ավազանի միջոցով լուսազարդվելով՝ հավատացյալները մաքրվեցին մեղքերի ախտից:

Արդ, թող ձեզ վրա գա Երուսաղեմի մխիթարությունը, որ ասում է. «Մխիթարեցե՛ք, մխիթարեցե՛ք իմ ժողովրդին,- ասում է Աստված, - դո՛ւք՝ քահանանե՛րդ, խոսեցեք Երուսաղեմի սրտից, մխիթարեցե՛ք ազգին, քանզի լցվեց տառապանքներով, թող ներվեն նրանց մեղքերը»: Դարձյալ, թե. «Նրա սրտի ճանապարհները տեսա և բժշկեցի, և տվեցի նրան մխիթարություն ու մոխրի փոխարեն՝ ուրախության օծումը»:

Արդ, թող Բարեգութն Աստված ուրախացնի ձեզ բոլորիդ և արժանացնի երկնավոր պարգևներին:

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զհայրապետս՝ ընդ
սրբոյն Գրիգորի՝ եւ ընդ այլ սրբոց հայրա-
պետացն մասնակիցս արասցէ:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զքահանայսդ՝ ընդ
քահանային Մելքիսեդեկի, եւ զարդարեսցէ՝ ընդ
տեսլեանն Մովսեսի՝ ի զարդ անկողոպտելի, ըստ
պատմուճանին Ահարօնի. եւ հոգիազարդեսցէ
ըստ առաքելոցն խորանակցութեան. եւ արասցէ
մշակս առանց ամօթոյ, զի յերեւիլ Հօտապետին՝
ընդունիցիք զանթառամ փառաց պսակն:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զկրօնաւորսդ՝ ընդ
սրբոյն Եղիայի եւ ընդ սրբոյն Անտօնի, եւ
ժառանգակիցս եւ մասնակիցս արասցէ նոցա:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զծերսդ՝ որպէս
զծերսն իսրայէլեան բանակին, եւ որպէս
զծերունին Սիմէօն՝ որ զԱստուածորդին ի գիրկս
իւր ընկալաւ՝ եւ հայցէր արձակիլ ի խաղա-
ղութիւն:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զերիտասարդս՝
որպէս զերանելին Յովսէփ, որ հաճոյ եղեւ
Աստուծոյ եւ օրհնեցաւ ի նմանէ:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զկանայս՝ որպէս
զկանայս իւղաբերս, որք եկին ի զերեզման
Փրկչին՝ եւ լցան աւետեօք Սուրբ Յարութեան
Տեառն:*

**Թող օրհնի՛ Տեր Աստված Հայրապետին՝
մասնակից անելով սուրբ Գրիգորին և մյուս
սուրբ Հայրապետներին:**

**Թող օրհնի՛ Տեր Աստված քահանաներիդ՝
Մելքիսեդեկ քահանայի հետ, և զարդարի ան-
կողոպտելի զարդով՝ Ահարոնի պատմուճանի
նման, ըստ Մովսեսի տեսիլքի. Հոգով զարդարի
և առաքյալների հետ բնակեցնի նույն խորանում.
դարձնի առանց ամոթի մշակներ, որպեսզի երբ
Հովվապետը երեա, ընդունեք փառքի անթառամ
պսակը:**

**Թող օրհնի՛ Տեր Աստված կրոնավորներիդ՝
սուրբ Եղիայի և սուրբ Անտոնի հետ և դարձնի
ձեզ նրանց ժառանգակիցները:**

**Թող օրհնի՛ Տեր Աստված ծերերիդ՝ ինչպես
իսրայելի բանակի ծերերին, ինչպես Սիմեոն
ծերունուն, որ Աստվածորդուն իր գիրկն ըն-
դունեց և Հայցում էր արձակվել խաղաղու-
թյամբ:**

**Թող օրհնի՛ Տեր Աստված երիտասարդներին՝
ինչպես երանելի Հովսեփին, որ հաճելի եղագ
Աստծուն և օրհնվեց Նրանից:**

**Թող օրհնի՛ Տեր Աստված կանանց՝ ինչպես
յուղաբեր կանանց, որոնք եկան Փրկչի գերեզ-
մանին և լցվեցին Տիրոջ Սուրբ Հարության
ավետիսով:**

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զտղայս ձեր՝ որպէս
զտղայս եբրայեցւոց, որք առին ոստս արմա-
ւենեաց՝ եւ ելին ընդ առաջ նորա, աղաղակէին
եւ ասէին. «Ովսա՛ննա, օրհնեալ որ գաս յանուն
Տեառն»:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զամենեսեան՝
զժողովուրդս Սուրբ Եկեղեցւոյս մերոյ՝ առ
հասարակ զարսդ, եւ զկանայսդ, զծերսդ եւ
զտղայսդ, զերիտասարդսդ եւ զկուսանսդ. եւ
փրկեսցէ զձեզ յամենայն չարեաց, եւ ամրա-
ցուսցէ ընդ հովանեաւ աջոյն իւրոյ, եւ երկնից
արքայութեանն արժանիս արասցէ. եւ զանմատ-
չելի լոյս երես իւր երեւեցուսցէ ձեզ:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զտունս զայս եւ
զբնակութիւնս եւ զհիմունս Եկեղեցւոյս, ըստ
այնմ որ ասէ. «Այսօր եղեւ փրկութիւն տանս
այսորիկ»՝ ըստ աւետեացն Աբրահամու՝ հան-
դերձ ազգաւ եւ ժառանգակցօք իւրովք:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զսպասաւոր տանս
այսորիկ՝ զլուսարարս, զդոնաբացս, եւ անթա-
ռամ պսակացն արժանիս արասցէ:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զվերակացու տանս՝
զմշակս. զեզինս, զխաշինս. եւ զհօտս սորա:*

*Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զանդաստանս
մեր՝ եւ բուսուսցէ զամենայն բոյսս շահեկանու-
թեան, ի բաց արասցէ զամենայն վնաս զբիծ՝*

Թող օրհնի՛ Տեր Աստված ձեր երեխաներին՝
ինչպես եբրայեցիների երեխաներին, որոնք
վերցրին արմավենու ճյուղերը և ելան նրան
ընդառաջ, և ասում էին. «Օվսաննա՛, օրհնյալ է
Տիրոջ անունով եկողը»:

Թող օրհնի՛ Տեր Աստված բոլորին՝ մեր Սուրբ
Եկեղեցու ժողովրդին՝ տղամարդկանց և կանանց,
ծերերին և մանուկներին, երիտասարդներին ու
կույսերին, և փրկի ձեզ բոլոր չարիքներից,
ամրացնի իր Աջի հովանու ներքո, արժանացնի
երկնքի արքայությանը և իր անմատչելի լույս
երեսի տեսությանը:

Թող օրհնի՛ Տեր Աստված այս տունն ու
բնակավայրը և Եկեղեցու հիմքերը՝ ըստ այն
խոսքի, որ ասում է. «Այսօր այս տանը փըր-
կություն եղավ», ըստ Աբրահամին և նրա
ազգատոհմին ու ժառանգակիցներին, տրված
ավետման:

Թող օրհնի՛ Տեր Աստված այս տան սպա-
սավորներին՝ լուսարարին, դուռ բացողին և
անթառամ պսակների արժանացնի:

Թող օրհնի՛ Տեր Աստված այս տան վերա-
կացու մշակներին՝ սրա եզները, խաչները և
հոտերը:

Թող օրհնի՛ Տեր Աստված մեր անդաս-
տանները և աճեցնի ամեն տեսակ օգտակար
բույսեր. Հեռու պահի ամեն տեսակ վնասակար
բաներից՝ հրդեհներից, հիվանդություններից,

զհրայրեաց եւ զդալուկն, զժանտ, զկարկուտ, զմարախ, զջորեակ, զսառն եղեմնածին. եւ զամենայն ցաւս եւ զխաշնամահ՝ ի մարդոյ եւ յանասնոյ. եւ հալածեսցէ զլէգէօնն ամենայն զօրօքն իւրովք յանդունդս. եւ զհրեշտակ խաղաղութեան առաքեսցէ:

Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զժամակոչ քաղաքիս մերոյ՝ զի որպէս ձայն հրեշտակապետի յաղթող է առ ի զարթուցանել զննջեցեալս ի մահահանգիստ քնոյ, նոյնպէս եւ ձայն սորայաղթող է առ ի հալածել զլէգէօնն ամենայն զօրօք իւրովք:

Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զբնակութիւն քաղաքիս մերոյ. եւ հալածեսցէ զամենայն չարզօրութիւն՝ բռնացեալ թշնամւոյն:

Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զմիաբան ժողովուրդսդ եւ թեթեւացուսցէ զբեռինս մեղացձերոց:

Օրհնեսցէ՛ Տէր Աստուած զխոստովանօղսդ եւ զապաշխարօղսդ, եւ թողցէ զյանցանս ձեր որպէս զպոռնկին եւ զմաքսաւորին. եւ արժանի արասցէ զձեզ լուացման սուրբ առաքելոցն ի վերնատանն:

Եւ փոխանակ սրբապահութեան ձերոյ, զերկնայինն պարզեւեսցէ ձեզ կերակուր:

Եւ փոխանակ ժուժկալութեան ծարաւակրութեան ձերոյ, յանմահական աղբերէն տացէ ձեզ ըմպել զջուր:

ժանտախտից, կարկուտից, մորեխից, ջորյակից, ցրտահարությունից. և մարդկանց ու անասունների բոլոր ցավերից ու համաճարակից. հալածի լեզեռնին իր բոլոր զորքերով դեպի անդունդները և առաքի խաղաղության հրեշտակին:

Թող օրհնի՛ Տեր Աստված մեր քաղաքի ժամկոչին, քանզի, ինչպես հրեշտակապետի ձայնն է հաղթող՝ զարթնեցնելու ննջեցյալներին մահահանգիստ քնից, այնպես էլ սրա ձայնն է հաղթող՝ հալածելու լեզեռնին իր բոլոր զորքերով։

Թող օրհնի՛ Տեր Աստված մեր քաղաքի բնակիչներին և հալածի բոնակալ թշնամու ամբողջ չար զորությունը։

Թող օրհնի՛ Տեր Աստված միաբան ժողովրդիդ և թեթևացնի ձեր մեղքերի բեռը։

Թող օրհնի՛ Տեր Աստված խոստովանողներիդ և ապաշխարողներիդ, և թողնի ձեր հանցանքները՝ ինչպես պոռնիկին ու մաքսավորին և արժանացնի ձեզ սուրբ առաքյալների լվացմանը՝ վերնատան մեջ։

Զեր ծոմապահության փոխարեն երկնային կերակուր ձեզ պարգևի։

Եվ ծարավին տոկալու փոխարեն թող անմահական աղբյուրից ջուր ըմպել տա ձեզ։

Եւ փոխանակ գիշերային տքնութեան ձերոյ,
ընդ հրեշտակս դասեսցէ զձեզ:

Եւ փոխանակ լռակացութեան ձերոյ, անթա-
ռամ պսակօք զարդարեսցէ զձեզ: Եւ փոխանակ
ողորմութեան ձերոյ՝ որ առ աղքատս, յաջա-
կողմեան դասն բազմեցուսցէ:

Արդ, ո՞վ աստուածասէր ժողովուրդք եւ
հաւատացեալք՝ Քրիստոսի, պահեցէ՛ք զպա-
տուիրանս Տեառն, եւ զիրաւունս Նորա. եւ մի՛
դադարիք եւ ձանձրանայք առնել ողորմութիւն.
մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գործեցէ՛ք զբարիս,
զի զփոխարէնն՝ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ
Քրիստոսէ՝ զյաւիտենական կեանսն առնուցուք:

Արդ՝ Հատուցօղն բարեաց ամենեցուն, տա-
ցէ եկեղեցեացս՝ շինութիւն. քահանայիցս՝ ուղ-
ղութիւն. թագաւորաց եւ իշխանաց՝ վա-
յելչութիւն, ծերոց միաիթարութիւն. կրօնաւորաց՝
ժուժկալութիւն, երիտասարդաց՝ ողջախոհութիւն.
մեղաց՝ լուծումն, հիւանդաց՝ բժշկութիւն, դիւաց՝
խորտակումն, ախտաժետաց՝ առողջութիւն, եւ
փրկութիւն՝ հոգւոց եւ մարմնոց:

Եւ արդ՝ լսելով զայս՝ ի բա՛ց ընկեցէք յան-
ձանց ձերոց զչարութիւն եւ զամենայն
խարդախութիւն. թողէ՛ք իւրաքանչիւր եղեօր

Եվ ձեր գիշերային տքնության փոխարեն՝
հրեշտակների հետ դասակցի ձեզ:

Եվ ձեր լռակեցության փոխարեն թող
անթառամ պսակներով զարդարի ձեզ:

Եվ աղքատների հանդեպ ձեր ողորմածու-
թյան փոխարեն՝ աջակողմյան դասում բազ-
մեցնի ձեզ:

Արդ, ո՞վ աստվածասեր ժողովուրդ և Քրիս-
տոսի հավատացյալներ, պահեցե՛ք Տիրոջ
պատվիրանները և Նրա իրավունքը, և մի՛
դադարե՛ք, և մի՛ ձանձրացե՛ք ողորմություն
անելուց. քանի դեռ ժամանակը ձեր ձեռքին է՝
բարի՛ն գործեցե՛ք, որպեսզի փոխարենը՝ մեր
փրկիչ Հիսուս Քրիստոսից հավիտենական
կյանք ընդունե՛ք:

Արդ, բոլորին բարիքներ Պարգևողը թող տա-
եկեղեցիներին շինություն, քահանաներին՝
ուղղություն, թագավորներին և իշխանա-
վորներին՝ վայելչություն, ծերերին՝ մխի-
թարություն, կրօնավորներին՝ ժումկալություն,
երիտասարդներին՝ ողջախոհություն, մեղքերին՝
թողություն, հիվանդներին՝ բժշկություն,
դեերին՝ խորտակում, ախտաժետներին՝ ա-
ռողջություն և հոգիներին ու մարմիններին՝
փրկություն:

Արդ, լսելով այս՝ հեռո՛ւ վանեցեք ձեր ան-
ձերից չարությունն ու խարդախությունը.
յուրաքանչյուրդ ներեցե՛ք ձեր եղբոր հան-

իւրում զյանցանս, եւ զամենայն խէթ՝ զոր ունիք ընդ միմիանս, եւ զամենան չարութիւն. գործք բարիք բոլորովիմբ ի կատարումն. սիրեցէ՛ք զՏէր յամենայն սրտէ, եւ զկամս Նորա կատարեցէ՛ք. ընդ ամենայն մարդոյ զխաղաղութիւն ունիցի՛ք. հե՛զ լիջիք, եւ խոնարհ ունկն դնելով ձայնին որ ասէ. «Ես յո՞ք բնակեցայց, եթէ ոչ ի հեզս, եւ ի խոնարհս, եւ որք դողան ի բանից իմոց»։ Խնդրեցէ՛ք զխաղաղութիւն. եւ երթիջի՛ք զհետ արդարութեան. յուսոյ ակնկալջի՛ք՝ յաւիտեանս յաւիտենից։

Եւ Տէր Աստուած՝ Արարիչն ամենայնի, հաստատեսցէ՛ զձեզ եւ տացէ առատաբոյս բարիս՝ աստ եւ ի հանդերձելումն. եւ արժանի արասցէ զձեզ դասիլ յաջակողմեանն. եւ ննջեցելոց՝ ծանօթից եւ անծանօթից, զերկնից արքայութիւնն պատրաստեսցէ. որ է օրհնեալ եւ փառաւորեալ այժմ եւ միչտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ցանքները և թողե՛ք միմյանց հանդեպ ունեցած թշնամությունն ու չարությունը. միայն բարի՛ն գործեցեք, սիրեցե՛ք Տիրոջը ամբողջ սրտով և Նրա կա՛մքը կատարեցեք. բոլոր մարդկանց հետ խաղաղություն ունեցեք. եղեք հեզ ու խոնարհ՝ անսալով ձայնին, որ ասում է. «Ես որտե՞ղ պիտի բնակվեմ, եթե ոչ հեզերի ու խոնարհների մեջ, և նրանց մեջ, որոնք երկնչում են Իմ խոսքերից»։ Փնտրեցե՛ք խաղաղություն և արդարության ճանապարհով գնացեք. հուսացե՛ք հավիտյանս հավիտենից։

Եվ Տեր Աստված՝ ամենայնի Արարիչը, թո՛ղ հաստատուն պահի ձեզ և առատ պարգևներ տա՝ այստեղ և հանդերձյալ կյանքում, թող արժանացնի ձեզ դասավելու աջակողմյան դասում, ննջեցյալներին՝ ծանոթ ու անծանոթ, երկնային արքայությունը պատրաստի, Ով օրհնված և փառավորված է այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն։

Աշխարհաբարի վերածեց՝ Նանա Գրիգորյանը

ՔԱՐՈԶ

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի
Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ
ի վերայ մեր. Տէրն ամենակալ կեցուսցէ եւ
ողորմեսցի:

Կեցո՛, Տէ՛ր:

Տէ՛ր, ողորմեա: (Ասասցէ երեսուն անգամ)

ԱՂՕԹՔ

Քում ամենազօր եւ հրաշալի տէրութեանդ,
Քրիստո՞ս Աստուած մեր, Երկիր պագանեն զօրք
Հրեշտակաց, զի Դու միայն ունիս զանմահու-
թիւն՝ Բնակեալդ ի լոյս անմատոյց:

Եւ մեք՝ հողեղին արարածքս, խոնարհեալ
Երկիւղիւ Երկիր պագանեմք. զսուրք, զհրաշալի
Եւ զյաղթող զտէրութիւնդ Քո օրհնեմք եւ
փառաւորեմք. Եւ ընդ Երկնային զօրսն մատու-
ցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր Եւ ընդ
Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:
Հա՛յր մեր, որ յերկինս ես...

Եւ դիցեն զսուրք խաչն եւ զԱւետարանն առաջի քեմին
եւ համրութեսցեն. եւ տացեն զշորեցրամեանն՝ զոր
կարգեաց Մովսէս դեւտացոցն: Եւ օրհնեսցէ քահանայն
զապաշխարողսն, եւ արձակեսցէ:

ՔԱՐՈԶ

Հավատով միաբան խնդրենք Տիրոջից, որ իր
ողորմության շնորհները պարգևի մեզ:
Ամենակալ Տերը թող ապրեցնի և ողորմի մեզ:
Ապրեցրո՛ւ, Տե՛ր:
Տե՛ր, ողորմիր:

(Կրկնել 30 անգամ)

ԱՂՈԹՔ

Քրիստո՛ս Աստված մեր, Քո ամենազոր և
հրաշալի տերությանը երկրպագում են հրեշտակ-
ների զորքերը, քանի որ միայն Դու՝ անմատույց
լույսերի մեջ Բնակվողդ, ունես անմահություն:
Եվ մենք՝ հողեղեն արարածներս, երկյուղով
խոնարհվելով երկրպագում ենք Քեզ. Քո սուրբ
հրաշալի և հաղթող տերությունը օրհնում և
փառավորում ենք. և երկնային զորքերի հետ
մատուցում Քեզ օրհնություն և փառք Հոր և
Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամեն:

Օրհնյալ Տեր մեր Հիսուս Քրիստոս. ամեն:
Հա՛յր մեր, որ երկնքում ես ...

Սուրբ խաչն ու Ավետարանը դնում են քեմի առջևում և
համբուրում. տախս են չորեքդրամյանը, որ սահմանեց
Մովսեսը դեստացիների համար. Քահանան ապաշ-
խարողներին օրինում է և արձակում:

Բան Սրբոյն Բարսղի նախ քան զՍուրբ Հաղորդութիւնն

Լուարո՛ւք ինձ, որդեա՛կք իմ. եւ ես զերկիւղ
Տեառն ուսուցանեմ ձեզ աննախանձաբար, իբրեւ
սիրելի եւ հարազատ որդւոց. քանզի հարկ ի
վերայ կայ, եւ վա՛յ է ինձ՝ եթէ ո՛չ աւետա-
րանեցից ձեզ հանապազօր. զի կարացից
ծանուցանել ձեզ, եթէ զի՞նչ են կամքն Աստուծոյ՝
բարին եւ հաճոյն եւ կատարեալն:

Զի մարգարէն Եզեկիէլ հանապազօր զարհու-
րեցուցանէ զիս յասելն իւրում բանիւ Աստուծոյ
ի վերայ քահանայից այսպէս. «Որդի՛ մարդոյ՝
դէտ կացուցի զքեզ ի վերայ ժողովրդեանդ
այդորիկ. եթէ տեսանիցես զսուրն եկեալ եւ ո՛չ
ազդ առնիցես փողով. եւ նոքա ո՛չ զգուշանայ-
ցեն. եւ եկեալ սուրն եւ գտանիցէ զոք անպատ-
րաստ. նա յանօրէնութեան իւրում մեռցի. եւ
զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից»:

Արդ՝ սուրն, գեհենին սպառնալիքն են. եւ
փողն՝ պատուիրանն Աստուծոյ, զոր զեկուցանեմ
ձեզ ահաւասիկ, եղբա՛րք իմ. ես մարդ եմ իբրեւ
զձեզ, եւ առաւել եւս մեղօք զառածեալ, բայց զի
կարգեցայ ձեզ տեսուչ եւ խրատող, արտասուօք
եւ բազում հառաջանօք սրտի իմոյ՝ սիրով առաջի
առնեմ ձեզ զհաճոյսն Աստուծոյ:

Սուրբ Բարսեղի խոսքը

Սուրբ Հաղորդությունից առաջ

Լսե՞ք ինձ, իմ սիրելի՝ որդիներ, և ես
աննախանձաբար Տիրոջ երկյուղը կուսուցանեմ
ձեզ՝ իբրև հարազատ որդիների. որովհետև
պարտականություն է դրված ինձ վրա, և վա՛յ է
ինձ, եթե ձեզ հանապազօր չավետարանեմ,
որպեսզի թերևս կարողանամ ճանաչել տալ ձեզ,
թե ի՛նչ է Աստծու կամքը՝ բարին, հաճելին ու
կատարյալը:

Որովհետև եզեկիել մարգարեն Աստծու՝
խոսքով հանապազ զարհուրեցնում է ինձ՝
քահանաների վերաբերյալ այսպես ասելով.
«Մարդո՛ւ որդի, քեզ այդ ժողովրդի վրա տեսուչ
եմ նշանակել. եթե տեսնես, որ սուրը գալիս ու
վրա է հասնում, և փողով չազդարարե՛ս, և նրանք
չզգուշանան, և սուրը գալով՝ որևէ մեկին
անպատրաստ գտնի, և նա մահանա իր անօրե-
նության մեջ, նրա արյունը քո՛ ձեռքից
կպահանջեմ»:

Արդ, սուրը՝ գեհենի սպառնալիքն է, իսկ
փողը՝ Աստծու պատվիրանը, որն այսօր զեկու-
ցում եմ ձեզ բեմի վրա: Ես, ո՛վ եղբայրներ, ձեզ
նման մարդ եմ և առավել ես ծանրաբեռնված եմ
մեղքերով, բայց քանի որ ձեզ տեսուչ ու խրատող
կարգվեցի, ուստի արտասուրքներով և սրտի
բազում հառաչանքով՝ սիրով ձեզ եմ ներ-
կայացնում Աստծուն հաճելի բաները:

Ո՞չ եթէ նորաձայն ինչ՝ մտացածին բանիւք առնել զձեղ վտարանդիս, քանզի ստուգապէս եւ ես համարս տալոց եմ վասն ձեր առաջի Աստուծոյ. վասն որոյ եւ զվաղնջուցն դրոշմեալ կանոնս ի սրբոց հարցն, դիւրալուր բանիւք ձեղ զեկուցանեմ:

Բայց զայս նախ գիտասջիք, զի ո՞չ հրեշտակաց հաւատացաւ քահանայութեան պատիւն, զի անմեղք են. այլ մարդկանց, զի որպէս մեք մեղանչեմք եւ յուսամք թողութեան ի Քրիստոսէ. նոյնպէս եւ ձեղ տացուք յոյս թողութեան եւ ապաշխարութեան:

Եւ արդ, աղաչե՛մ զձեղ զամենեսեան՝ երկայնամտութեամբ լսել ինձ:

Ահա բանին երկինք ի վերուստ, եւ Քրիստոս իջեալ՝ բազմի ի վերայ սրբոյ սեղանոյս. եւ ամենայն զօրք երկնից՝ յերկիր ծաւալին աներեւութապէս՝ ի սպաս Որդւոյն Աստուծոյ, եւ շուրջ զսեղանւովն բոլորին. եւ Սուրբ Հոգին առատապէս բաշխէ զշնորհս բարեաց, մերձեցելոցն սրբութեամբ:

Եւ արդ, դուք՝ եղբա՛րք, բազում զգուշութեամբ եւ երկիւղիւ՝ դի՛ք ի սիրտս ձեր, մի՛ զտեսանելիդ եւեթ նկատել հաց եւ գինի. այլ զմեծ խորհուրդն որ ծածկեալ է ի մարմնաւոր աչաց տեսութենէ. որ միայն հոգւոյ աչօք տեսանի, որք սրբութեամբ խնդրեն զնա. որով

Ո՛չ ինչ-որ նորաձայն մտացածին խոսքերով եմ ձեզ վտարանդի դարձնում, քանզի ես ստուգապես հաշիվ եմ տալու ձեզ համար կենդանի Աստծու առջև. որի պատճառով սուրբ հայրերի՝ վաղուց անտի դրոշմված կանոնը՝ դյուրալուր խոսքերով ձեզ եմ մատուցում. բայց նախ սա՛ իմացեք, որ քահանայության պատիվը չվստահվեց Հրեշտակներին, քանզի անմեղ են, այլ՝ մարդկանց, որպեսզի ինչպես որ մենք ենք մեղանչում և հույս ենք դնում Քրիստոսից թողություն ստանալու վրա, նույնպես և ձե՛զ տանք թողության ու ապաշխարության հույսը:

Եվ արդ, աղաչում եմ ձեզ բոլորիդ՝ համբերությամբ լսել ինձ:

Ահա բացվում է երկինքը, և Քրիստոս իջնելով՝ բազմում է սուրբ սեղանի վրա, և երկնքի ողջ զորքերը աներևութապես երկրի վրա են ծավալվում՝ սպասավորելու Աստծու Որդուն, և բոլորվում են սեղանի շուրջ. և Սուրբ Հոգին առատապես շնորհներ է բաշխում սրբությամբ մերձեցողներին:

Արդ, դուք՝ ի՞մ եղբայրներ, բազում զգուշությամբ ու երկյուղով ձեր սրտերում դրեք հետեւյալը՝ չնկատել միայն տեսանելի հացն ու գինին, այլ այն մեծ խորհուրդը, որ ծածկված է մարմնավոր աչքի տեսությունից, որ միայն հոգու աչքով է երևում նրանց, ովքեր սրբու-

կերակրի հոգին, եւ ուրախանայ ի ցնծութիւնս աստուածայինս. քանզի կարող է Աստուած ի միս հում եւ յարիւն դարձուցանել. որպէս եղեւ միում ի սրբոցն:

Այլ վասնզի զգալիքս ո՛չ կարեն տանիլ զմիս հում եւ զարիւն, վասն այնորիկ հացիւ եւ գինւով տպաւորեաց Աստուած. այլ մի՛ իբրեւ ի հաց հայիք, եւ մի՛ իբրեւ զգինի նկատէք. քանզի սա՛ է ճշմարիտ Մարմին եւ Արիւն Քրիստոսի. մի՛ սովորական ընդելութեամբ ոք հարեալ արհամարհանօք մերձեսցի ի դոյզն ինչ, զի հուր կիզող է այրիչ եւ սպառիչ մեղաւորաց. ուստի պարտ է նախ սրբիլ ի մեղաց ի ձեռն ապաշխարութեան. զի մի՛ յոլովութեամբ մեղացն կիզիցիմք ի հուրն. զի սպառին ոգիք այնոցիկ, որք ո՛չ նախ մեկնին ի մեղաց, այլ բեւեռեալ կան ի նոսա:

Եւ մի՛ դարձեալ անյուսաբար ոք հեռանայցէ, եւ զերկիւղ սնոտի ի մէջ բերեսցէ, զի ո՛չ է այն երկիւղ՝ այլ Աստուծոյ արհամարհանք. զի սա՛ է դուռն երկնից արքայութեան, եւ նոյն ինքն արքայութիւն, որ է Քրիստոս Որդի Աստուծոյ եւ Աստուած մեր. եւ մերձեցելոցն սրբութեամբ՝ զորդէգրութիւն անջինջ գրէ երկնաւորի Հօրն:

թյամբ փնտրում են այն, որից ճաշակելով՝
ուրախանում են աստվածային ցնծությամբ,
որովհետև Աստված այն կարող է վերածել հում
մսի և արյան, ինչպես եղավ սրբերից մեկի հետ:

Սակայն քանի որ մեր զգայարանները չեն
կարող տանել հում միսն ու արյունը, այդ
պատճառով Աստված հացով ու գինով տպավո-
րեց, սակայն մի նայեք որպես հացի, և ոչ էլ
որպես գինի նկատեք, քանզի սա է Աստծու
Որդու ճշմարիտ Մարմինն ու Արյունը. որևէ մեկն
արհամարհանքով, սովորական ընդունելությամբ
թող չմերձենա որպես մի ինչ-որ կերակրի,
որովհետև մեղավորներին՝ այրող ու սպառող
կիզիչ հուր է, ուստի նախ ապաշխարության
միջոցով պետք է սրբվել մեղքերից, որպեսզի
մեղքերի բազմությամբ չկիզվենք հրի մեջ.
որովհետև սպառվում են հոգիները նրանց,
ովքեր նախապես չեն բաժանվում մեղքերից, այլ
բևեռված են մնում նրանց վրա:

Եվ դարձյալ՝ թող ոչ ոք անհույս կերպով
չհեռանա և սնուտի երկյուղ առաջ չբերի,
որովհետև դա երկյուղ չէ, այլ արհամարհանք,
քանզի սա՛ է երկնքի արքայության դուռն ու
նույն ինքը արքայությունը, որ է Քրիստոս՝
Աստծու Որդին և մեր Աստվածը, և սրբությամբ
մերձեցողներին գրանցում է որպես երկնավոր
Հոր անջնջելի որդեգիրներ:

Այլ ի միտ առնուլ արժանի է, զի ամենայն որդի հարազատ զնմանութիւն կերպարանաց Հօրն քերէ յինքեան. եւ դու, յորժամ ասես՝ «Հա՛յր մեր, որ յերկինս», եւ զխնդրուածս մատուցանես, արժան է զնմանութիւն նորին ի քեզ բերել. զի լսելի լինիցի. ապա եթէ զնմանութիւն ո՛չ ունիցիս Երկնաւոր Հօրն կատարելոյ եւ բարերարի, ո՛չ լսէ նա քեզ եւ ո՛չ խոնարհի յաղաչանս քո. այլ լսէ քեզ Հայրն չարեաց, զորոյ կերպն գործոյն ունիս, որ ի սանդարամետսն է:

Արդ, լսելով զայս՝ ի բա՛ց փարատեցէք յանձանց ձերոց զչարութիւն եւ զամենայն խարդախութիւն. թողէ՛ք ի սրտէ իւրաքանչիւր ոք զյանցանս եղբօր ձերոյ, եւ զամենայն խէթ զոր ունիք առ միմեանս. զի եւ ձեզ գտեալ զողորմութիւն յերկնաւոր Հօրէն՝ արժանի լինիջիք զենմանս այսորիկ:

Ի բա՛ց մերժեցէք ի ձէնջ ամենեքեան զանհաւատութիւն, եւ զխիղճ բծաւորութեան եւ զթերահաւատութիւն, իրիք ի սոյնպիսեացն:

Սրբեցէ՛ք ի ձէնջ զնախանձ, զնենգութիւն, զչարութիւն, զկեղծաւորութիւն, զհպարտութիւն, զամբարտաւանութիւն, զամբարհաւաճութիւն, զմարդահաճութիւն, զհակառակութիւն, զոխս, զվաշխս, զտոկոսիս եւ զամենայն չարեաց արմատ՝ զարծաթասիրութիւնն եւ զագահութիւն. եւ զկանացի փաթեթանս, եւ զկախարդա-

Այլ պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր հարազատ որդի իր մեջ հոր կերպարանքի նմանությունն է կրում. և դու, երբ ասում ես՝ «Հա՛յր մեր, որ երկնքում ես», և խնդրանք ես մատուցում, պետք է նույն նմանությունը քո մեջ ունենաս, որպեսզի լսելի լինի. ապա եթե չունենաս բարերար ու մարդասեր երկնավոր Հոր նմանությունը, Նա չի լսի քեզ և չի խոնարհվի դեպի քո աղաչանքները, այլ քեզ կլսի նա, որի գործի կերպարանքն ունես, և որն անդունդներում է:

Արդ, այս լսելով՝ ձեր անձերից հեռացրե՛ք չարությունն ու ամեն տեսակի խարդախությունը. յուրաքանչյուրդ ի սրտե ներե՛ք ձեր եղբօր հանցանքներն ու ամեն տեսակի անհամաձայնություն, որ ունեք միմյանց հետ, որպեսզի և դուք թողություն գտնելով երկնավոր Հորից՝ արժանի լինեք այս գենմանը:

Ամենքդ հեռո՛ւ վանեցեք ձեզանից անհավատությունը, արատավոր խիղճն ու թերահավատությունը:

Սրբեցե՛ք ձեզանից նախանձը, նենգությունը, չարությունը, կեղծավորությունը, հպարտությունը, ամբարտավանությունը, սնապարծությունը, մարդահաճությունը, հակառակությունը, ոխը, վաշխառությունը, տոկոսատվությունը և բոլոր չարիքների արմատ՝ արծաթասիրությունը, ագահությունը, այլև կանացի դյութանքներն ու կախարդիչ հրա-

սար դեղատուութիւնս. եւ զամենայն բան չար եւ զթշնամութիւն. եւ զցաւս ցանկութեան. մանաւանդ՝ զտգեղն եւ զտխեղծ հայհոյիչ բանն ի բերանոյ ձերմէ, որով զմիմեանս նախատէք. եւ զանօրէն կռապաշտութիւն, եւ զանկարգ եւ զանառակ մոլորութիւնն. զորս ի յիշումն ածելն՝ ապականէ եւ գարշեցուցանէ զմիտս, նախ՝ զիւրն, եւ ապա՝ զլսողացն. քանզի յաւուրն դատաստանի՝ որդնալից լինին գարշելի բերանքն այնոցիկ՝ որք ո՛չ մեկնին ի նոցանէ. զի ասաց Տէր. «Որ ասէ ցեղբայրն իւր մորոս, պարտաւոր լիցի գեհեան հրոյ»: Արդ, պարտ է արմատախի՛լ առնել զնա ի մէնջ. մի՛ ոք շուն, մի՛ ոք պոռնիկ, մի՛ արուագէտ. մի՛ գող, մի՛ յափշտակող, մի՛ գէճ, մի՛ որովայնամոլ, մի՛ արքեցող, մի՛ չարակամ, մի՛ չարայոյզ, մի՛ սպանող, մի՛ խոռվարար, մի՛ անողորմ, մի՛ բանսարկու, մի՛ պիղծ, մի՛ թշնամանող. մի՛ երդմնահար, մի՛ ուխտադրուժ. մի՛ անօրէն, մի՛ անիրաւ. մի՛ բամբասող եւ մի՛ այլովք մեղօք. զի են մեղք որ մահու չափ են. զորս ո՛չ իսկ արժանի համարիմ յիշել ի տեղւոջս:

Եւ ի վերայ այսր ամենայնի մի՛ ոք հերձուածող, զայս ասելով պատուիրեմ՝ ամենեւին զհին մարդն ի բա՛ց ընկեցէք ամենայն չար գործովքն իւրովք:

պույրները. և ամեն տեսակի չարախոսությունները, թշնամությունը, ցանկության ցավերը, մանավանդ սրբեցեք ձեր բերանից տգեղ ու տիսեղծ հայհոյիչ խոսքերը, որով միմյանց եք նախատում, նաև անօրեն կռապաշտությունը և անկարգ ու անառակ մոլորությունը, որոնց հիշելը ապականում ու գարշեցնում է նախ՝ իր, ապա՝ լսողների միտքը, քանզի դատաստանի օրը որդնալից են լինելու գարշելի բերանները նրանց, ովքեր չեն բաժանվում դրանցից. որովհետև Տերն ասաց. «Նա, ով իր եղբորը հիմար է անվանում, դատապարտվելու է գեհենի հրին»: Արդ, պետք է մեզանից արմատախիլ անել այդպիսի չարիքները. թող ո՛չ ոք չլինի շուն, պոռնիկ, արվագետ, գող, հափշտակող, ցանկասեր, որովայնամոլ, հարբեցող, չարակամ, կռվարար, սպանող, խոռվարար, բարկացող, անողորմ, բանսարկու, պիղծ, թշնամացող, երդմնազանց, ուխտադրուժ, անօրեն, անիրավ, բամբասող և ուրիշ մեղքերով ծանրաբեռնված, որովհետև կան մեղքեր, որ մահվան հավասար են, որոնք այստեղ հիշելու իսկ արժանի չեմ համարում:

Եվ այս ասելով՝ պատվիրում եմ, որ հին մարդն ամբողջովին դեն նետեք իր բոլոր չար գործերի հետ միասին:

Այլ զգաստացեալք՝ զգեցարո՛ւք ամենեքեան վարս պարկեշտս, սուրբս, բարեխոհս, հեղս, քաղցունս, անոխակալս, խաղաղարարս. ողորմածս ի վերայ հիւանդաց եւ վշտացելոց. գթածս ի վերայ տնանկաց, աղքատաց եւ կարօտելոց. զարդարեալ ամենայն առաքինութեամբ՝ սիրով, հաւատով, յուսով. ունել զսէր կատարեալ առ Աստուած եւ առ մարդիկ. քանզի լրումն ամենայն առաքինութեան սէր է՝ ի սուրբ սրտէ եւ յանկեղծաւոր հաւատոց:

Պատուեցէ՛ք զհարս եւ զմարս ձեր. սիրեցէ՛ք զկանայս ձեր իբրեւ զանձինս ձեր. եւ դուք՝ կանայք, հնազա՞նդ լերուք արանց ձերոց իբրեւ տեառն. միաբա՞ն երկերուք յԱստուծոյ, պատուեցէ՛ք զօր միաշաբաթին:

Երիտասարդուք եւ կուսա՞նք՝ զսրբութիւն սիրեցէ՛ք. զի ընդունելով զսրբութիւնս զայս՝ լուսաւորեսջիք որպէս լուսափայլ հայելի, յորժամ նշոյլք արեգականն ճառագայթեն ի նա. եւ աճեցեալք սովաւ յառաքինութիւնս՝ կեցջիք եւ ո՛չ դատապարտեսջիք՝ ըստ առաքելոյն բանի. «Զի արդարեւ են մահտարաժամք եւ յոլով աշխատութիւնք անըմբերելի ցաւոց՝ ուրկութիւնք, եւ այլն ամենայն, յանարժան հաղորդութենէ լինի»:

Մի՛ կեղծաւորեալ ոք ի ներքս մտցէ՝ կարծելով յարտաքս կացելոցն, եթէ ի հաղորդելոցն

Այլ զգաստանալով՝ ամենքդ զգեստավորվե՛ք պարկեշտ, սուրբ, բարեմիտ, հեղ, քաղցր, անոխակալ, խաղաղարար վարքով. Հիվանդների ու վշտացածների նկատմամբ՝ ողորմած. տնանկների, աղքատների ու կարույալների հանդեպ՝ գթացող. զարդարված ամեն տեսակի արդարությամբ, սիրով, հավատով, հույսով. կատարյալ սեր ունենալով առ Աստված և դեպի մարդիկ. քանզի բոլոր արդարությունների լրումը սերն է՝ սուրբ սրտից և անկեղծ հավատքից բխած:

Պատվեցե՛ք ձեր հայրերին ու մայրերին. տղամարդիկ, սիրեցե՛ք ձեր կանանց՝ ձեր անձերի նման. և դուք՝ կանայք, հնազանդ եղեք ձեր ամուսիններին. ամենքդ երկյուղ ունեցեք Աստծուց, պատվեցե՛ք կիրակի օրը:

Երիտասարդնե՛ր և կույսե՛ր, սրբություն սիրեցեք, որպեսզի այս սրբությունն ընդունելով՝ լուսավորվեք ինչպես լուսափայլ հայելին, երբ արեգակի շողերը ճառագայթում են նրա վրա. և աճելով առաքինությունների մեջ՝ ապրեք արդարությամբ և չդատապարտվեք ըստ առաքյալի խոսքի. «Որովհետեւ, արդարև, մահտարաժամերն ու անտանելի ցավերի բազում հոգնությունները, բորոտություններն ու մնացած ամեն ինչ՝ անարժան հաղորդությունից են լինում»:

Որեէ մի կեղծավոր թող ներսում չմնա՝ կարծիք ստեղծելով դրսում կանգնածների մեջ,

իցէ. վասն զի երկմիտն ոչինչ ունի յԱստուծոյ. վասն զի Աստուած ո՛չ փորձի. մի՛ զմարդկային ամօթս պատկառիք, զի ոչ ինչ է այս իսկ ամօթ. այլ այն է մեծ ամօթ, որ ի տիեզերական հրապարակին է. զոր այժմ յինէն թագուցանես եւ ո՛չ խոստովանիս, եւ ո՛չ ապաշխարես. անդ՝ առաջի մեծի Դատաւորին հրապարակեալ բացայայտի. որ ո՛չ եւս կարես թագուցանել զգործս քո. քանզի հոգիդ քո՝ ինքնին լինի քեզ դատախազ:

Արդ, ահա ասացի ձեզ զամենայն ան-նախանձաբար. յայսմհետէ ես անպարտ եմ. արիւն ձեր ի գլուխս ձեր. քաւեալ եմ ես յարենէ ձերմէ. զի յիմ վերայ՝ այս եւեթ կայր:

Բայց գիտեմ ես՝ զի են ոմանք ի ձէնջ, որ արհամարհեն զասացելովքս. վասն որոյ վկայութիւն դնեմ ձեզ զբանս զայս՝ զոր խօսեցայ ընդ ձեզ այսօր ի վերայ բեմիս. յաւուրն դատաստանի առաջի բեմին Քրիստոսի՝ յանդիման կացուցանեմ ձեզ վկայութեամք սուրբ Աւետարանիս. ապա՝ յայնժամ ո՛չ եւս կարէ արհամարհել արհամարհողն. այլ կշտամբեալ պատուհասակօծ լինի եւ առաքի ի հուրն անշէջ:

Այժմ բանիս աւարտումն արարից. զի զամենայն ինչ որ վասն Խորհրդոյս էր, ասացաք սակաւուք ըստ պատշաճի իրին:

թե իբր հաղորդվողներից է, որովհետև երկմիտը Աստծուց ոչինչ չի ստանում, քանզի Աստված չի փորձվում. մարդկային ամոթը պատճառ մի՛ բերեք, որովհետև այս ամոթը ոչինչ է, այլ ա՛յն է մեծ ամոթ, որը տիեզերական հրապարակի վրա է, այն, որ այժմ թաքցնում ես ինձնից և չես խոստովանում ու ապաշխարում. այնտեղ՝ մեծ Դատավորի առջև հրապարակվելով՝ կբացահայտվի, և այլես չես կարող թաքցնել քո գործերը, որովհետև քո հոգին քեզ դատախազ կլինի:

Արդ, ահա այս բոլորն աննախանձաբար ասացի ձեզ. այսուհետև անպարտ եմ. ձեր արյունը՝ ձեր գլուխը, քավված եմ ես ձեր արյունից, որ մինչև հիմա կար ինձ վրա:

Սակայն գիտեմ, որ ձեր մեջ կան ոմանք, որ արհամարհում են ասածներս. ուստի ձեզ ի վկայություն եմ դնում այս խոսքերը, որոնք այսօր բեմի վրա խոսեցի ձեզ. դատաստանի օրը՝ Քրիստոսի ահավոր բեմի առջև, ձեզ դեմ-հանդիման կրերեմ Սուլքը Ավետարանի վկայությամբ. ապա այն ժամանակ այլես արհամարհողը չի կարող արհամարհել, այլ կշտամբվելով՝ պատուհասակոծ կլինի և կուղարկվի դեպի գեհեն՝ դեպի հուրն անշեց:

Այժմ խոսքիս ավարտն անեմ, որովհետև Խորհրդի մասին ամեն ինչ ասացի ձեզ՝ համառոտ ու պատշաճ կերպով:

Արդ, որք արժանաւորապէս հաղորդին՝
զարդարեալք գործովք բարեաց, ընդ Պետրոսի
եւ ընդ այլոց սրբոց առաքելոցն պատուեալ
պսակին ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. եւ որք
ապստամբութեամբ հաղորդին, կրկին ի խաչ
հանեն զՈրդին Աստուծոյ. եւ որք լրբենի երեսօք
եւ անարժանութեամբ հաղորդին, մասն եւ բաժին
զՅուդայի մատնչի եւ զխաչահանուացն ընկալ-
նուն. զօգուտն ձեր՝ դո՛ւք գիտէք:

Այլ Հոգին Սուրբ՝ որ սրբոցն է բնակարան եւ
աղբիւր է ամենայն բարեաց, մաքրեսցէ զՀոգիս
եւ զմարմինս ձեր, եւ զՀաղորդութիւն փրկական
խորհրդոյս, ի թողութիւն մեղաց արասցէ ձեզ:

Որում ընդ Հօր եւ ընդ Որդւոյ Միածնի
Յիսուսի Քրիստոսի՝ Տեառն մերոյ փա՛ռք
յաւիտեանս. ամէն:

Արդ, նրանք, ովքեր արժանաբար են հաղորդվում՝ զարդարված բարի գործերով, Պետրոսի և մյուս սուրբ առաքյալների հետ պսակվում են մեր Աստծուց՝ Քրիստոսից. իսկ ովքեր ըմբութությամբ են հաղորդվում, կրկին խաչ են հանում Աստծու Որդուն. և ովքեր լիրք երեսով ու անարժանությամբ են հաղորդվում՝ մատնիչ Հուդայի և խաչողների մասն ու բաժինն են ստանում։ Զեր օգուտը դո՛ւք գիտեք։

Եվ Սուրբ Հոգին, որ սրբերի բնակարան է և ամենայն բարիքի աղբյուր, թող մաքրի ձեր Հոգիներն ու մարմինները, և փրկական խորհրդի Հաղորդությունը թող ձեզ համար մեղքերի թողության վերածի։

Որին Հոր և մեր Տիրոջ՝ Միածին Որդի Հիսուս Քրիստոսի հետ փա՛ռք հավիայանս. ամեն։

Աշխարհաբարի Վերածեց՝
Սիրայել վարդապետ Աջապահյանը։
«Եջմիածին» ամսագլից 1994 թ. (Բ-Գ)

Հայաստանյայց Առաքելական Սուրբ
Եկեղեցի

Արարատյան Հայրապետական Թեմ

ԱՊԱՇԽԱՐՈՂՆԵՐԻ
ԱՐՁԱԿՄԱՆ ԿԱՐԳ

ի Քրիստոս Անջած Եղբորս՝
Մելս-Մեսրոպ Միհնապանի Բիշատակին.
Ողորմի Աստված

Ռովանավոր՝ Ա. Մ.

Կազմեց և սրբագրեց՝ Էլմիրա Միհնասյան
Խմբագրեց՝ Մարթա Արաբյան
Նովագրեց՝ Ժասմինա Մեհրաբյան
Համակարգչային օպերատորներ՝
Դավիթ Միհնասյան, Հասմիկ Սահակյան
Համակարգչային ձևավորումը՝
Լեվոն Խորայելյան, Նունե Մարգարյան
Շապիկի նկարը՝ Արման Վյշագյան

